

Ἡ ἑκταμένη





ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆԻ



Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ԳԵՈՐԳԱՅ Զ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄՆԵԱՅՆ ՀԱՅՈՅ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կռիակը Դպրոցասեր Հայ Տիկեանց	3
Միտայան, Երանց վարժարանի 75-ամյա հոբելյանի կազմակերպիչ կենտրոնական հանձնաժողովին և Սփյուռքի հայ ժողովրդին	15
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ, Ամենայն Հայոց Հայրապետությունը և Երա քեմերը	10
ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Սրբոց քաղմանչաց տոներ	13
ԽԱՂԱՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՐԻՄ	16
Հենրիկ ՍԱՐԿԱՎԱԳ, Մեր ամառային արձակուրդները	18
ՇՄԱՎՈՆ ՇԱՀԱՊՈՒՆԻ, Ջերմուկն անցյալում և այժմ	23
ԿԱՐՊԻՔՆԵՐ ՋԵՐՄՈՒԿԻ ՄԱՍԻՆ	26
ԵՂՎԱՐԴ, Սևան	28
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԻՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ, Երևանյան տպավորություններ	34
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ	36
ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ, Կոմիտասի ստեղծագործության աղբյուրը և անոր հայրենասիրությունը	41
Ամենայն Հայոց Հայրապետության ղիվանի հազորդուժը Կոմիտասի արխիվի նոր էջերի ստացման և համապատասխան հաստատությանց հանձնելու մասին	44
ՎԵՎՈՒ ՔԱՀԱՆԱ ԱԹԱՆԱՍՅԱՆ, Իմ հուշերս Խաչատուր Արովյանի մասին	49
ՔԱՋԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԵՈՐԳՅԱՆ, Սայաթ-Նովայի բանաստեղծական արվեստը	52
Ռուսինաճայ քեմական խորհրդի հավատարմագիրը Ամենայն Հայոց Հայրապետին	54
Կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը Սոֆիայում	55
Սրուսադեմի հայոց Պատրիարքական տեղապանը լանջախաչ է տալիս հարեչ եպիսկոպոսին	56
ՊՐՈՑ.—ԴՈԿՏ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Սարգիս Փիլիսոփայի չափածո տոմարը	63
Դիտական և զեղարվեստական նոր նրատարակություններ	



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱՄԻՆ

«ԷՋՄԻԱՄԻՆ» ՍՍՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР. Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“
Redaction of the magazine „Etchmiadzin“, Etchmiadzin, Armenia, USSR



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՐ
ԴՊՐՈՑԱՍԵՐ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ,
ՆՐԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԴՏ-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ
ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

ԳԵՌԳ ԵԱՌԱՑ ՅԵՍՈՒՍԻ ԴԻԴՏԱՍԻ,
ՈՂՈՐԴՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ ԵՒ ԿԱՄՐՔՆ ԱԶԳՈՍ
ԵՊԻՍԿՈՓՈՍԱԳԵՏ ԵՒ ԿԱՐՈՂՈՒՄՈՍ ԱՄԵՆԱԹՆ ՀԱՅՈՒԷ,
ԵԱՅՐԱՊԵՏՆ ՊԱՏԲԱՐԻ ՀԱՄԱԶԳԱԿՈՆ
ՆԱԽԱՄԵՅՆԱՐ ԱՐՈՐՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՄԱՅՐ ԵԿԻՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱՐՈՒՂԱԿԻ ԷԶՄԵՆԵՒԻ

ԴՊՐՈՑԱՍԵՐ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՊԱՏՎԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՅԱ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԴՏ-ԱՄՅԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԱՐԺԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԵՎ ՄԵՐ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՎԱԿԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ՝ ՀԱՅԱՍ-
ՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՐԱԶՄԱԶԱՐԶԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ՝ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ
ԳԱԼԻՑ ԵՎ ՆՈՐԱ ԳԱԼԱԿԱԼԻՑ՝ ՀԱՅՐԱԿԱՆ ՄԻՐՈ ՈՂՋՈՒՅՆ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Կի՛նք, ընդհանրապես, և հայ չի՛նք, մասնավորապես, հայտե՛ի է ի՛ր կրո-
նափրությամբ: Քրիստոնեական կրոնի արշալույսին յաղաքե՛ր կանայ՛ է՛ին,
որ հավատով գորացած ռենեկյուղ և կան, իրենց սիրած ու պաշտած Վարդա-
պետի՛ն պատանեցի՛ն, նորա մարմինը րանկարժե՛ն ու անուշահոտ յուզերով
սձեցի՛ն ու դրի՛ն գրեզման: Եվ այս՝ ա՛յն ժամանակ, երբ Պետրոս առաքյալը
Բանանտյապետի աղախնի առաջ մեղկացավ, քալացավ և ուրացավ ի՛ր Վար-
դապետի՛ն՝ Հիսուսի՛ն, ա՛յն ժամանակ, երբ Թովմաս առաքյալը, քերականա-
ստությամբ բռնված, ի՛ր Վարդապետի կողե՛րը շռչալի՛լ ցանկացավ, որ հա-
վատա:

Հայ կի՛նե՛ է՛ր, որ հինգերորդ դարում, Վարդանանց պատերազմի օրե-
րի՛ն՝ կրոնի, Ազգի և Հայրենի՛քի ազատության և անկախության համար մղվող
պատերազմում, ամեն առաապան՛ի կրելով, կանգնեց ի՛ր ամուսնու կազմի՛ն ի
խախտույս՝ և անձնվիրաբար օգնեց պատերազմող մարտիկներին՝ մարտիրո-
սացավ ու անմահացավ:

Հայ կինը՝ հայի տառապալից տեական պատմության ընթացքում, ամեն շարժաչ կյանք տանելով՝ իր ամուսնու անբաժան ընկերն է հանդիսացել, իր ընտանիքի պատիվն է պահել սրբությամբ, իր զավակների դաստիարակն է եղել՝ նոցա հայ լեզուն սովորեցրել, հայ սովորույթներն ուսուցել, ընտանեկան տնտեսության վարժեցրել, որով ցայսօր հայ ընտանիքը անձույլ է մնացել և որի հետևանքով հայ ժողովրդի ազգային անկախ գոյությունն է պահպանվել:

Եվ, վերջապես, կինը, որոնց բվում նաև հայ կինը, իր սրբակրոն կյանքով և մտքոր հավատով՝ սրբացել է. կուսանաց տոները՝ դրա լավագույն ապացույցն է:

Վերահիշյալ փաստերը ցույց են տալիս, որ հայ կինը ազգապահպանության կարևոր գործոն է հանդիսացել մեր պատմական կյանքում:

Ազգապահպանության կարևորությունը այսօր ավելի է զգալի, քան անցյալում, հայ ժողովրդի ծովամեծ ու անէացման վտանգը ներկա խոշոր և բարձր կալուստրական միջավայրերում՝ շատ ավելի ակնբախ է, քան անցյալում: Ուստի և այսօր, ավելի քան անցյալում, պարտականություն ունենք՝ պահպանելով անցյալի մշակած միջոցները՝ նորերի մասին խորհելու:

Եթե անցյալում հայ կինը ձգել է իր արժեքավոր լուծման ազգապահպանության շափազանց կարևոր գանձարանը՝ պահպանելով իր ընտանիքի պատիվն ու սրբությունը, լինելով իր ամուսնու հավատարիմ աշխատակից ընկեր, հենարան հանդիսանալով ընտանեկան իմաստուն տնտեսության և պահպանելով մայրենի լեզուն ու եկեղեցական-ազգային սրբությունները, այսօր անհրաժեշտություն է անցյալի միջոցների վերա հավելելու հայ մշակույթի զարգացումը լայն իմաստով ըմբռնած, և նորա լայն ծավալումը: Մշակույթի զարգացման պարտականությունը Սփյուռքում ծանրանում է որոշ մարմինների և անհատ մասնագետների վերա, իսկ Մայրենի Երկրում՝ Հայրենի Պետության վերա:

Դպրոցատեղ Տիկնանց Միության մեծում է բաժին մշակույթի ծավալման բողոք պարտականությունը, որին նա պատվով նվիրվել է 75 տարիներ և փառք վաստակել: Հայ մատաղ սերունդին մայրենի լեզու ուսուցանել, նորա զգայուն սրտի մեջ կրոնական սուրբ զգացմունք հուզել և կրոնի վսեմ բարոյական գաղափարների հատկյուններ սերմել, հայ պատմության ուսուցմամբ անցյալ ու ներկա հայի հերոսական պայքարող ռզի շնչել՝ նշանակում է մարգել էակ, որ ընդունակ է սիրելու իր մայրենի եկեղեցին, իր Ազգը, իր Հայրենիքն ու Հայրենի Պետությունը, ընդունակ է պայքարելու Ազգի և Հայրենիքի ազատության և անկախության համար: Միայն այսպիսի մայրեր կարող են բարոյական բարձր գաղափարներով սնված հայ ընտանիք ստեղծել, որով և Ազգի օտարացման, ծովամեծ և անէացման դեմ պայքարել՝ շինական անանցանելի պարիսպ կանգնելով:

Իմ սիրելի հայ ժողովուրդ, Հորեյանական հանձնաժողովը որոշել է առնել այս ազգագուտ հաստատության 75-ամյա հոբելյանը 1952 և 1953 թվականների ընթացքում. տոնեցե՛ք ամենայն սիրով և խանդավառությամբ՝ ի գնահատություն նորա անցյալի շնորհակալ աշխատանքի և ի խախույս՝ նորա ապագա գործունեության:

Դպրոցատեղ Տիկնանց Միությունը արժանի և կարոտ է Ձեր սիրույն և խախուսանքին, որպեսզի բաջալերվի և նոր եռանդով շարունակի իր ազգույն գործունեությունը:

Դպրոցասեր Տիկնանց Միությունը արժանի և կարգաւ է նաեւ, որ վայելէ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հովանավորությունն ու աշակցությունը ավելի, քան ցայսօր, և արժանանա մեր բարերարների ավելի մեծ ուշադրության, որ հնարավորություն ունենա ընդլայնելու իր այնքա՛ն կարևոր գործունեությունը հայ կյանքի համար:

Իսկ Մենք ամենայն սիրով և հանությամբ մաղթում ենք մեր երկնավոր Հորը և աղերսում, որ Իր հովանի բազուկը պարզե Միությանդ վերա, գորացնե Ձեր հոանդն ու եվիրվածությունը, անեցնե Ընկերությանդ անդամների բիվը, ներշնչե մեր բարերարներին բազմա հայացք ունենալ հանդեպ Ձեր խոջոր ազգոգութ ձեռնարկին ու հաջողությամբ պսակե Ձեր ազգոգութ գործունեությունը:

Անձաթ և ռսկի ոչ ունիմ, քայց զոր ունիմս տաց Քեզ: Հոբեյանիդ առքիվ ընդունի՛ր Մեր հայրապետական գնահատական-բաշալիրական կոնդակը և Մեր բարեկամությունները:

Օրհնում ենք նաև Հոբեյանական հանձնաժողովիդ անդամներին և մալքում Տիրոջը, որ արեջառություն պարգևե և հաջողությամբ պսակե Ձեր բարի ձեռնարկը:

Աղերսանոք դիմում ենք Ամենակալին, որ Ափյուռփի Մեր սիրեցյալ հոտին պարգևե խոհեմություն և շրջահայեցողություն, քայց և աներկյուղ պարտանաշություն՝ հանդեպ իր մայրենի եկեղեցուն և հարազատ Հայրենիքին:

Ողջ լերուք, գորացեալ ի Հոգւոյն Սրբոյ և օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ. ամէն:

Գեորգ Զ

ՄԱՅՐԱՊԵՏՆ ԳԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՒՑ

Ցուա կոնդակս ի 28-է օգոստոսի 1952 ամի Ցեառն
և ի տումարիս Հայոց Ռեթ,
յուրիտորցում ամի Հայրապետութեան Մերոյ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի:





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԷ ԵՎ ՆՐԱ ՔԵՄԵՐԷ



այրենասեր պատմիչ Առաքել Դավթիժեցու արտահայտած այն միտքը, թե շիվերայ աջոյն և էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան, հայ հավատացյալ ժողովրդի սրտագին ու խորը հավատքն է նշել զարեւրարունակ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Լուսավորչի անունով և էջմիածնի գաղափարով է ապրել և ստեղծագործել իր գոյության առաջին իսկ օրերից: 1.600 տարի շարունակ այդ զգացմունքը վառ է եղել հայ հավատացյալ ժողովրդի հոգում: Մեր ժողովրդի պատմական անցյալում չկան հայ սրտերն իրար միացնող ուրիշ այնպիսի ժողովրդականացած սրբություններ, ինչպէս Լուսավորչին է ու էջմիածինը: Այս երկու պայծառ անունները խորհրդանշան են հանգիսացել հայ ժողովրդի ազգային-հոգեվար միասնության, կրօնական ինքնագիտակցության, ազգային-եկեղեցական արժանապատվության:

Լուսավորչին ու էջմիածինը իշխել են մեր եկեղեցական ողջ մատենագրության վրա: «Մի է հայրն մեր, մի և միակօն ազգն Հայոց», — գրում է Հովհանն Երզնկացին: Լուսավորչի Աթի զորությունն է, որ էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության Աթոռի հետ միացնում է քոյր հայերին՝ եկեղեցական մեր քոյր ընտերին, կազմելով հոգեւոր մի ազգ՝ «մի և միակօն»:

«Ահա ես և մանկունք իմ, գոր ետ ինձ Աստուծա՛ն»:

Լուսավորչի Աթն ու էջմիածնի կարողիկեն իւրօրինակ, կորովի, հույսի ու հաղթանակի

անսպաս ապրումն են հանգիսացել մեր ժողովրդի համար ամեն ահգամ, երբ օտարը փորձել է ձեռք բարձրացնել մեր հայրենի սրբությունների, մեր երկրի ազատության վրա, ամեն ահգամ, երբ մեր հանճարեղ, աշխատավոր ժողովուրդը, մեծ սխաւգործությամբ, հոյակապ պատմական կորողներ, զիր ու գրականություն, գեղարվեստ ու կուլտուրա է զարգացրել: Ո՛չ մի ֆրիստոնյա ժողովրդի կյանքում ու պատմության մէջ եկեղեցին այնքան քախտօրոյ ու պատմական դեր չի խաղացել, որքան Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հայ ժողովրդի կյանքում, նրա պատմության ողջ ընթացքում:

Էջմիածինը դարավոր ու պատմական կենտրոնն է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գլխաւոր իշխանությունը ներկայացնում է Ամենայն Հայոց Հայրապետությունը, իբր նախամեծար Արարատյան համազգային Մայր Աթոռ:

Մեծ և պատասխանատու է եղել Ամենայն Հայոց Հայրապետության և նրան ենթակա ընտրի դերը հայ ժողովրդի կյանքում: Հայ պետականության քայքայումից և անկումից հետո, Հայաստանյայց Եկեղեցին, իր հոգեվար մեծ առաքելությունից բացի, եղել է այն միակ հանգրվանը, խաղաղության նստահանգիսար, որիւ ապավինել է մեր ժողովուրդը, նրանով խրախուսվել, ապրել, պայքարել:

Հայաստանյայց Եկեղեցին չի սահմանափակվել բացառապէս իր հոգևոր կոչման ասպարեզով: Նա իրադարձել է ազգային կյանքի զանազան գործունէություններ, մի-

բաժանել է ժողովրդի հասարակական, դաս-տիարակչական, բարեգործական և կուլ-տուրական խնդիրներին, մասնակցել է հայ ազատագրական շարժումներին և այլն: Ամենայն Հայոց Հայրապետը ոչ միայն կոռուպցիոն է հանդիսացել յայն ժամանակի առաջին, այլև ազգապետ:

Հայ ժողովուրդը, բաղաժանանակալան անկախութունը վերագտնելուց հետո, երբ ունեցավ իր պետականությունը՝ հանձին Սովետական Հայաստանի բարեկամ կառավարության. Ամենայն Հայոց Հայրապետությունն անցալի ծանր իրադրությունների բեկադրանքով իր վրա վերցրած բաղաժանակալան, կուլտուրա-կալան և հասարակական ալլեալլ պարտականությունները տվեց իր իսկական տիրոջը՝ հայրենի բաղաժանակալան իշխանության: Այդ պարտականությունների բեռնաբալիումից հետո, սակալան, Ամենայն Հայոց Հայրապետությունը ամենեկին չի կաղապարվել և չի կաղապարվի կոռնական նեղ շրջանակներում: Այսպես, նա չի կարող անտարբեր գտնվել հայ ժողովրդի Արեւմտյան Հայաստանի հողերի համար եղած պահանջների եկատմամբ, նա չի կարող չգրադվել առտա-սահմանում ցրված մոտ մեկ ու կես միլիոն հայության հակատագրով և թույլ տալ, որ հայրենասեր ալլ հատվածը ծուլման և ե-րարկվի և ոչնչանա, նա չի կարող թույլ տալ, որ առտասահմանի հայ համայնեներ խաղալիք դառնան բաղաժանակալան անպատաս-խանատու կուսակցությունների ձեռնում և ազգալին նոր ողբերգության դուր բազ անեն: Այսօր Հայաստանալլալ Առաքելական Ե-կեղեցին, Ամենայն Հայոց Հայրապետության գլխավորությամբ և բեմերի անմիջական գործակցությամբ, ավելի մեծ առաքելություն ունի կատարելիք հայ ժողովրդի կյանքում, բան երբեք:

Ամենայն Հայոց Հայրապետությունն ու-նա եկեղեցական բեմերը կազմում են մի-ազանական անհակտելի միասնություն: Մառն առմատով և ծառ, տունը հիմամբ և տուն: Գառն և եղել և տխուր նակատագիրը ալան բեմերի, որոնք կտրվել են էջմիածնից և առնավետ կուրել հայ ժողովրդի համար: Լեհահայոց տխուր օրենակը մեռ առգին և:

Հայաստանալլալ Առաքելական Սուրբ եկե-ղեցին, Ամենայն Հայոց Հայրապետության ղեկավարությամբ և ամենօրալ հակուր-դիկամբ, պաշտպան է կանգնել հայ ժողովրդի առմեններին և իրավուններին:

էջմիածնի բեմերը, մեծ ու վոռե հա-մայնեներով, ցրված են ողջ Սփյուռնում: Այդ համայնեներից յուրաքանչյուրը, հեռա-վորությամբ, օտար ազդեցությունների և ալլ ալլասերոյ ազդակների պատճառով, կարող է տկարամալ և իսպառ կուրել հայության

համար: Հայրենի երկրից հեռու, էջմիածնի անմիջական, ամենօրալ ղեկավարությունից հեռու, նառն առտիրհանաբար կարող են խորբանալ, մոռանալ հայրենի ալլանդները, կորցնել ազգալին ողին: Օտար երկիրը, օ-տարի կշակույրը ալլասերում են հայ գա-ղալներին, յուլալանում նառն: Երե կա մի ուծ, որ ծամանակալալալալալ պահպանում է հայ ժողովրդի ալլ բեկորները, ալլ Հայրե-նիի գաղապարն է, իսկ դրա շեշտողն ու պահպանողը հանդիսանում է մեռ ազգալին եկեղեցին մեռ բեմերում: Մեռ եկեղեցական-ները և մտալորականները համարանակ պի-տի հանդես գան հայրենասիրական իրենց և-յուրներով: Ըստ որում, Հայրենիի մասին խոսելիս ալլալ չեն մանալալալալալ և բեղ-հանուր խոսքեր, ալլ ալլալ և շեշտված և չեմ խոսել Սովետական մեռ ծաղկող Հա-յաստանի մասին, որի 32 տարիները մեռ ղառմության ոսկեդարն են կազմում: Պիտի միշտ հիշել հայրենասեր Հայրապետի դա-սական հետեալ խոսքերը. «Հայր բազի Սո-վետական Հայաստանից չունի ալլ Հայրե-նի: Հայր Հայաստանից դուրս չունի ալլ հաստատուն կովան, բալլ երե Մայր Հայ-րենիքը, Հայ եկեղեցին և նառն գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ Ա. էջ-միածնի Հայրապետական Արքեպիս:

Ապրում ենք միջազգալին բաղաժանակալան բարդ ու յարված իրադրության մեջ: Առանձ-նալան վալիոն և խոզվահույլ ծամանակ-ներում են ապրում մեռ առտասահմանալան բեմերը: Օրերը ծանր են և հոյ բաղաժանակալան անակնկալներով: Հարկ է հանդես բերել հո-գու առիթություն, սկզբունալանություն, բա-ղաժանակալան ղգոնություն, բիստոռնակալան առնամտություն, շրջահալլեցություն: Թեմե-րի պարտականությունն է վառ պահել հայ հավատալլալներին ստում հայրենասիրու-րյան, էջմիածնասիրության բոզալալալ ղգալ-մունքը: Ամեն մի եկեղեցական բե ալլալա-հակալան անհատ պարտալոր է միշտ հիշել Ամենայն Հայոց հայրենասեր Հայրապետի խառնները. «Մայր Արքող հավատալլալալ է, որ անցալի դառն վործություններից ի-մաստնալլալ հայ ժողովուրդը, յունալոր ոս-պե ապուրի համար երբեք անուրդի չի հա-նի իր ազգալին-կոռնական ալլալություն սրբազան իրավունքը:

Առտասահմանի մեռ բեմերի խնդիրն է՝ մեռեալան իրենց խնամքին հանձնված հայ ժողովրդի ազգալին-եկեղեցական սրբազան միասնության, ազգալին-կոռնական դարա-վոր ուլալի ու հոգեռ դալինի հիմները վորող ալլասերվածներին:

Այսօր ավելի բան մի ալլ ծամանակալ. ալլալ է հետակ ու վեռակալ հեշի Հայաս-

տանայաց Առաքելական եկեղեցու միասնական ձայնը, հայ ժողովրդի, Հայ եկեղեցու երեքին ու արտաքին բնամիների դեմ, հօգուտ հայ ժողովրդի կենսական շահերին: Այսօր ավելի քան մի այլ ժամանակ պետք է կառավարված դրսևորվի Հայաստանյայց Առաքելական եկեղեցու, նրա թեմերի կամփի, գործողությունների, կարգապահության միասնությունը: Մեր ԹԵՄԵՐԻ ՀԱՄԱՐ ԶԿԱՆ ԵՎ ԶԵՆ ԿԱՐՈՂ ԼՆԵՆ ԱՎԵԼԻ ՐԱՐՁ՝ ՇԱՀԵՐ, ՔԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏԱՆ ՇԱՀԵՐԸ: Այս պահանջը բեկադրված է հայ ժողովրդի և եկեղեցու կենսական շահերով:

Մեր թեմերը, իրենց թեմակալ առաջնորդներով, իրենց թեմական խորհուրդներով, հավատացյալների բազմությամբ, հայրենասեր են և հնազանդ զավակները Մայր Աթոռի, նրանց սերն ու հաղթանքը էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության հանդեպ անկեղծ և օրդիական են:

Սակայն, զժրախտաբար այսօր էլ, կան որոշ թերություններ, եկեղեցական կարգապահության որոշ խախտումներ: Կան նաև եկեղեցականներ, որոնք պատշաճ բժախնդրություն չեն ցուցաբերում էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության գերագահ դիրքի բարձրության վրա պահելու համար:

Այսպես, օրինակ, Հյուսիսային Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրան արհեստականորեն ներսռյալներ, ամերիկամայ ազգային-եկեղեցական սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելով, առաջարկում է՝ Հայրապետության գերագույն իշխանության ներքո բառերի փոխարեն մտցնել Հայրապետական հոգևոր և եկեղեցական-կրոնական իշխանության ներքո բառերը: Այս առաջարկով, Ամենայն Հայոց Հայրապետության գերիշխանությունը վերածվում է մի հասարակ վանահայրության, և ժխտվում է Ամենայն Հայոց Հայրապետության մեծ դերն ու նշանակությունը, իբր գերագույն իշխանությունը Հայաստանյայց Առաքելական եկեղեցու նվիրապետական, վարչական, դոգմատիկ հարցերում:

Տիրան սրբազանը թույլ է տվել կարգապահության մի այլ խախտում ևս—առանց վեհափառ Հայրապետի համաձայնությունը ստանալու, իրավունք է համարել իրեն մասնակցելու Շվեդիայի Լուեռ ֆաղաբում գումարված եկեղեցիների համաշխարհային խորհրդին «իբրև մասնավոր խորհրդական», մոռանալով, որ հա մասնավոր անձն չէ, այլ Հայոց եկեղեցու եպիսկոպոս, իսկ Հայ եկեղեցու մասնակցել-չմասնակցելու իրավունքը վերապահված է ազգիս Հայրապետին:

Պետք է ցավով արտի արձանագրել, որ վերջերս կարգապահության խախտման այդպիսի մի փաստ տեղի է ունեցել և Խրանում: Թեհրանի ինֆեակոչ քեմական խորհրդի նախաձեռնությամբ վերջերս հրավիրվել է Խրանի երեք թեմերի խորհրդակցություն՝ թեմերը միացնելու և մի ամբողջական թեմ կազմելու դիտավորությամբ (1), մի ձեռնարկություն, որ ճախ չի բխում մեր եկեղեցական ընդհանուր շահերից և, հավանական է, արդյունք է օտարի բեկադրության և ապա՝ այդպիսի պատասխանատու ձեռնարկը կարող է առաջադրվել միայն ազգընտիր Հայրապետի կողմից, որն այժմ ցանկանում է բանակցել Խրանի կառավարության հետ սկզբունքային նշանակություն ունեցող որոշ հարցեր լուծելու հսկմամբ:

Թեհրանի նույն ինֆեակոչ խորհուրդը, որ կազմված է բացառապես աշխարհականներից, այնքան է առաջացել անկարգապահության մեջ, որ իրավունք է համարել Թեհրանի ֆահանգներից մեկին բանադրել: Այս ապօրինի այնպիսի մի գործունեություն է, որ իր նախընթացը չունի:

Ժամանակն է, որ մեր բոլոր եկեղեցական թեմերն ունենան մի ընդհանուր ազգային-եկեղեցական հայրապետաճաստատ կանոնադրություն, խուսափելու համար բազմաձևություններից: «Ի Սիօն է ելցեն օրէնքս» (Եսայի, Բ 3): Այդ ուղղությամբ, Ամենայն Հայոց Հայրապետի անմիջական ղեկավարությամբ, այժմ պատշաճ աշխատանք տարվում է:

Էջմիածնական թեմերի ամենաճիմնական ու առաջնահերթ խնդիրն է հավատարիմ մնալ մեր նախնայաց արյունով սրբազորված ավանդներին, պահել ու պահպանել Հայաստանյայց Առաքելական եկեղեցու «վեհի խորհուրդներն ու գերիշխանությունը արտաքին ու ներքին ամեն մի ոտնձգությունից».— ինչպես պատգամում է հայրենասեր, մեծագործ Հայրապետը:

Այսօր, մանավանդ արտասահմանյան մեր թեմերում, հարկ է իր կոչման, պատմական նշանակության բարձրագույն կետին վրա պահել Ամենայն Հայոց Հայրապետության դերն ու նշանակությունը: Էջմիածնի հեղինակությամբ դեմ առնված ամեն մի դիտումնավոր քայլ ուղղակի հարված է հայ ժողովրդի արտի դեմ, Հայ եկեղեցու միասնության դեմ:

Ամենայն Հայոց Հայրապետության նկատմամբ հարկ է լինել պարտաճանաչ, ազնիվ, նշմարիտ, տչի լույսի պես պահել ու պահպանել Մայր Աթոռի ընդհանրական ու նախաձեռնող իրավագործությունը, բարձրացնել նրա առաջավոր ղեկավար դերը բոլոր ազգային-եկեղեցական հարցերը բնեկիս, և

անշեղորհն կիրառել էջմիածնի կարգադրությունները, ըստ ազգային-եկեղեցական սահմանադրության, և ամեն օր ավելի սերտացնել ու ամրապնդել քեմերի և Մայր Աթոռի միջև կապը:

Ամենայն Հայոց Հայրապետությունն իր սղջ պատմության ընթացքում ղեկավարվել է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու մյուս նվիրապետական Աթոռների, քեմերի նկատմամբ, բրիտանական եղբայրության և լայնախոհության, սիրո մեծ սկզբունքներով: Կրոնական բռնապետությունը խորք է եղել էջմիածնի գահակալներին: «Մի՛ իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հոգի» (Պետրոս, Ա Կաթող., Ե 3), «Մի՛ գահասիրութեան և բարձրայնութեան պատճառս ի ձեզ ունիցէք» (Մարգիս Շնորհալի):

Որ չափով առ հայ ժողովուրդը իր մասնակցությունն է ունենում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության գործում, այդ չափով էլ Ամենայն Հայոց Հայրապետությունը հանդիսանում է մեր եկեղեցու տեր, ավանդական ամենաբարձր այն հաստատությանը, որից բխում են մեր եկեղեցու նվիրապետական, դավանական, վարչական կարգերն ու կանոնները, եկեղեցու և ժողովրդի իրավունքի սահմանները:

Մայր Աթոռի ազգային-եկեղեցական իմաստուն բազմականության անշեղ կենսագործումով միայն կարելի է ապահովել ցանկալի միասնությունը: Ահա քեմերի ինչպիսիք էլ ավելի պետք է ուժեղացնել Մայր Աթոռի և նվիրապետական մյուս Աթոռների, քեմերի, քեմական խորհուրդների զբաղմունքները:

Ահա այսպիսի լուրջ խնդիրներ են դրված Ամենայն Հայոց Հայրապետի կողմից մեր քեմերի առաջ: Այդ խնդիրներն շրջանակները լայն են և դառն իրական են և այժմեական, որքան և հրատապ: Այդ խնդիրները շոշափում են Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հետագա զարգացման, զորացման կենսական հարցերը:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցում չի եղել և չի կարող լինել երկու գլուխ, երկու ղեկավարություն, երկու կարգադրություն. մի է և Առաքելական, Ընդհանրական Հայաստանյայց Սուրբ եկեղեցին: Եկեղեցական կարգապահության կապիտ խախտումներ մեծ շարիք են հանդիսանում եկեղեցու միասնության ճամար: Հիմնովին սխալ է և ազգովին վտանգավոր այն միտքը, ըստ որի Ամենայն Հայոց Հայրապետությանը վերապահվում է լոկ բարոյական, հոգեկոհ իրավասություն քեմերի վրա: Դրանով ժխտվում է Մայր Աթոռի ո՛չ միայն պատմական դերն ու ճանաչությունը, այլ նաև նրա գոյությունը:

Էջմիածնից՝ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու դարավոր ու պատմական կենտրոնից, քեկուզ «ի վարչականս եղած ամենաբույլ փորձերն անգամ բաժանման՝ հակառակորդական են եղել հայ ժողովրդական հոծ զանգվածներին համար:

«Հայ ազգային եկեղեցու դարավոր անցյալը ճշմարտապատում վկայում է, որ վաղ քե ուղ անջատվածներին սպասում է դավաճափություն և ազգային դիմադրկման անփառունակ վախճանը»:

Այս է պատմության դառն փորձը:

«Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ»:

Այլ կերպ մտածողները հայ ժողովրդի ներքին քե արտաքին թշնամիների ջրաղացին տուտ ջուր են մատակարարում:

Մեր քեմերը, ըստ ազգային-եկեղեցական սահմանադրության, ամենից առաջ, Մայր Աթոռի օրինական ներկայացուցիչներն են: «Թեմակալ իշխանությունները ոչ միայն ղեկավարներ են տեղական մասնավոր համայնքների, այլև համաձայն եկեղեցական կրոնական իրավունքների, օրինական ներկայացուցիչներն են Մայր Աթոռին»:

Ահա այս է լինելու միակ օրինական, արդար և իմաստուն վարագիծը մեր քեմերի, երե ուզում ենք կյանքում հաստատուն պանել ցանկալի ազգային-եկեղեցական միասնությունը:





Ք Ա Ր Ո Ջ

ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՍՐՐՈՑ ԹԱՐԳՄԱՆՁԱՅ ՏՈՒՆԷ

(Խոսված Եւրոպաց քաղաքացւոցն մերոց Սահակայ
Լ. Մեսրոպայն անհին, Օշականի Ս. Մեսրոպի ան-
վան եկեղեցում, հուլիսի 3-ին):

-Ուր՝ զաշխարհքին տեօրեաբար զիմաստս ԱՆԵՂԻՆ,
Հաստատելով յերկրի գգբը կենցառին,
Հովանի զնոս հոր Իսրայելի...):

ՆԱՐԱԿԱՆ



որից ենք հաժարվել այսօր, իմ
հաժարատալ ծղրայրենք և քույ-
րենք, այս պատմական ու նվիրա-
կան եկեղեցու սուրբ կամարների
տակ, ողբկոչելու համար մի անգամ ևս ան-
մահ հիշատակը մեր մեծ թարգմանիչների՝
Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ Մաշտոցի:
Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղե-
ցին, միշտ էլ, ամեն տարի, մեծ հանդիսու-
թյամբ նշել է մեր մեծ թարգմանիչ-յուսափո-
րիչների՝ Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ
Մաշտոցի պանծալի այս տոնը:

Անմոռանալի է երախտիքը մեր դույզ Հայ-
րապետների՝ հայ դրականության և հայ ժո-
ժողովրդի մշակութի պատմությանն անաղա-
վառում:

5-րդ դարի սկզբներում, Ս. Սահակն ու Ս.
Մեսրոպը՝ մի մշակութային, պատմական
շարժման հիմքը դրին՝ զաղափարական դեո-
նի վրա պայքարելու հանուն հայ մշակութի
ինքնուրույնության՝ ընդդէմ հույն ու ասորա-
պարսկական ազդեցությունների:

Ժամանակի տնտեսական, քաղաքական ի-
րադրությունն առաջ էր բերել սեփական գիր
ու ինքնուրույն գրականություն ունենալու
անհրաժեշտությունը:

Ինչպես հայտնի է, 387-ին Հայաստանը
բաժանվել էր աշխարհակալ երկու դիշատի:

պետությունների՝ Հռոմի և Տիգրանի միջև:
Բյուզանդական ու Սասանյան կայսրությանց
վարած հայահալած քաղաքականությունը
մեր ժողովրդի, նրա կուլտուրայի և քաղաքա-
կան անկախության դեմ, զազաթնակետին էր
հասել 4-րդ դարում: Նրանցից յուրաքան-
չյուրն աշխատում էր երկրում ուժեղացնել իր
ազդեցությունը, ասիմիլացիայի ենթարկել
ամեն ինչ՝ որ հայ ժողովրդի անունն ու հան-
ճարն էր կրում: Մեր ժողովուրդը հաղթական
գիմադրություն էր ցուցաբերել նրանց նվա-
ճողական քաղաքականության դեմ և պայքա-
րել երկուսի դեմ էլ հավասար առելություններ և
վճռականությամբ:

387 թվականից հետո էլ ավելի վատթա-
րանում է մեր ժողովրդի վաճությունը: Հռոմն
ու Տիգրանը ցանկանում են վերացնել պաղա-
փարական այն նախադրյալները, որոնք կու-
րող էին ռեալական քաղաքական անկախու-
թյուն ձեռք բերելու ձգտումներին: Մեր ժո-
ղովուրդն ու երկիրը բաժանված էին երկու
թշնամի պետությունների միջև: Վտանգվել
էր մեր երկրի միասնությունն ու ժողովրդի
միասնականությունը: Այս տխուր կացությու-
նը լուրջ վտանգ էր ներկայացնում հայ ժողո-
վրդի ֆիզիկական գոյության տեսանկյունից:
Հայրենասեր ու առաջավոր մարդկանց առաջ,
ալզ ծանր օրերին, ծառանում էր մի հիմնու-

կան հարց՝ ստեղծել մի այնպիսի արժատական միջոց, որը հնարավորություն տար Հայաստանի երկու բաժան մասերի միջև ստեղծելու ազգային, մշակութային, հոգևոր կապ, փրկելու համար հայ ժողովրդի միասնականությունը։ Այդ կարող էր անել միայն հայ գիրն ու գրականությունը։ Բայց հայ ժողովուրդը շուտով իր սեփական գիրն ու ազգային ինքնությունը գրականությունը Մյուս կողմից, երկրում քրիստոնեությունն ևս կարիք ուներ հայ գրի և գրականության։ Ամբողջով երկրում քրիստոնեությունը և մարտի դուրս գալ Արևմուտքի և Արևելքի այլասերող ազդեցությունների դեմ— ահա՛ օրվա հարցը։ Քրիստոնեությունը ուժեղացնելու համար, հարկավոր էր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուց վարել հույն և ասորի լեզուները, հարկավոր էր, որ Աստված հայերեն խոսեր հայ ժողովրդի հետ։ Եկեղեցում կարողացված հույն կամ ասորի լեզուները ոչ միայն վերափոխում էին հայ ժողովրդի ազգային արժանապատվությունը, այլև շատ զգալի էր նրանք հասկանալու ռեթե վարդապետները մինչև առավոտ նստեին և հորդահոս անձրևի նման քարոզ խոսեին, ապա լազմաթիվ մարդկանցից— նախարարներից կամ շինական ժողովուրդից— չկար և ոչ մեկը, որ մի բառ, անգամ մի վանկ հասկանար և լսածից ամենաշնչին մի հիշողություն, մի միտք մտցում պահեր»։— գրում է Փավստոս Բյուզանդը։

Հայ ժողովրդի համար սեփական գիր և գրականություն ունենալու միտքը գրադեցնում էր ժամանակի թե՛ կրոնական, թե՛ պետական ղեկավարներին։ Ինչ խոսք, որ մայրենի լեզվով ինքնությունը գիրն ու գրականություն ունենալը պատմական խոշոր իրադարձություն պետք էր հանդիսանար մեր ժողովրդի կյանքում։ Եվ առաջին մարդը, որի հույում հաստատեցին էր հայ գրերի գյուտը, հայ ժողովրդի տաղանդավոր դավակ Ս. Մեսրոպ Մաշտոցն էր։

Մաշտոցը ծնվել է 361 թվականին, Տարոնի Հացեկաց գյուղում, ազատ շինականի ընտանիքում։ Մանկությունից սովորել է հունարեն, պարսկերեն, ասորերեն լեզուները։ Մի ժամանակ գինվորական ծառայության մեջ է մտել հայ Արշակունիների պալատում՝ Խոսրով 3-րդի արքունիքում, իբր թարգման և քարտուղար արքայի։ Ապա թողնում է աշխարհիկ քաղաքական ասպարեզը և կրոնավոր դառնում։ Հայաստանի զանազան գավառներից աշակերտներ է հավաքում և ձեռնամուխ լինում հայ տառերի գյուտին, ուղեվորվում իր ժամանակի կուպտուրական մեծ կենտրոնները՝ Ողեսիա, Ամիդ, Սամոսատ, ուսումնասիրում գրադարաններում ձեռագրե-

րը, Երկար ու տքնաշան գիտական հետազոտություններից հետո, մի երջանիկ օր, սրբազան ներշնչումի մի ստեղծագործ պահին՝ «ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ» հոգեվիճակում, մտքի երկնային լուսավորությամբ ստեղծում է հայոց մեծասքանչ լեզվի գրերը և հիմք դնում հայ գրավոր գրականության։

Հայ գրերի գյուտը մեծ խանդավառություն է առաջացնում երկրում և ժողովրդի մեջ։ Սկսվում է գրական-ստեղծագործական ու թարգմանական եռուն աշխատանքի մի շարժան, Բացվում են Հայաստանի յուրորդ գավառներում դպրոցներ, Մեսրոպը ման է գալիս ամբողջ երկրով մեկ իր աշակերտների հետ, վանքեր ու դպրոցներ բաց անում, ճառեր ու թղթեր է գրում։ Հայ ժողովուրդը ծուր է դնում երախտագիտությամբ հայոց լեզվի առաջին ու մեծ ուսուցչի առաջ, և հիացմունքով հեղում մեր լեզվի առաջին, սրտառու տառերը։ Այսպես, հայերենի ուսուցման և հայերեն գրականության ստեղծման ու տարածման գործում ամենահիմնական աշխատանքը տանում է ինքը՝ Ս. Մեսրոպը։ Նրա մասին մեր քերթողահայր Մովսես Խորենացին գրել է. «Մտրով՝ ստեղծող, խոսքերով՝ պայծառ, գործերով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, սովորեցնելու մեջ՝ չձանձրացող»։

Իսկ Ս. Սահակ պարթևը, իրեն Ամենայն Հայոց Հայրապետ, Կաթողիկոսարանում հաստատ, գրադվում է ավելի դուրս թարգմանական գրական աշխատանքներով։ Նրա շուրջն է հավաքվում նվիրված թարգմանիչների մի ընտիր խումբ, որոնց առաջին մեծ գործը հանդիսացավ Աստվածաշնչի թարգմանությունը։

Հայ ինքնուրույն գրականության ստեղծումը մեր ժողովրդի կյանքում հանդիսացավ աննախընթաց պատմական մշակութային երևույթ։ Հայ գրերի գյուտը և հայ գրավոր գրականության սկզբնավորությունը հայ ժողովրդի ազգային գոյության, պահպանման, ամրապնդման գործում պատմական մեծ նշանակություն ունեցած անցյալում և ունեն այժմ։

Մեր անմոռանալի լուսավորիչ-թարգմանիչների անմահ գործի հիշատակը այսօր էլ մեզ հավաքել է Օշականի մեծ Սուրբի շիրմի մոտ։ Այս սուրբ մատուռն մեզ է թաղված հայ գրերի մեծ գյուտարար Ս. Մեսրոպը, որը եղել է հայ ժողովրդի առաջին ու փրկեցյալ ուսուցիչը։ 1500 տարիներից ի վեր այս անշուք մատուռը հայ ժողովրդի երկրպագելի, նվիրական սրբավայրն է եղել։ Սերունդներ ուխտի են եկել մոտիկ ու հեռավոր հորիզոններից մեծ ուսուցչի ոտքը ու ծնրադրել հա-

լուծյան առաջին և հանձարեղ ուսուցչի գե-
րեզմանի առաջ։

Անմահ է Ս. Մեսրոպը, որովհետև անմահ է
նրա գործը, Դո՛ւք, Օշականի հավատացյալ
հայ ժողովո՛ւրդ, բախտավոր եք, որ ձեր ծո-
ցում կենդանի եք պահում հայ ժողովրդի
ամենաթանկագին գանձերից մեկի հիշա-
տակը։

439 թվականի փետրվարի 17-ին վախ-
ճանվեց Ս. Մեսրոպն ու թաղվեցավ Հայոց
աշխարհի երբեմնի հաղարապետ իշխան Վա-
հան Ամատունու այս Օշական գյուղում, բայց
ապրում է նրա անմահ գործը և ապրեցնում
նաև Ս. Մեսրոպին։

Աչքի չույսի պես պահենք այս պատմական
ու նվիրական մատուռը, ուր հանգչում են Ս.
Մեսրոպի անմահ նշխարները։

Այսօրվա տոնը պանծացումն է հայ դրի և
դրականության, Հայաստանյայց Առաքելա-

կան մեր Սուրբ Եկեղեցին սրբացրել է հայ
կուլտուրայի բոլոր ծանոթ ու անծանոթ,
հայտնի ու անհայտ մշակներին։

Գուրգուրենք ու աչքի լույսի պես պահենք
պահպանենք մեր կուլտուրական արժեքները,
սիրենք ու տարածենք մեր մեծասքանչ լեզ-
վով գրված հայ գրականությունը, հավատա-
րիմ ու ջերմեհունդ պաշտպանները լինենք
մեր դարավոր ու նվիրական ավանդներին,
որոնք ձեռք են բերվել մեր պանծալի նախ-
նիքների արյունով, արցունքով ու կյանքով,
և անվթար հանձնենք այն եկող սերունդնե-
րին։ Այս է այսօրվա մեր թարգմանիչ-լուսա-
վորիչների սուրբ պատգամը մեզ՝ բոլոր հա-
վատացյալներին։

Ճիշտատե՛կ արգարոց օրհնութեամբ եղի-
ցի։





ԽԱՂԱՂՈՒԹԵՄԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԺԱԿԱՏՈՒՄ

ՀԱՅՈՒԼԵՏՏ ԶՈՆՍՈՆԸ ՎԿԱՅՈՒՄ Է, ՈՐ ԱՄԵՐԻԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ԲԱԳՏԵՐԻՈՂՈԳԻԱԿԱՆ ԶԵՆՔ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՓԱՍՏԵՐՆ
ԱՆՇԵՐՔԵԼԻ ԵՆ

ԼՈՆԴՈՆ, 12 հուլիսի (ՏԱՍՍ)։— Անգլիա-
յում հետադիմական շրջանները հալածանք
են սկսել Քենտրբերի Մայր Տաճարի վանա-
հայր Հյուլետտ Ջոնսոնի դեմ, ընդհուպ պա-
հանջելով հեռացնել նրան վանահոր պաշտո-
նից։ Հյուլետտ Ջոնսոնը մոտ օրերս վերա-
դարձավ Չինաստանից, լոթ շաքաթվա իւ-
ժանապարհորդությունից հետո։

Վերադառնալով Լոնդոն, Հյուլետտ Ջոնսո-
նը ելույթ ունեցավ արես-կոնֆերենցիայում,
ուր ներկա էին ավելի քան 60 թղթակիցներ
և ֆոտոսպորտյոռներ։

Ինչպես արդեն հաղորդված էր, Հյուլետտ
Ջոնսոնը արես-կոնֆերենցիայում իր արած
հայտարարության մեջ նշեց, որ խաղաղու-
թյան պահպանման և ամերիկյան ազդեցի-
կի դեմ պայքարող Չինական ժողովրդական
կոմիտեի հրավերով ձեռնարկած իր ճամբոր-
դության գլխավոր նպատակն է եղել ծանո-
թանալ Չինական ժողովրդական Ռեպուբլի-
կա կազմակերպությունը հետո չինական ժո-
ղովրդի կյանքի մեջ տեղի ունեցած փո-
փոփոխությունների հետ, համեմատած այն
դրությանը, որը նա տեսել էր 1932 թվակա-
նին՝ Չինաստանում գտնված ժամանակ
նա մանրամասն պատմեց չինական ժողո-
վրդի բարոյական և տնտեսական վիթխարի
նվաճումների մասին և ընդգծեց, որ չինա-
կան ժողովուրդը ձգտում է զարգացնել ա-
ռևտուրը Արևմուտքի հետ և ցանկանում է
պահպանել միջադպրախնային ախպիսի հարաբե-
րություններ, որոնք հիմնված են խաղաղ
համագործակցության վրա։

Այնուհետև Հյուլետտ Ջոնսոնը կանգ ա-
ռավ ամերիկացիների կողմից բակտերիոլո-

գիական զենքի գործադրման փաստի վրա,
որի հետ նա ծանոթացել է։

Ջոնսոնը հայտարարեց, որ «Բակտերիո-
լոգիական զենքի գործադրման ապացույց-
ները համոզեցուցիչ են և անհերքելի, ճշ-
մարտությունը չի կարելի թաքցնելը։

Նախ Հյուլետտ Ջոնսոնը պատմեց ամե-
րիկացիների կողմից բակտերիոլոգիական
զենք գործադրելու իրեղեն ապացույցների
ցուցահանդեսների մասին, որոնք նա դիտել
էր Պեկինում և Մուկդենում։

Հիշատակելով այդ ցուցահանդեսները նա-
խապատրաստող անձանց մասին, Ջոնսոնն
ասաց, ընդհանրապես հուշակ ու-
նեցող մարդիկ են, ընդ որում, դրանցից շա-
տերը իրենց կրթությունը ստացել են Անգ-
լիայում և Ամերիկայում։ Ոչ ոք չի կասկա-
ծում նրանց օբեկտիվության, ազնվության
և դիտական իմացության վրա։

Հյուլետտ Ջոնսոնը նույնպես քաղվածք-
ներ բերեց ամերիկյան օդաչուների կոպիների և
ինոկի ցուցմունքներից և պատմեց իր ունե-
ցած զրույցի մասին ավստրալիական լրա-
գրող Ուիլֆրիդ Քեյլետտի հետ, որն ին-
տերվյու է տվել նրան։

Երկրորդ, Ջոնսոնը պատմեց, որ Հյուսի-
սարևելյան Չինաստանի 70 այն կետերից,
ուր ամերիկացիները բակտերիոլոգիական
ոտմբեր են նետել, այցելել է երեքը և այն-
տեղ նա անձամբ տեսել է փորձանոթների
մեջ վարակված միջատներու նա զրույց է ու-
նեցել չինական քրիստոնյաների հետ, որոնք
այդ հարձակումների ականատեսներն են
եղել։

Երրորդ, Զոնսոնը բերեց շինական քրիստոնյաների հայտարարությունները, որոնք հաստատում են բակտերիոլոգիական զենքի գործադրման փաստերը: Զոնսոնը պրես-կոնֆերենցիայում ցուցադրեց մի քանի փաստաթղթերի բնագրեր, որոնք ստորագրված էին Չինական Եկեղեցու շատ ղեկավարների կողմից: Այդ փաստաթղթերից մեկը, որի երկարությունը մի քանի յարդ էր, ստորագրված էր 410 եկեղեցական ղեկավարների կողմից, որոնք թվում Անգլիական և Մեթոդիստ Եկեղեցու 2 եպիսկոպոսների կողմից:

Լրագրողները ցուցաբերեցին մեծ հետաքրքրություն այդ փաստաթղթի նկատմամբ, և ֆոտոռեպորտյորները նկարահանեցին այն:

Զոնսոնի ասելով, նա մտադիր է Անգլիական Եկեղեցու ղեկավարներին ծանոթացնել այդ փաստաթղթի, ինչպես նաև Չինական Քրիստոնյա Եկեղեցու ղեկավարների այլ հայտարարությունների հետ:

Այնուհետև Զոնսոնը հիշեց, որ համաշխարհային հույակ ունեցող մի քանի պիտանականներ ներկայումս պոնովում են Չինաստանում, նույն թվում դոկտ. Ժոզեֆ Նիդհեմը, որը հայտնի անձնավորություն է ինչպես Անգլիայում, այնպես է Չինաստանում, և մոտ շրջոս կհրապարակեն նոր ղեկուցում:

Պատասխանելով հարցերին, Զոնսոնը նշեց այսպես կոչված կարմիր եռաչի Միջազգային կոմիտեի ներակայության անընդունելիությունը:

Ի պատասխան այն հարցին, թե արդյոք ամերիկյան միկրոօրգանիզմը առաջ են քերել համաճարակի թե՛ ոչ, Զոնսոնը համաճարակի բացակայությունը բացատրեց շինական կառավարության ձեռնարկած արտակարգ պրոֆիլակտիկ միջոցառումների գործադրմամբ:

Պրես-կոնֆերենցիայում տիկին Զոնսոնը վարդապետ Ռիչարդ Բերչեստոնի հայտարարությունից բերված մի քանի քաղվածքներ՝ նրա ունեցած հանդիպումների մասին կորեացիների հետ, որոնք հենց նոր էին հայտնաբերել Ցալոցցու գետաբազուկում՝ ուղղմագերիների գաղութի մոտերքում՝ տարօրինակ միջատներ. Բերչեստոնը, ի միջի այլոց, պատմեց մի միջադեպի մասին, երբ ամերիկացի նեգր զինվոր Չարլզ Պիկսլին կոպտվեց բակտերիաներով վարակված միջատը, ցանկանալով հերքել բակտերիոլոգիական զենքի գործադրման հայտարարությունը: Այդ քանից հետո Պիկսլին ծանր հիվանդացավ և կարող էր մահանալ, եթե նրան նախապես պատվաստած չլինեին:

Անդրադառնալով Հյուլետտ Զոնսոնի պրես-կոնֆերենցիային, անգլիական Ռեյտեր հեռագրական գործակալությունը հայտնում է, որ Զոնսոնը իր ճանապարհորդության ընթացքում հաճախել էր Հյուսիս-արևելյան Չինաստանի երեք վայրեր, ոչ Կորեայի, ուր, Զոնսոնի ասելով, նետված են եղել բակտերիոլոգիական ումթեր, Այդ վայրերն են՝ Մուկոնը, Մուկոնի և Ֆուշունի միջև ընկած գյուղակը և Ֆուշունը: Մուկոնում հայտնաբերված են եղել թե՛ նիսային կորդին հարմարեցված զանիշվիրա մի քանի միջատներ, Զոնսոնը այդ զննեց փորձառոթների մեջ. նրանք վարակված էին հիվանդություններ առաջացնող միկրոօրգանիզմով. նման միջատներ հայտնաբերվեցին նաև Երկու այլ կետերում:

Գործակալությունը նշում է, որ Զոնսոնը մատնացույց է արել Չինաստանի քրիստոնեական եկեղեցիների ուղիղ բազմաթիվ վկայությունները: Զոնսոնը մեջ բերեց քաղվածք Չինաստանում գտնվող Անգլիական Եկեղեցու մեկ եպիսկոպոսի՝ Պ. Դինգել Ցոնե Դոյնի նամակից՝ բակտերիոլոգիական զենքի գործադրման մասին՝ իր հայտարարությունը հաստատելու համար: Այդ եպիսկոպոսի հարս պատմել է նրան, որ իր քաղաքի բնակիչները օդաղվելիս են եղել ամերիկական ինքնաթիռից նետվող միջատներ որսալով:

Զոնսոնը իր առաջ, սեղանի վրա, դնելով փաստաթղթերով լեցուն սրճագույն մի մեծ ճամբրուկ, հայտարարեց, որ այդ փաստաթղթերը իրենց մեջ բակտերիոլոգիական զենք գործադրելու մասին նոր վկայություններ են պարունակում:

Հյուլետտ Զոնսոնի ասելով, Քենտրբերիի արքեպիսկոպոս դոկտ. Ֆիշերը նախքան ուրախահամար ճանապարհվելու խորհուրդ է տվել նրան սելառ կապ պահպանել իր հաճախելիք երկրների քրիստոնեական անկեղծյիտների պետերի, ինչպես նաև Անգլիական Եկեղեցու քահանաների հետ:

«Նա ջանասիրտությամբ այդ երկու պայտավորությունները կատարեցի Չինաստանում»:

— Հայտարարեց Հյուլետտ Զոնսոնը:

Նա ներկա գտնվեց և քարոզով հանդես եկավ Պեկինի, Շանհայի և Կանտոնի քրիստոնեական եկեղեցիներում: Նրան հաղորդեցին, որ Չինաստանում դեռևս պոյություն ունեն երկու միլիոն քրիստոնյա-բողոքականներ և շրջ միլիոն կաթոլիկներ, և ճերկու եկեղեցիների ամենաազդեցիկ ղեկավարները հանձնեցին նրան բակտերիոլոգիական զենքի գործադրման վերաբերող իրենց հայտարարություններն և ուղերձները:

Մատնանշելով այդ փաստաթղթերը, Հյուսիսային Զոնսոնը հայտարարեց. «Ահա բազմամիլիոն չին քրիստոնյաների ձայնը: Չին քրիստոնեական մասսաների այդ ձայնը անմիջապես հերքում է հաճախակի առաջադրած այն մեղադրանքը, որ բակտերիոլոգիական զենք գործադրելու փորձերով հայտարարությունը հանդիսանում է իբր թե միակ կոմունիստական պրոպագանդա. որը սկիզբ է առնում Մոսկվայից»:

Ավարտելով իր ելույթը, Հյուսիսային Զոնսոնը բաց արեց Չինական Եկեղեցու ղեկավարների հայտարարության բնագիրը՝ հաստատված ստորագրություններով և կնիքներով: Այդ փաստաթուղթը, որի երկարությունը 12 յարգ ֆ, բացված վիճակում գրավեց սենյակի համարյա կեսը:

Հարցումներին պատասխանելով, Զոնսոնը հայտարարեց, որ նա Կորեայում քննություններ չի կատարել, այլ այդ արել է Հյուսիսարևելյան Չինաստանում: Նա ասաց, որ Մեղադրանքները բնոդ միջազգային կոմիտեն հիմնականում, բաղկացած է շվեյցարացիներից և նրա հզորակացությունները չի կարելի ընդունել որպես միջազգային պաշտպանության հզորակացություն:

ԼՈՆԴՈՆ, 12 հուլիսի (ՏԱՍՍ)։— Անգլիական թերթերը լայն կերպով մեկնաբանում են Հյուսիսային Զոնսոնի պրես-կոնֆերենցիան. որտեղ նա ապացույցներ է բերել ամերիկացիների կողմից Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայում բակտերիոլոգիական զենք գործադրելու մասին: Թերթերը այդ հարցին նվիրում են մեկից երկու սյունակ:





ՀԵՆՐԻԿ ՍԱՐԿԻՍՅԱՆ

ՄԵՐ ԱՄԱՌԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ

Այս տարի Վեհափառ Հայրապետի ցանկությամբ, որոշվել էր մեզ՝ Մայր Աթոռի 8 սարկավազներիս ուղարկել Կոմկասի մեր եկեղեցական թեմերը՝ տարեկան լարված քննություններից հետո հանդեսանալու և կազդուրվելու համար:

Ինձ և Սարգիս սարկավազին վիճակված էր գնալ Բաքվի հայոց թեմը: Մենք շատ ուրախ էինք և անհամբեր սպասում էինք մեկնելուն: Հուլիսի 19-ին գնացքով դուրս դալով Երևանից, 21-ի վաղ լուսաբացին հասանք Բաքու:

Կայարանում մեզ դիմավորելու եկել էին եկեղեցական խորհրդի երկու անդամներ, որոնց ուղեկցությամբ գնացինք հայոց եկեղեցին, ապա՝ մեզ համար նախօրոք պատրաստված սենյակը:

Բաքվի համախոսը մեզ բնորոշեց շատ սիրալիր: Աղբյուրանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ տեր Վարդգեսը, որին մենք նախապես ճանաչում էինք, մեզ ծանոթացրեց քաղաքի քահանաների և տիրացուների հետ: Մենք միշտ մասնակցում էինք եկեղեցական արարողություններին: Հավատացյալները ամեն օր շրջապատում էին մեզ սիրով, գորգոպանքով և օրհնում: Հաջորդ կիրակի օրը Ս. Աստվածածնի

Վերափոխման տոնն էր, հեղեցիների լիակենցուն էր հավատացյալներով: Այդ օրը վերադառնալով անողը Սարգիս սարկավազն էր, իսկ ռուսապետները՝ նա: Վերնատնից երգում էր քառաձայն երգչիկ խումբը: Պատարագը չվերջացած, ժամարար տեր Վարդգես քահանան քարոզեց օրվա տոնի նշանակության մասին: Նա մանրամասն կամո առավ Վարդավառի սկզբնավորության և նշանակության, Գրիգոր Լուսավորչի գործունեության, 4-րդ դարում մեր եկեղեցու վիճակի և հեթանոսական մնացորդների դեմ մղած նրա պայքարի մասին:

Մեր սիրելի Հայրապետը Ս. էջմիածնից մեզ հյուր է ուղարկել երկու ճամբարանավարտ սարկավազների. դրանք այս երիտասարդներն են, — ասաց նա մատնացույց անելով մեզ, — որոնք մտել են հողեքուրաս պարեզը՝ ծառալիլու մեր եկեղեցուն և հայ ժողովրդին: Վեհափառը սրանց ուղարկել է այստեղ՝ տեսնելու և ծանոթանալու մեզ հետ և Ձեզ մխիթանելու էջմիածնի Հոգևոր Ժամանակը այսպիսի կրթված ու անձնակերպ եկեղեցական գործիչներ է պատրաստում: Մեր բարոյական պարտքն է շարունակել մեր նվիրատվությունը էջմիածնի Հոգևոր Ժամանակին օգտին, և աղոթել Մայր Աթոռի հարատևության, ծերունազարդ Հայրապետի քաջատուրության և արևշատության համար, ու

րի իմաստուն ղեկավարության շնորհիվ օրավուր պայծառանում է մեր նկեղեցին:

Այդ քարոզը մեծ տպավորություն թողեց ներկա եղողների վրա: Նման քարոզներ առաջնորդական փոխանորդի բերանից հավատացյալները լսել են հաճախ և հոգեպես մխիթարվել: Իր շնորհալի աշխատանքի համար է, որ Վեհափառ Հայրապետը շնորհել է նրան վերջերս վարդապետական լանջախաշ:

Հաջորդ օրերին մոտից ծանոթացանք Բաքվի հիշարժան վայրերի հետ՝ թատրոնների, թանգարանների, ցուցահանդեսների, դրախտանների, պատկերասրահների, հնագիտական վայրերի և այլն: Որպես սովետական քաղաքացի, մենք սրտի անհուն ուրախությամբ դիտում էինք եղբայրական Ադրբեջանի վիթխարի հաջողությունները՝ արդյունաբերության, կուլտուրայի, արվեստի, գիտության և այլ սապարեղներում:

Օգոստոսի 9-ին տեր Վարդգեսի խորհրդով այցելեցինք նաև Կիրովաբադի հայ հավատացյալ համայնքին: Առաջին իսկ հայացքից մեզ հիացրեց Կիրովաբադի հրաշագեղ բնությունը, փոքրիկ, բայց գեղեցիկ քաղաքը աչքի էր ընկնում իր հարուստ բուսականությամբ, սառնորակ ջրերով ու զով օդով: Այս քաղաքը ես սիրալիր ու հարազատ դարձավ մեզ, երբ ծանոթացանք ազնիվ սիրտ ունեցող Կիրովաբադի հյուրասեր ժողովրդի հետ: Մեր նկատմամբ ամենուրեք ցուցաբերում էին սեր, խանդավառում մեզ, երկար կյանք մաղթում Վեհափառ Հայրապետին և անսասանություն՝ Ս. Էջմիածնի:

Կիրովաբադի եկեղեցին շինված է Գեորգ Գ. Մեծագործ կաթողիկոսի օրոք: Նկեղեցու ներս լուսավոր է ու մաքուր: Տեղի քահանաների, եկեղեցական խորհրդի, հատկապես խորհրդի նախագահ Ս. Մելիք-Ստեփանյանի բանքերի շնորհիվ, եկեղեցին պահվում է բարեկարգ վիճակում: Վերականգնվել է եկեղեցու նախկին պարիսպը, որի ներսը բուրումնալից ծաղկանոց է, մեջը՝ սառնորակ աղբյուր:

Կիրովաբադն ևս բավականի դարգացած քաղաք է: Նախկին հին կավապատ շենքերն իրենց տեղ ոտնու են օտոն օտոմահառի շենքերին: Քաղաքում կան ադրբեջանական, ռուսական, հայկական մի շարք թերի միջնակարգ և միջնակարգ դպրոցներ և ադրբեջանական տեխնիկումներ և ինստիտուտներ: Ժողովուրդը բարեկեցիկ վիճակ ունի:

Կիրովաբադում, համեմատաբար, մենք մտացինք ավելի երկար: Տեր Վարդգեսը մի քանի անգամ քարոզ ասաց ի մխիթարություն հավատացյալ ժողովրդին: Վերադարձին մեզ ուղեկցում էին բազմաթիվ հավատացյալներ: Նորից վերադարձանք Բաքու: Օգոստոսի 31-ին տեր Վարդգեսը քարոզի մամանակ հայտնեց մեր վերադարձի մասին: «Սիրելի ժողովուրդ,— ասաց նա,— այսօր մեր սիրելի սարկավազները գնալու են այստեղից: Նրանք խնդրեցին ինձ՝ հայտնել ձեզ սրտազին շնորհակալություններ: Նրանք դո՛ւ են ձեզանից և մեր համայնքից՝ իրենց հանդես ցուցաբերած բարի ու ազնիվ վերադարձունքի համար: Մաղթե՛ք նրանց բարի ճանապարհ և հաջողություն իրենց ուսման ապարիզում:


Սիրալիր ողջերթներով մեզ ճանապարհորդեցին: Մեծ տպավորություն թողեցին մեզ վրա եղբայրական Ադրբեջանի գեղեցիկ մայրաքաղաքը՝ արդյունաշատ Բաքուն և շքնաղ Կիրովաբադը:

Այս ամառային արձակուրդները մեզ համար ունեցան մեծ նշանակություն: Մենք առիթ ունեցանք մոտիկից ծանոթանալու հեռավոր թեմերից մեկի հավատացյալ ժողովրդի հետ և տեսնելու, թե նա սիրո որպիսի ամուր թելերով է կապված իր սրբություն սրբոց Ս. Էջմիածնի հետ և որքան հարգում է ու սիրում իր եկեղեցու մշակներին:

Այս հանգամանքը հոգեկան մեծ մխիթարություն է պատճառում մեզ և բարձրացնում մեր աշխատանքի խանդավառությունը:



Օգոստոսի վերջերը ամառային արձակուրդներից վերադարձան նաև մյուս սարկավազները, որոնցից Քաջիկը, Փայլակն ու Տիգրանը Թիֆլիսիումն էին, Անդրանիկն ու Գուրգենը՝ Ռոստովում, Իզնատիսոս՝ Արգենի առողջարանում, իսկ Ռուբիկն ու Մովսեսը՝ Ռնացե, էին Էջմիածնում: Վերադարձողները տրախ էին ու երջանիկ: Նրանք իրենց հետ բերել էին անմոռանալի հիշողություններ, այլ հավատացյալ համայնքների բուռն սերն ու համակրանքը, անթիվ օրհնություններ ու մաղթանքներ Ս. Էջմիածնի և Մալր Աթոռի հաստատության ու հարատևության, նորին Գաեակայի՝ Արքազնագույն կաթողիկոսի ակնշատության համար:





ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՄԱԿՐՈՆ ԵԱՀԱՊՈՒՆԻՄ

ՋԵՐՄՈՒԿՆ ԱՆՑՑԱԼՈՒՄ ԵՎ ԱՅԺՄ



Երմուկը շատ հին պատմություն ունի: Հայկական մատենագրության մեջ նա առաջին անգամ հիշված է 13-րդ դարի պատմագիր Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն ևաճանգիւն Սիսական» աշխատության մեջ՝ Վայոց Ձորի հարկատու գյուղերի ցանկում (տես Թիֆլիսի 1910 թվականի հրատարակությունը, էջ 512): Զերմուկի մոտիկ ավերակներում է Զերմուկին հարեան կենդան գյուղի վիմագիր արձանագրություններից երեւում է, որ Զերմուկը ժամանակին Սյունյաց թագավորների և Օրբելյան փոխանական տան ամատանաց-քուժավայրն է հանդիսացել:

2. Դ. Ալիշանն իր «Սիսականի մեջ հետեւյալ տեղեկությունն է տալիս Զերմուկի մասին. «Իբրեւ փարախաւ յեւս հիւսիս» դեղջս կան ջերմուկը, յոր անուն գիտյ հին նշանակի ի ցուցակին. և յայտ է թէ ի վաղուց անտի ջորքն երկաթահամք՝ վարէին ի յողանիս թշկականս, որպէս ցուցանէ և հին քարաշէն աստղանն. ոչ սակաւ աղբերք են անդ յորոց հինն (որպէս կոչեն) հզօրագոյն 30՞ ուղմիւրի ջերմութեամբ. առ իովաւ միա ես յողիսեաց սակաւ ամօք յաւաջ, որպէս ասեն. ի փրթածոյ և յանկմանէ ստանաձոյլ վիմի միոյ, որ փուսցուցիւ զկակուղ ղեծիմն՝ լղխեցոյց զջերմուկին» (էջ 102):

Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց շատ, Զերմուկը վեր է ածվել Շարուր-Պալարուզագի գավառի պետական պաշտոնեության ամառանոցի, ուր մի քանի ամիս շարունակ նրանք եկել են իրենց բնակարաններով, իսկ եկել են իրենց վրաններով

ձաղկազարդ արոտատեղիներում, սառնորակ աղբյուրների մոտ և վայելել բնության բարիքը:

Զերմուկի ջրերի բուժիչ հատկության մասին ժողովրդի մեջ դրական կարծիք գոյություն է ունեցել վաղուց. նրա շուրջը հրաշքներ են հյուսվել: Զերմուկի մոտիկ գյուղերում տեղացիները անուններով թվում են ռազմաթիվ հիվանդների, որոնց Զերմուկ են տարել բուժելու: Դիու կամ դրաստի վրա դրած, պառկած վիճակում մի քանի անգամ հանքաջրում լողանալուց հետո նրանք բուժվել և իրենց ոտքով վերադարձել են իրենց բնակավայրերը:

1900 թվականին ես այցելել եմ Զերմուկը: Հիշում եմ, ձորում, Արփաշայ գետի մոտիկ, մի քանի փոսեր էին փորված, որոնց մեջ հավաքվում էր հանքաջին տալց ջուրը և հիվանդները մի քանի հոգով, երբեմն ավելի շատ, մտնում էին այդ փոսերը և լողանում: Ըստ որում, թշկական քննություն չկար, Զերմուկ էին բերում ամեն տեսակ հիվանդների, երբեմն վարակիչ հիվանդություններով վարակվածների և բուժելու փոխարեն վարակ տարածում:

Ճանապարհներն այն ժամանակ շատ վատ էին. ուտի և հեռավոր վայրերից շատ քիչ մարդիկ էին գալիս: Նմուղի, այն ժամանակ, չկար. հիվանդներին բերում էին ձիերով, ջորիներով կամ գրաստներով, բերում էին մեծ դժվարությամբ, որովհետև ճանապարհում տեղեր կային, որ ձիու համար անգամ դժվար էր անցնել: Զերմուկ եկողները մեծ մասամբ լինում էին Վայոց Ձորի և Սիսիանի գյուղացիներից և քուժավոր թարաքյամաններից: Զերմուկի մոտ ոչ մի

ռնակների շենք գոյություն չունենք։ մեկ ու կես կիլոմետր հեռավորության վրա գրետներվում էր միայն ադրբեջանական Իստի-Սու գյուղը։

ենրից բխող սառնորակ աղբյուրներից, Գետը, ինչպես և նրա վտակները, մինչև Կնդեվազ գյուղը, հարուստ են կարմրախալս ձկնեղջյուրով։ Զերմուկի ձորում, գետի դեմ-դի-




Զերմուկի կիրճը

Զերմուկի ձորը, պետք է ասել, բնության անսման հրաշալիքներից մեկն է։ Զորից շալունով անցնում է փրփրած Արփաշայ գետը, որի ջրերը հավաքվում են մոտիկ յե-

մաց, խոլանում է մոտ 70—80 մետր բարձրությամբ մի ապառաժ, որի երեսին բույր են հյուսել հազարավոր ժիճեմակներ։ որոնք իրենց խառն ու արագասլաց թռիչ-

քով մի առանձին գեղեցկություն են տալիս: Ապառաժի կես բարձրության վրա, մի քանի տեղ, հարմար խորշերում, իրենց փեթակն են դրել մեղուները, որոնց պատրաս-

քնակիչ Քալբաշի Ղուրբանը, ճարպիկ մի անձ, հոկտեմբեր ամսում, սովորություն էր դարձրել և գալիս էր Ջերմուկ այս քարաժայռի մեղրը կտրելու: Հավաքվում էին



Ջերմուկի ջրավազանների շենքը

տաժ մեղրը հաճախ այնքան շատ է լինում, որ խորշերից ցած է հոսում, ստեղծելով սևացած մի շերտ, որը նկատելի է ներքևից: Անցյալում, հիշում եմ, Ջերմուկ գյուղի

հարևան գյուղացիները և առանձին հանդիսավորության մեջ կախում նրան երկաթե շղթայով:

Ջերմուկին առանձին գեղեցկություն է

տալիս նաև նրա մոտիկ ջրվեժը, որի ջրերը հավաքվում են Ջերմուկ գյուղի մոտիկ աղբյուրներից և հսկայական բարձրությունից, սպիտակ փրփուր դարձած, ներքև գահավիժում:

Գեղեցիկ է նաև Ջերմուկի մոտիկ բնությունը: Լեռներն ամենուրեք ծածկված են ալպյան բուսականությամբ և անտառներով (գլխավորապես կաղնի ծառերով): Տեղեր կան, ուր այնքան շատ անուշահոտ ծաղիկներ կան, որ տեղում կանգնած կարելի է հրփներանգ ծաղիկների մի փունջ կազմել: Արտասովոր է նաև Ջերմուկի արեգակը. նա այնքան հարուստ է ուտար-մանիշակադույն ճառագայթներով, որ բավական է մի քանի օր մնալ այնտեղ և մարդ սեանում է հեղիկի սևությունը:

Հանքային ահա այս անգնահատելի հարստությունը, բնության այս սքանչելիքը, անցյալում թողնել էր անուշադրության: Հաճախ նա հիվանդին օգտակար լինելու փոխարեն վնասում էր: Միայն սովետական շրջանում Ջերմուկն ստացավ իր սանատորիկ բուժիչ նշանակությունը: Սովետական գիտնականները բազմակողմանիորեն ուսումնասիրեցին Ջերմուկի բուժիչ հատկությունը և նորմալ պայմաններ ստեղծվեցին Ջերմուկում բուժվել կամ հանգստանալ ցանկացողների համար:

Ուսումնասիրություններից պարզվեց, որ Ջերմուկը ֆիզիկո-քիմիական իր հատկություններով նման է համաշխարհային հրդեհակ վայելող Ձեխոսլովակյան Կարլովի Վարիի (Կարլսբադի) հանքային ջրերին: Ջերմուկի հանքային ջրերը բուժում են մի շարք հիվանդություններ՝ լյարդի, լեղապարկի, ստամոքսա-աղիքային տրակտի, ներվային, կանացի, հոդացավի և այլ հիվանդություններ: Հիվանդությունները բուժվում են տարբեր մեթոդներով—հանձնարարվում են լողանքներ, բուժիչ ցեխ, հանքային ջրի խմում և այլն: Ջերմուկն այժմ, իրավացի, համարվում է ոչ թե տեղական, այլ համամիութենական, համաշխարհային նշանակություն ունեցող բուժավայր:

Այս տարի ամռանը, իբրև Սոցապ միջինստորության խնամքին հանձնված տարիքը առած ու վատառողջ հիվանդ, ես նորից եղա Ջերմուկում: Անճանաչելի էր դարձել նախկին, 52 տարի առաջ իմ տեսած Ջերմուկը: Արփաշայի ձախ ափին բարձրանում էին Հայկական ՍՍՄՔ զանազան միջինստորությունների հոյակապ սանատորիաները:

Այսօր Ջերմուկը կազմակերպված ձևով ընդունում է մոտավորապես տարեկան 1.800 հիվանդ մեր ռեսպուբլիկայից, ինչ-

պես և եղբայրական ռեսպուբլիկաներից: Իս հանդիպեցի անգամ Հեռավոր Արևելքից, Ռիգայից եկած հիվանդներին:

Ջերմուկի ձորում, նախկին փոսերի մոտ, գտնվում է այժմ ջրավազանների նորակառույց գեղեցիկ շենքը, որն իր ջուրը ստանում է տարիներ առաջ երկրաբան Դիմիտրի Բացարած Ջերմուկի հսկա շատրվանից: Այս ջուրն այնքան տաք է, որ այն առանձին խողովակներով տարվում է գետի սառը ջրի մեջ՝ լողանալու համար նորմալ տաքություն տալով նրան:

Ջրավազանների այս շենքն այլևս քավարար չի համարվում. սանատորիայից դեպի արևմուտք կառուցվում է երկու մեծ շենք, առաջինը սարի լանջից բխող հանքային տաք ջրի վրա, որի մեջ պիտի բերվեն Ջերմուկի շրջապատում գտնված բոլոր տեսակի հանքային ջրերը, իսկ երկրորդը՝ նրա դիմաց, հովտի մեջտեղում, ջրավազանների համար:

Սարի լանջից բխող հանքային տաք ջուրը թափվում է փոքրիկ գետակի մեջ: Նրանից կես կիլոմետր ցած, այդ նույն գետակի ափին, բխում է հանքային տաք ջուր ևս, որի ջուրը պատեր են քաշված: Իսկ դրանից դեպի արևմուտք գտնվում է ջրի գործարանը, որն արտադրում է տարեկան երեք միլիոն շիշ ժերմուկա հանքային ջուր: Այդ քանակը, պետք է ասել, անշահ է Ջերմուկի ջրի նկատմամբ Սովետական Միության մեջ եղած հսկա պահանջի համեմատությամբ և ծրագրվում է առաջիկայում խոշոր չափով ընդարձակել նրա արտադրությունը:

Ջերմուկից քիչ ցածր, Արփաշայի վրա, շինված է հիդրոէլեկտրակայան, որի սահանքի լարձրությունը 72 մետր է: Նա օր ու գիշեր լույս է տալիս Ջերմուկի բոլոր շենքերին և նորակառույցներին, ինչպես և մերձակա գյուղերին (Կեչուտ, Գեղեվազ և այլն): Ջերմուկում այժմ մեծ թափով շինարարություն է կատարվում. ռեսպուբլիկական և միութենական բազմաթիվ կազմակերպություններ կառուցում են իրենց սանատորիաները:

Որպեսզի հնարավոր լինի Ջերմուկի հանքային ջուրը գյուղին օգտագործել, անհրաժեշտ է եղել կանոնավորել հաղորդակցությունը: Տարիներ առաջ սկսվել է մեծ աշխատանք Ջերմուկի խճուղու վրա: Նա սկսում է Արևնի գյուղից և գետն ի վեր բարձրանում մինչև Ջերմուկ: Բայց ինչ հսկայական աշխատանք է կատարված այդ ճանապարհի վրա, որքան քարածայրեր և այլ խոշորություններ են խոնարհվել մարդկային ուժի առաջ: Ուղղակի հրաշք է կատար-

ված Գնդավազի նեղ ձորում, ուր ուրապտույտ, կարկաշտն Արփաշայի կողքի ժայռերը խոնարհվել են մարդու հուժկու հարվածների տակ և ճանապարհ բաց արել։ Անդնդախոր այդ ձորի միջով այսօր ախտոմեքները հոգեւոր սուղոցը խառնելով Ար-

եմ համարում Ջերմուկի անցյալն ու ներկան համեմատել իրար, որովհետեւ անցյալում այստեղ ոչինչ չի եղել։ Բայց Ջերմուկի օրինակով ցանկանում եմ համեմատել ներկու աշխարհները՝ ամերիկյան գաղութարարների գլխավորած կռվի աշխարհը և



Ջերմուկի ջրվեժը

իալայի կարկաշտն, գետին զուգընթաց, բլորապտույտ բարձրանում են դեպի Ջերմուկ, ասֆալտապատ խճուղու վրայից։

Ես, 84-ամյա ծերունիս, Ջերմուկում մնացի մոտ մի ամիս։ Այնտեղ ես տեսա մարդկային այն հրաշքներն ու հրաշալիքները, որ կատարված են և կամ կատարվելու են թացքի մեջ են գտնվում։ Ես անհարմար

սովետական խաղաղության աշխարհը։ Ջերմուկն իր կառուցումներով, իր նպատակով, աշխատավոր մասսայի նկատմամբ հարազատ կառավարության ցուցաբերած հոգատարությամբ սովետական խաղաղ աշխատանքը ցուցանշող ցայտուն ապացույցն է։

ԿԱՐԾԻՔՆԵՐ ԶԵՐՄՈՒԿԻ ՄԱՍԻՆ

Պրոֆեսոր Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՍՏՄ Բժշկական գիտությունների
ակադեմիայի և Հայկական ՍՍՌ
Գիտությունների ակադեմիայի
իսկական անդամ

ԶԵՐՄՈՒԿ ԿՈՒՐՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայաստանը հազվագյուտ քաղնեոս-տուրաներով հարուստ երկիր է: Նրա տե-րիտորիայում արժանազորված են շուրջ 200 վայր:

Սովետական Միության քաղաքիկ արժե-քավոր, իրենց հասկացություններով ունիկալ հանքային ջրերի շարքին են պատկանում Զերմուկի աղբյուրները: Իրենց ֆիզիկո-քի-միական հատկություններով Զերմուկի աղ-բյուրներին ամենից ավելի նման են լեխոս-յովակյան Կարլովի Վարի կուրորտի աղ-բյուրները, որոնք համաշխարհային հռչակ են վայելում:

Հանքային ջրերի 36 րնական փոքր ակունքներից բացի, Զերմուկում բացվել են հզոր շատրվաններ, որոնք կուրորտն ապա-հովում են հիդրոհանքային հսկայական բա-զայով: Կուրորտում աշխատում է հանքային ջրերի գործարանը, որը ամեն տարի տալիս է մոտ 3.000.000 շիշ հանքային ջուր:

Զերմուկում կա նաև բուժիչ ցեխ, որն առայժմ քիչ շահով է օգտագործվում:

Կառուցվող Զերմուկ կուրորտը գտնվում է իր բուն զարգացման ստադիայում: Ներ-կայումս նա ամեն տարի սպասարկում է 1.300 սանատորիական հիվանդների, ամ-բողատոր բուժման կուրս են անցնում ավե-րի քան 500 մարդ:

Այստեղ ավարտվում է խմելու ջրի գալե-րիայի շինարարությունը, կառուցվում են մի շարք նոր սանատորիաներ, հյուրանոց, կա-թի գործարան, սառնարանային տնտեսու-թյուն, մի շարք բնակելի ուլ տներ, ավարտ-վում են 40 կաթին ունեցող վանանների և պոլիկլինիկայի նոր շենքի կառուցման նա-խապատրաստական աշխատանքները: Այդ պոլիկլինիկան ունենալու է բոլոր մասնա-դիտությունների կաթինետներ:

Գրվում է 18 հեկտար տարածությամբ փշատերև և սաղարթավոր ծառերի զբոսայ-դի: Կուրորտի զարգացման 15-ամյա պլանա-վոր պլանի համաձայն սանատորիական մահճակալների թիվը հասցվելու է 2.000-ի, իսկ մահճակալային ֆոնդը պանսիոնատի դժով՝ 1.200-ի:

Զերմուկի հանքային ջրերը առաջին հեր-թին խմելու-բուժիչ ջրեր են, ուստի ամբողջ երկրում այդ ջուրը լայնորեն արտահանելու համար պայմանների ստեղծումը հանդիսա-նում է կուրորտի զարգացման առաջնահերթ խնդիրներից մեկը: Գլխավոր պլանի համա-ձայն այստեղ կառուցվում է նոր գործարան, որը տարեկան տալու է 10.000.000 շիշ հանքային ջուր:

Վ. Գ. ԴԻՈ

ՍՍՏՄ Առողջապահության
մինիստրության Կուրորտային
կենտրոնական ինստիտուտի
պրոֆեսոր

ԱՆՃԱՆԱԶԵԼՈՐԵՆ ՓՈԽՎԵԼ Է ԶԵՐՄՈՒԿԸ

Քսան տարի առաջ, 1932 թվականի հոկ-տեմբերին, մենք Հայաստանի գիտական աշխատողների և երկրի բժշկական մի շարք խոշոր գիտական ինստիտուտների աշխա-տակիցների խմբի հետ առաջին անգամ Նախա Զերմուկում՝ նրա հանքային աղ-բյուրներին ծանոթանալու նպատակով:

Այն ժամանակ Զերմուկը մի ամալի վայր էր: Արփա գետը եզերող լեռների լանջերին բարձրանում էին հանքային տաք ջրերի

ակունքների գոլորշիները: Այստեղ փորված էր մի քանի փոս, ուր առվակներով աղ-բյուրներից հոսում էր տաք ջուրը: Այդ վանաններում, որի նառաջալիներին պաշտպանվելով չոր ձյուլներից պատրաստ-ված տաղավարների տակ, իրենց ուզածին պես, առանց բժշկական որևէ հսկողության, բուժվում էին շրջակա գյուղերի բնակիչները և բուժիչ անասնապահները:

Մի քանի տարի հետո, երբ ինձ բախտ լիճակվեց երկրորդ անգամ լինել Ջերմուկում, այստեղ նշանակալից փոփոխություններ էին կատարվել: Գուրդշիններ սփռող հանքային ջրերի մասը ակունքները լքացել էին, քանի որ 54 աստիճան տաքություն ունեցող հանքային ջուրը խփում էր նոր քաղված հորատանցքի միջով: Նրա կողքին երկվան էր եկել բնակելի մի բարակ և մի ուրիշ շենք՝ պրիմիտիվ վաննայով, ուր հոսում էր ջուրը քաղված հորատանցքից:

Գետի ափին բարձրանում էր վաննայի շենքի կուրպուսը, որի շինարարությունը դեռ չէր ավարտված: Հանդիպակաց ափի բարձր ու ընդարձակ սարահարթի վրա կառուցվում

էր սանատորիական առաջին կուրպուսը: Մնումը էր առնում ապագա կուրորտը:

Միանգամայն այլ պատկեր է ներկայացնում Ջերմուկն այսօր, նրբամանի ամայի սահարաթում մենք եռուն շինարարություն տեսանք: Կուրորտի տերիտորիան ողողված է էլեկտրական լույսով, գործում են մի շարք սանատորիական հիմնարկներ: Բուռն թափով աշխատում է հանքային ջրերի գործարանը: Ջերմուկի ջուրը ունիկալ է, նրա հազվագյուտ քիմիական բաղադրությունը, բարձր ջերմաստիճանը և մեծ դեֆիտը, վայրի բարձր լեռնային կլիման, բուժիչ ցեխերի առկայությունը, Ջերմուկը դասում են բացառիկ կարևոր կուրորտների շարքը և այն բոլոր հեռանկարներն ունի դառնալու առաջնակարգ կուրորտ:

Պրոֆեսոր Ա. Ա. ԼՈՋԻՆՍԿԻ

Ռժշկական գիտությունների դոկտոր

ՄԵՆ ԱՊԱԳԱ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՒՐՈՐՏԸ

Ջերմուկ կուրորտին նվիրված սեսիան, որ անցավ դիտական բարձր մակարդակով, և անձնական այն տպավորությունները, որ մենք ստացանք Ջերմուկի բալնոլոգիական և կլիմայական գործոններին ծանոթանալիս, ինձ այն որոշակի կարծիքին բերին, որ այդ կուրորտը բոլոր տվյալներն ունի ոչ միայն Հայաստանի, այլև մեր ամբողջ Միության առաջնակարգ կուրորտներից մեկը դառնալու համար:

Ջերմուկի բուռն զարգացումը Պանդիսանում է աշխատավորների առողջության նկատմամբ Պարտիայի և Կառավարության հոգատարության վառ ապացույցը:

Երևանում կայացած սեսիայում մենք լսեցինք շատ հետաքրքրական զեկուցումներ Լքսպերիմենտալ և կլինիկական այն ուսումնասիրությունների մասին, որոնք համադիր կերպով ապացուցում են աշխատավորների առողջության վերականգնման գործում Ջերմուկի բուժիչ հատկությունների կարևոր նշանակությունը:

Ինձ վրա լավ տպավորություն թողեց սեսիային Հայաստանի խոշոր գիտնականների մասնակցությունը, որոնք արժեքավոր ա-

վանդ են մտցրել Ջերմուկի կուրորտային գործոնների ազդեցության մեխանիզմը պարզելու գործում, և այն, որ լսարանը լեփ-լեցուն էր երիտասարդ բժիշկներով: Կուրորտային հարցերի նկատմամբ դիտական կադրերի այդ աճող հետաքրքրությունը լավագույն երաշխիք է Ջերմուկի կուրորտի, ինչպես նաև Հայաստանի և ամբողջ Միության մյուս կուրորտների հետագա զարգացման համար:

Ինքնին հասկանալի է, որ Ջերմուկի, ինչպես և ամեն մի այլ կուրորտի ճիշտ զարգացման համար անհրաժեշտ է, որ այն գործի ամբողջ տարին, Ըստ որում տարվա առանձին սեզոնների համար հետզհետե պետք է մշակվեն հատուկ, ավելի ճշգրտված ցուցումներ:

Վերջում ես պետք է ասեմ, որ Ջերմուկ կուրորտի բուժիչ միջոցներին, Ջերմուկում և նրա շրջակայքում բնության գեղեցկություններին իմ անձնական ծանոթացումը հնարավորություն տվեց խոստովանելու, որ այն ամենը, ինչ ես տեսա, զգալիորեն գերազանցում է այդ բացառիկ արժեքավոր կուրորտի մասին դրականության տվյալների վրա հիմնված իմ պատկերացումը:

Վ. Գ. ԳՈԳԻԴԵԳԱՇՎԻԼԻ

Բձեկական դիտարկումների քնննածո,
Վրացական ՍՍՌ Կուրորտոլոգիայի
և ֆիզիոթերապիայի պետական
դիտարկողական ինստիտուտի
դիրեկտոր

ԱՄՐԱՊՆԴԵԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մենք, Վրաստանի քաղնեղություններս, անչափ
ուրախ ենք, որ մասնակցեցինք Ջերմուկ
հիանալի կուրորտին նվիրված սեսիային:

Հայաստանի ահա՛նավոր գիտնականների
և փրկասարդ դիտական աշխատողների հե-
ղինակավոր զեկուցումներից մեզ համար
ավելին դարձավ, որ Ջերմուկի հանքային
ջուրը չափազանց նպաստավոր թերապևտիկ
էֆեկտ է տալիս ստումոքայա-աղիքային
տրակտի, պերիֆերիկ ներվային սխտեմի,
հենման և շարժման ապարատի ու հանանց
հիվանդությունների բուժման ժամանակ:

Մեզ առանձնապես հետաքրքրեց Ջերմու-
կի կուրորտային կոմպլեքսի նպաստավոր
ներգործությունը սիրտ-անոթային սխտեմի
վրա, քանի որ, ըստ գիտնականների նախկին
հայացքների, ծովի մակերևույթից 2.000
մետրից ավելի բարձրությունը, ուր գտնվում է
Ջերմուկը, այդ կատեղորիայի հիվանդների
համար հանձնարարելի չէր համարվում:


Մեզ համար ուշագրավ է աշխարհագրա-
կան գիտությունների թեկնածու Ա. Ներսիս-
յանի հետաքրքրական զեկուցումը՝ ձմռանը
դործելու համար կուրորտի կլիմայական
նպաստավոր պայմանների մասին:

Նպատակահարմար է, որ հետազոտում
Ջերմուկ կուրորտի ուսումնասիրությունը
կատարվի Ադրբեջանի կուրորտոլոգիայի
ինստիտուտի հետ համատեղ, որովհետև
Ադրբեջանում կա Իստի-Սու կուրորտը, որի
չորսը իրենց բաղադրություններով նման են
Ջերմուկի հանքային ջրերին:

Ջերմուկ կուրորտը իր բարձր լեռնային կլի-
մայական դործունեությամբ, բավական մեծ
դեպիս ունեցող բուժիչ հանքային ջրով և
շինարարության համար ընդարձակ սարա-
հարթով բոլոր տվյալներն ունի հետազա-
ղարգացման համար, համամիտվածական
նշանակության առաջնակարգ կուրորտ դա-
նալու համար:

Մենք, եղբայրական ռեսպուբլիկաների
բժշկական աշխատողներս, առաջիկայում ևս
պետք է ամրապնդենք մեր փոխադարձ
կապն ու համագործակցությունը: Դա մեզ
կօզնի լուծելու գիտական նոր պրոբլեմներ,
որոնք ուղղված են սովետական ժողովրդի
բարօրությանը, է՛լ ավելի ամրապնդելու ժո-
ղովուրդների բարեկամությունը:





ԵՂԻՎԱՐԴ

Ս Ե Վ Ա Ն

Սեա՛նն ահա,
Իրկինքին դեմ՝ արցունքով լի
Աչքն երբեմնի,
Իդէն ասմազուն, երազն հալած,
Ժողովուրդիս բազմահալած,
Իրակներեն՝ որոնք դարեր
Բյուրեղներու վերածեցին
Սիրտերը մեր,
Ու դաշտերեն հոսեցուցին,
Մութի փոխան, կարմիր հեղեղ:

Սեա՛նն ահա,
Արցունքն անհուն,
Հերոսներուն ու սուրբերուն,
Հողին որոնց—ճարձակ թռչուն,—
Թառած հպարտ վատարներուն
Մեր լեռներուն,
Կմրմնջե դեռ անդադրում
Այլքներուն հետ ծովակին
Իրզ դարձած վերքն հին օրերուն:

Սեա՛նն ահա,
Կողքին ազվոր,
Կապած իրեն գոտի կախարդ՝
Լույս ու կապույտ,
Հսկաներու շարքն շուրջի,
Ջատված, ինկած ծոցը ջուրին,
Լիճեն ժայթքած հողի լանջքին,
Երազ մինչպէս խոր ու ահեղ՝
Ջույգ մատուռներ,
Միևեկաքներ կարծես ձրկու,
Արձանացած՝
Տեսիլի մեջ վերասլաց,
Կամ ունկնդիր՝ հորիզոնին մեր լեռներուն,
Լսելու ձայնն Անոր, որուն
Որ մը բացինք մեր հուլան ու սերն
Ու մեր հողին:

Ափիդ կեցած, լիճ հայրենի,
Լուռ կրացվիմ
Տրտիներուն սիրտիդ դմրուխտ,
Ու կթվի թն կշարժին
Ալիք ալիք, շրթներդ անհուն,
Ավարտելու
Տխուր հեքիաթն հին օրերուն:
Ու անայիմ աչքով անկուշտ՝
Փարերուն սուրբ,
Իրկինքին դեմ իրեն ազնիւր,
Ու կարթննան հոգիս մեջ
Հազար տրտի ու խռի ու հույզ,
Որոնք ալիւս մեր օրերուն
Դարձեր են մութ հիշատակներ
Անցելահույզ:

Արեն անույշ հայրենական,
Մեղր ու հեշտանք կթափե վար:
Լիճն է խաղաղ,
Երազեն նոր զարթնած կույսի
Աչքերու պես:
Իր լույս ծոցին կողողղայ
Նազակ մաղվոր,
Նման անոր՝
Որ քայտեր էր մեր հողին
Որպէս երազ,
Եվ զոր մեկնած կկարծեինք
Անվերադարձ:

Սեա՛նն ահա,
Կյանքի, լույսի նոր շատրվան,
Արագածի վատարներուն՝
Դարեր վառող
Լուսավորչի լույսին փոխան:

Սեա՛նն ահա,
Ուժի, փառքի համբողջ անհուն,
Լիճաթ ծնծղու,
Եվ Հրազդանն՝
Իրմն վաղող երզն ադամունդ,

Մեր դաշտերուն ու սիրտերուն
Վերև ալիք ալիք բացվող
Խնդության շող:

Սևանն ահա,
Զերթ հայելի կախարդական,
Որուն ափին, աշխարհն Հայոց,
Ուժած վերքերն իր դարավոր,
Կոխտե դեմքն իր թարմացող,
Ամեն օր նոր,
Բլուպեղին մեջ ալիքներուն,

Թարթիչներու՝
Դեղին փողին օտարության,
Ու տաքերու՝ հալած կապար,
Բայց աչքերու՝ երազ մը վառ,
Կդիտեմ քեզ ազահարար:

Լի՛ճ հայրենի,
Լաբին վրա իմ օրերուս
Չեմ գիտեր ես
Փանի՝ ցավոս տարիներ դեռ,



Ս և ա ն


Նկար՝ Աղավնի Մեսրոպյանի

Նման կարծես
Պատանիին ավանդության,
Պատկերն ուրուն — ճեյմուկ շուշան,
Վետերն ի վար վազող ջուրին,
Միշտ կազմվորնար,
Կերպանար:

Սևան՝ Սևան՝,
Ափսե ակատ՝
Արյունին դեմ վերջալուսին,
Լեռները մինչ կղզիունին
Կոհակ, կոհակ,
Եղարշներու ներքև լեռակ,
Ափիդ կեցած,
Համակ խոռվք, համակ արյուն,

Քեզմն հեռու
Պիտի շարեն շուքերն իրենց...
Նախազգացում, ախ, շարանհնդ,
Ոթն գոցվին աչերս կարոտ
Վերջալուսի մ'ալսպես շքեզ,
Օտար աստղի մը լույսին տակ,
Պատկերդ անուշ
— Կտոր մ'երկինք՝ լեռան գիրկին,—
Պիտի մնա հոգիիս մեջ,
Մարգրիտն ինչպես սատափաշող՝
Շիթ մը իբրև արեգնալին,
Մոայլ ծոցին մեջ ոստրեին:

(«Անն» ամսագիր, Ռևուր,
1952 թ., № 4—5)





ԵՐԵՎԱՆՅԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ¹

3. ԵՐԵՎԱՆԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԸ

Իմ առանձին ուշադրությունն են դրավել Երևանի հայոց եկեղեցիները: Ես ամեն օր տեսնում եմ իմ լուսամուտից նրանց բարձր զմբեթներն իրենց քառաթև խաչերով:

Ըստ Բորոս քահանա Մաճառյանի, որը պաշտոնավարում է Կոնդի սարահարթի վրա կառուցված Ս. Հովհաննես եկեղեցում, հաճապագորյա ժամերգությունները Երևանի փկեղեցիներում տեղի են ունենում ճշտությամբ հորեն և քրիստոնյա տղամարդիկ ու կանայք ազատորեն կատարում են իրենց հավատքի պաշտամունքը:

Սովետական Միությունում 1917 թվականի դեկտեմբերի 19-ի և 20-ի (հին տոմարով) հրամանագրերով սահմանվել է քաղաքացիական ամուսնություն, իսկ 1918 թվականի հունվարի 21-ի (հին տոմարով փետրվարի 3-ի) հրամանագրով, եկեղեցին բաժանվել է պետությունից և դպրոցը՝ ակեղեցուց: Կրոնը և եկեղեցին հայտարարվել են քաղաքացիների մասնավոր գործը:

Այդ հրամանագրերի հիման վրա, ուրեմն, պարտադիր է քաղաքացիական ամուսնությունը և նորաժինների արձանագրումը՝ պետական հատուկ տոմարի մեջ: Եթե ամուսնացողների ու նորաժինների ծնողները ցանկանան, ազատ են կրոնական համապատասխան ծիսակատարություններ վրավարարել իրենց այդ ցանկությունը:

Ես, ժամանակ առ ժամանակ, բազմա-

մարդ պողոտաների վրա շրջելիս կամ տրամվայի մեջ ճանապարհորդելիս, հաճախակի հանդիպում եմ քահանաների, որոնց մեջ՝ արտասահմանից ներդադթած Բորոս քահանա Մաճառյանին, Վարդան քահանա Վարդերեսյանին, Հայկաի Գուրգեն քահանա Հաճեթյանին (միջանկյալ նշեմ, որ բողոքականներն էլ ունեն իրենց ժողովատունը) և ուրիշներին, որոնց արտաքին կերպարանքը՝ մորուսով ու սքեմով, իր ամենսպիտքը մանրամասնություններ մեջ նույնն է, ինչ սր էր արտասահմանում: Նրանք ֆիզիկապես ավելի առողջ են ու ավելի կայուն, քան էին արտասահմանում (հայրենադարձ Գրիգոր քահանա Տեղ-Գեորգյանը վախճանվել է, Սանջարում և Բելյուսթում իր արդեն իսկ ունեցած ստամոքսի հիվանդությունից):

Նլենելով այս բացահայտ իրողություններից, ես ծիծաղում եմ կաթոլիկ Վատիկանի կամակատար, սևասիրտ ժողովուրդ տները Աղաքանյանին, որը Բելյուսթում, Աշրաֆիեի իր ապարանքում, ժողովական թղթերն է մրտադրում, հավատացնելու միամիտներին, որ իրր ճշայաստանում կրոնն ու կրոնականները հալածվում են», ժողովրդից թաքցնելով այն իրողությունը, որ սովետական երկրում միանգամայն ազատ է խղճի ազատությունը և յուրաքանչյուր ոք կարող է ազատ պաշտել այս կամ այն կրոնը:

4. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սովետական մարդկանց հատուկ պարտականությունն դիտակից լրջությունն ու հոգեկան վեհությունն են մոտից նկատեցի նաև

ժողովրդական դատավորների ընտրության ժամանակ:

Ընտրությունների շրջալի օրը, վաղ առավոտյան, մայրաքաղաքի կարական և իրական սեփին պատկանող ողջ ընտրողներն

¹ Ընտրականված ամսագրի 1952 թվականի հուլիսի համարից:

եռուզեւի մեջ էին: Յուրաքանչյուր ընտրողի դեմքի վրա նկատվում էր հպարտութիւն, որը ծնվում է քաղաքացիական գերազանց պարտականութիւնը կատարելու գիտակցութիւնից:

Ժողովուրդն ինքն էր ընտրում իր դատավորներին:

Անքնադատելի կարգ ու կանոն էր տիրում ընտրական գրասենյակներում, յուրաքանչյուր ընտրող տալիս էր իր ազատ և անկաշկանդ ձայնը՝ իր հարմար դատած ժողովրդական թեկնածուներին:

Ի տես սովետական ընտրողների պարտականութիւն գիտակից լըրջութիւն և հոգեկան վեհութիւն, երջանիկ էի զգում ևս ինձ, որ աղատվել էի արտասահմանում կատարված այսպես կոչված «ընտրական պայքարների իրազրութիւններին»:

Այնտեղ, արտասահմանում, օրինակ Թուրքիայում, Սիրիայում կամ Լիբանանում, ժողովրդի և աշխատավորների պաշտպան

մարդկանց փոխարեն մեծ մասամբ ընտրվում են այնպիսի մարդիկ, որոնց հասարակ ժողովուրդը չի ցանկանում քվե տալ, ուստի և գործի են լծվում դրամը, սուտ խոստումները, սպառնալիքը, ռենիքը, ի վերջո... զինյալ սասիկանութիւնը՝ ժանտարմերիան: Եվ հաճախ անմեղ ժողովրդի արյունը հոսում է ընտրական գրասենյակների առջև: Սրա հետեանքը լինում է այն, որ ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների 80 տոկոսը հեռու է մնում կամ ձևականորեն մասնակցում ընտրութիւններին:

Միջանկյալ նշեմ, որ արտասահմանում դատավորները նշանակվում են իշխանութիւն կողմից և ո՛չ թե ընտրվում ուղղակի ժողովրդի ձայնով: Եվ այդ է պատճառը, որ ժողովուրդը չի հարգում և չի սիրում նրանց: Իսկ արտասահմանի կանայք ընդհանրապես զրկված են ամեն տեսակ ընտրութիւնների մասնակցելու իրավունքից:

5. ԱՏԵՂՄԱԳՈՐԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԵՐԳԸ

Ձի կարելի չհիշանալ շինարարական աշխատանքների հզոր թափի վրա, որն ի դորձ են դնում մայրաքաղաքի աշխատավորները, անթերի դուրս հանելու համար վերջերս Աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային Սովետի կողմից քննարկված և հաստատված Երևանի վեկապառուցման և դարգացման 15-ամյա պլանը:

Այստեղ վարպետ քարտաշների մուրճերի պարկերի տակ ընտրության գեղեցկութիւնները՝ ծաղիկները, պտուղները, թռչունները, եղջերիք զարդաքանդակների և խոյակների են վերածվում հանքից պոկված բազմազուն և յազմաձև տուֆ քարերի վրա: Ամենուրեք բազմահարկ նորակառույցների ամուր պատերը հեքիաթային աճով են բարձրանում վարպետ որմնագիրների ձեռքերի տակ, որովհետեւ մեքենան վերելակի միջոցով արագորեն բարձրացնում է հարկավոր նյութերը՝ քարը, շաղախը, երկաթը, ատաղձը և այլն: Վիթիարի էքսկավատորը (հողագործ մեքենան), տասնյակ փղերի ուժից ավելի զորավոր իր կնճիթով, համարյա մի ակնթարթում քանդում է հնամենի շենքերի պատերը և տեղ պատրաստում նոր կառուցվելիք մի կոթողական հիմնարկի:

Վերանորոգվում, ծառայատվում, էրեկտորակա լամպեր կրող սյուներով են զարդարվում պողոտաներն ու փողոցները, որոնց վրա ամեն տեղ որպես առողջապահութիւն նախապայման տիրապետում է մաքրութիւնը:

Օրեցօր գեղեցկանում են գրոսայգիները,

որտեղ զբոսնում են մանկապարտեզների առույգ երեխաներն իրենց աւսուղչուհիների մայրական հոգածութիւն և հսկողութիւն ներքո, մինչ ծերունի պապիկներ ու մամիկներ հանգստանում են սաղարթախիտ ծառերի հովասուն սովերների տակ, ափսոսալով անշուշտ իրենց կյանքի մնացած տարիների կարճութիւնը: Ինչե՛ր չպիտի տալին նրանք այն դիտնական լուծիկին, որը պիտի հաջողվեր գտնել կյանքի երկարացման շիճուղը...

Սակայն, այդ բոլոր գրոսայգիների զլխին կանգնելու է Միծեռնակաքերդի 30 հեկտար տարածութիւն բռնող կուտուրայի և հանգստի այգին, որն ունենալու է սեփական ֆիզկուլտուրայի (մարմնակրթանքի) ինստիտուտ, հանրակացարան, գրադարան, ստադիոն, լողարան, ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի և թենիսի դաշտեր:

Երանից ոչ շատ հեռու ժամանակամիջոցում, նախքան մազգիշ մեքենաների (էսկավատորների) կառուցումը, մի պատկառազու կամուրջ արդեն անհետացնում է Միծեռնակաքերդի դժվարամատչելիութիւնը:

Ահա այսպես, Երևանի յուրաքանչյուր թաղամասում, յուրաքանչյուր անկյունում, փողոց և ծանրութիւն քարձրացնող մեքենաներից, քարտաշների մուրճերից, հարստադորձ որմնագիրների ձեռքերից և ժիր ու հաստատակամ աշխատավորների շրթներից քարձրացող ստեղծագործ աշխատանքի բաղդը համերդն է սավառնում մթնոլորտի մեջ:

Ա. ԵՐԵՎԱՆԸ ՄԻ ՀՍԿԱ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ Է

Ես այցելել եմ Պետական մատենադարանի, Թանգարանի, Համալսարանի և Ակադեմիայի հոյակապ շենքերը և սքանչացել համալսարանականների և դիտականների կատարած գնահատելի աշխատանքի վրա, ուսումնական աշխարհ են բերվում անցյալ ժամանակաշրջանների թաքուն մնացած արժեքները և լուծվում բնութագրի ծոցում մինչև այժմ անլուծելի նկատված գիտական հարցերը:

Պահպանվում ունենալով եմ աստղաբաշխական մի շատ հետաքրքիր դասախոսություն և համալինել եմ այն մեթոդից, որով դասախոսը բացատրում է և հատուկ մոլորակացույց դործիքով ցուցադրում Արեւը, Լուսինը, երկիրը, մոլորակները, աստղերը, Միջկաթինը, նրանց փոխհարաբերություններն ու շարժումները, վերջապես ու արշալույսը:

Իմ հիացմունքը նվազ չի եղել նրանից պողոտաների և փողոցների վրա շրջելու:



Մի տեսարան Արժվյան փողոցից

Ես ներկա եմ եղել Ալեքսանդր Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր ու պերալի և բալետի Պետական թատրոնի և Կարրիել Սունդուկյանի անվան դրամատիկ թատրոնի ներկայացումներին և հիացել արտիստների ցուցադրած արվեստի կատարելություն վրա:

Ես մասնակցել եմ համաշխարհային վսահադուության պաշտպանության ի նպաստ կազմակերպված բանվորական միտինգներին և զմայլվել աշխատավորներով, որոնք երգվում էին անբով աշխատանքով էլ ավելի ամրապնդել խաղաղության գործը:

Գիտա-լուսավորական թանգարանի մի

տեսնելով երկսեռ երեխաներին, պատանիներին ու երիտասարդներին, որոնք զվարթադեմ դպրոց են դնում կամ դպրոցից վերադառնում:

Բացի բազմահազար ուսանողներից, աշխատանքի վաղը փութացող աշխատավորներն ու շուկայում վաճառորդներն ու գնորդներն անդամ, ընթերցումով զարդանալու համար, պոքեր ու թերթեր ունեն իրենց ձեռքերում:

Այս բոլոր գեղեցիկ իրողություններին ի տես, ի նշան լիզճահարվել միջինի և Լիբանանի աշխատավորների այն բազմաթիվ մանուկներին, պատանիներին և երիտա-

ուարժանքներն, որոնց կյանքը լրիվ անցնում է բեռնակրությամբ ու ծառայությանը, առանց ճաշակելու ուսման ու գիտության բարիքները:

Անկասկած, երևանը մի հսկա ուսումնարան է:

Եվ ամեն անգամ երբ շրջում եմ պողո-

տաների վրա և տեսնում երիտասարդ սղաններից և աղջիկներից յաղկացած ուսանողական խմբերի ինքնավստահ բալլվածքը, փառք եմ տալիս Հոկտեմբերյան Մեծ ռեւոլուցիային և մրմնջում ինքս ինձ:

— Հազար տարեկ հոկտեմբերյան նոր սերնդին:

7. ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՂՋԿԱՆՑ ԱՐԴՈՒՋԱՐԿԸ

Երևանի պողոտաների վրա, շուկաներում, զբոսաշրջներում, թաղամասերում ման գալիս, չեմ կարող զսպել իմ փիծաղը արտասահմանյան այն անակզրունք և անտոհմ արգահատելիների մասին, որոնք ամերիկյան դոլարի և անգլիական ստերլինգի սիրույն, կտրցրած խիղճ ու բանականություն, զրպարտում են սովետական կենցաղը, աշխատում են վարկաբեկել Սովետական Միությանն ու Սովետական Հայաստանը:

Նրանց՝ արտասահմանյան զրպարտիչների ասելով, ինչպես առհասարակ ամբողջ Սովետական Միությունում, նույնպես և մանապես Երևանում Սովետական Հայաստանում, իբր թե կանայք և աղջիկներ ընդմիշտ զբոկվել են ամեն տեսակ երգած և արդուզարդից: Ժամարտությունը, սակայն, բացարձակապես դրա հակառակն է ապացուցում:

Ստալինյան, Լենինի, Արտվյան, Նալբանդյան, Բաղրամյան և մյուս բոլոր պողոտաների վրա ման եկող ամենապաշտարար օտարականն անգամ ստիպված է խոստովանել, որ հայ կանայք ու աղջիկներն ավելի նորաձև ու բարձե և են զուգվում, ավելի կոկիկ և գեղեցիկ են հագնվում, քան, զրինակ, Քեյրուքի, Հալեպի ու Դամասկոսի ժովրդականացած կանայք ու աղջիկները:

Ստալինյան գլխավոր պողոտայի վրա կան կանանց սալոններ, որտեղ մասնագետ կին վարսավիրաներ ամենավերջին նորաձևությամբ հարդարում են ու գանգրում կանանց և աղջկանց վարսերը, մանիկյուրում եղունգները, աչքպես որ արտասահմանյան ամենահիրաճողակ և զժվարահաճ պրուհի-

ներն անգամ սիրով պիտի ուզենային մըշտական հաճախորդները դառնալ մեր Եկանանց սալոններին: Մի տարբերությամբ, սակայն:

Մինչդեռ արտասահմանյան կանանցից ու աղջկանցից ոմանք, տղամարդկանց նման վելու և հավասարվելու ունայնամոտություն, թալա կարսոն (տղամարդկանց ձևով) խողել են տալիս իրենց մազերը, աչսուեղ, սովետական աշխարհում, նրկայն մազերը պատիվ են համարվում. խարտաշ, սե, դեղնավուն մազեր, որոնք խապուպներով հեղեղվում, գանգուրվում, հյուսվում ու հանդուցվում են դիմների վրա:

Բացի կարի գործարաններից, դուք կհանդիպեք նորաձևության արհեստանոցների՝ օտտելյե մոդեբրի, որոնք արանց և կանանց համար, տարվա շորս եղանակների հարմար հագուստներ են կարում բամբակեղեն, բըրդեղեն ամեն տեսակ կերպասներով: Սակայն, այն տարբերությամբ դարձյալ, որ դուք, որեւէ ժամանակ և ո՛չ մի տեղ չեք կարող հանգիպել այնպիսի կանանց և տղամարդկանց, որոնք, արտասահմանյան երկրներում, հանուն նորաձևության, հավերժացնում են անպարկեշտությունը, իրենց դալթակեղեցուցիչ արտաքինով, ալլանդակ հագուստ-կապուստով: Այդ անպարկեշտ զվեստավորման դեմ ի՛նչ պայքարներ չեն մղվել, ի՛նչ քարոզներ չեն խոսվել և ի՛նչ կոնդակներ չեն կարգացվել եկեղեցիների և մզկիթների բնմերից Միջին-Արևելյան երկրների քրիստոնյա և իսլամ կրոնավորների վողմից. բայց այդ բոլորը ապարդյուն են տեսել:

8. ՈՍԿԵՂԵՆ, ԱՐԾԱԹԵՂԵՆ ԵՎ ԱԴԱՄԱՆԴԵՂԵՆ, ԶԱՐԴԵՐ

Սովետական Միության և Սովետական Հայաստանի հակառակորդները, արտասահմանում, շարաշահում են կանանց և աղջկանց միամտությունը, լավ էս է ասել պըճ-

նասիրությունը, նրանց միջև պրոպագանդելով, որ սովետական կանայք և աղջիկները կվել են ոսկեղեն, արծաթեղեն և ազամանեղեղեն դարդեր կրելու հաճույքից:

Արտասահմանի այն կիսը, որը դյուրահա-
վատությամբ հավատացել է այդ զրպար-
տություններին, եթե անցներ միայն Արավ-
յան փողոցով ու տեսներ ոսկերչական ար-
հեստանոցների ապակեփեղկերում ցուցա-
դրված ու վաճառքի հանված ակնեղեն, ար-
հաթեղեն և աղամանեղեններ, զարդեղենների
ձոխությունն ու արվեստի նրբությունը, ինչ-
պես նաև երթևեկող կանանց և աղջկանց
արդուզարդերի բարձր ճաշակը, լիահագաթ
պիտի ձիթաղեք զրպարտիչների վրա:

տանդուպուսի և Տրապիզոնի ի հնումն համ-
բավյալ ոսկերիչները:

Հայ ոսկերիչներն այժմ ավելի մեծ վար-
պետությամբ են կիրառում իրենց արվեստը
Նրեանում, հատուկ արհեստանոցներում, այն
տարբերությամբ, որ մինչ Կոստանդնուպու-
սի ոսկերիչների կիրառած մոտիվների վրա
տիրապետում էին առավելապես «Լուդովի-
կոս 15-րդ» և «Լուդովիկոս 16-րդ» անունով
ծանոթ ոճերը, Նրեանի ոսկերիչներն ունեն
յուրահատուկ հայկական ոճ, ոչ միայն հին



Մի տեսարան Բաղրամյան սյուղուտայից

նս առիթ եմ ունեցել ժամերով կանգ առ-
նելու Նրեանի ոսկերչական արհեստանոց-
ների ցուցափեղկերի առաջ և ի սրտի հիա-
ցել հայ ոսկերիչների պատրաստած ոսկե-
ղեն ու արծաթեղեն բարձրարվեստ առաք-
կանների՝ աղարանքանների, ռդերի, մանյակ-
ների, թևի ու կրծքի կոճակների, զարդա-
սեղանների, բրուշների, ձխատուփերի, ձխա-
փողերի, հարսանեկան արկղիկների, շա-
քարամանների, սրճամանների, ամսենների,
ծաղկամանների և թեյի զդայների վրա, ո-
րոնց զեղեցկության պիտի նախանձեին Կոս-

հայկական ոճի նման, այլ նաև վերցրած
արդի իրական կյանքի առօրյայից, նվ ար-
ձանագրենք միանգամայն, որ Նրեանի հան-
րաճանաչ վանեցի ոսկերիչների միջև քիչ չէ
արտասահմանից՝ Նդիպուսից, Սիրիայից ու
Լիբանանից հայրենադարձ ոսկերիչների թի-
վը:

Կանանց ու աղջկանց արդուզարդերի շար-
քում, կարևոր տեղ է դրավում թևի ժամա-
ցույցը: Արդարև, առանց չափազանցություն
կարելի է ասել, որ ո՛չ մեկ երկրում ժամա-
ցույցի գործածությունն այնքան ընդհան-

րացած չէ եղել, որքան մեր երկրում, Աղջիկ ու տղա դպրոցականներն անգամ, իրենց դաստակների վրա կրում են նորաճաշակ ժամացույցներ, որոնց այսքան առատությունը խոսում փաստը չէ՝ միթե այն իրողության, որ սովետական մեր երկրի մարդիկ ավելի լավ են զնահատում ժամանակի հարգը, ավելի ճշտապահ են իրենց ժամադրություններում և ավելի դուրգուրոտ՝ իրենց աշխատանքների հանդեպ:

Հայաստանի կանանց և աղջկանց համեսությունն ու պարկեշտությունը շքեղորեն

արտացոլվում են նրանց արդուզարգերի ներդաշնակ չափավորության մեջ. այնպես, որ դուք չեք կարող այստեղ հանդիպել իզական սեռի մասնահատուկ արտառոց շարժումներին և հանուն նորաճեղքության, այլանդակված «գեղեցկության թագուհի»-ների սոփեստություններին: Այստեղ, Սովետական մեր Հայրենիքում, կա մի անտրանալի ճշմարտություն, ու՛յն՝ թե յուրաքանչյուր քաղաքացու իրական աշխատանքի աշխատավարձի և եկամտի աճի ապահովման միջոցով քարվարանում է ամբողջ բնակչության կենսամակարդակը:

Գ. ԴԱՍՏԻԱՐԱԿԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ

Ամենաուրախալի իրողություններից է նաև այն, որ Սովետական իշխանության ժամանակ հնադարյան հայկական մշակույթը վերածնվեց և նոր զարգացում ստացավ: 1913 թվականին Հայաստանում գրագետները կազմում էին միայն 15%/0, իսկ այժմ գրագետ է համարյա ամբողջ բնակչությունը:

Արդարև, լկա ո՛չ մի անկյուն, ո՛չ մի շենք, ո՛չ մի հիմնարկ, ուր բնակչության գրագիտությունը, գրական ճաշակը, գիտելիքները զարգացնելու նպատակով միջոցներ ապահովված չլինեն: Կմտնեք որևէ հիմնարկի դռնից ներս: Ձեր ուշադրությունն առաջին հերթին իսկ կգրավվի այդ հիմնարկի հատուկ սպասարկության, որի բազմազան ալժմեակալն ու հետաքրքրական թվանշանությունից տմեն օր օգտվում է աշխատավոր ընթերցողը:

Ասենք, թե կանգառում սպասում եք տրամվայի. այդտեղ դուք կգտնեք յուղաներկ րարձրագիր մի ապակեփեղկ, որի մեջ օրվա թերթերը իրենց են հրավիրում ընթերցասեր աշխատավորներին: Կանգ կառնեք այդ ապակեփեղկի առաջ և անհագ կկարդաք միութենական և ռեսպուբլիկական առօրյա կյանքի և համաշխարհային քաղաքական կյանքի վերաբերյալ լուրերը, գիտնականների, ընկերաբանների, գրականագետների կողմից ստորագրված դաստիարակիչ հոդվածները: Այսպիսով ո՛չ միայն չեք ղգա սպասման ձանձրույթը, այլև մտավորապես լուսավորված ու հոգեպես բավարարված կմտնեք յու-

րաքանչյուր հինգ րոպեում իրար հետևող տրամվայի վագոններից ներս:

Այստեղ, տրամվայում ևս, դուք ակնանատես կլինեք բնակչության հանդեպ Սովետական կառավարության հայրական հոգատարության, դաստիարակիչ դերին: Վագոնների պատերի վրա հայերենով դուք կկարդաք դանադան լոզունդները:

Ինձ նման արտասահմանից գեռես նոր սովետական երկիր ժամանած մարդկանց համար այս դաստիարակիչ լոզունդներն ունեն մեծ նշանակություն, որովհետև նրանք արտասահմանյան տրամվայների պատերի վրա տեսել են միմիայն ամերիկյան-հոլիվուդյան-վավրոյական անբարոյացուցիչ կինոֆիլմերի կամ ամերիկա-անլիթանկան կապիտալով կազմված ընկերությունների շահագործումը հավերժացնող շոր ու ցամաք ռեկլամները: Նրանք, արտասահմանյան այդ երկրներում, տեսել են տրամվայի հետևի դռնից իջնող, կամ վագոնի ընթացքի ժամանակ ներս մտնել ցանկացող անկարգ երեխաների ու տղան րանվորների անդամադրվելը, ուղեղի պայթելը տրամվայի երկաթգծերի վրա: Նրանք, արտասահմանյան այդ երկրների տրամվայներում, չեն տեսել այն հարգանքը, որն ընծայվում է սովետական երկրների տրամվայներում՝ երթևեկող ծերերին, երեխաներով մայրերին և հաշմանդամներին, մյուս ուղևորների կողմից:

(Շարունակելի)

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Լ ՈՒՐ ԵՐ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԿԵՍՏ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԻՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ.— Հայկական ՍՍՌ-Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի և Պետական էրմիտաժի Հնագիտական արշավախումբը Հայկական ՍՍՌ-Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Պիտրովսկու գլխավորությամբ ավարտեցին Կարմիր բլուրի Հին ուշադրության ամրոցի այս տարվա պեղումները:

Այս տարվա պեղումները տվեցին հարուստ նյութեր, որոնք բնորոշում են Հին ուշադրության ամրոցի կյանքը: Գտնված են բրոնզե վահաններ, ձիասարքեր, որոնք կրում են ուղարտական թագավորների մակագրությունները: Գեղարվեստական նշանակալից արժեք է ներկայացնում մինչև չափ միայն Հին ասորական նկարներից հայտնի մի գլխազարդ, որը կրում է ուղարտական թագավոր Արդիշտի մակագրությունը: Երևանի մոտ այս տարի ձեռնարկվել են նաև Հին ասորական ամրոց՝ Երեբունի պեղումներին: Արշավախումբի մասնակիցները պեղումներ են կատարում Երևանի հնամենական մասում գտնվող շենքերից մեկում:

ՀԱՅԵՐԵՆ ԼԵՋՎԻ ԼԻԱԿԱՆԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.— Հայկական ՍՍՌ-Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտը սկսել է Հայկական ՍՍՌ-Գիտությունների ակադեմիայի խազնեման անդամ պրոֆ. Էրաչյան Անտոնյանի «Հայերենի լիակատար քերականություն» (Համեմատած 582 լեզուների հետ) հրատարակումը:

Օրերս Հայկական ՍՍՌ-Գիտությունների ակադեմիայի հրատարակչությանը լույս է բեռնել «Հայերենի լիակատար քերականություն» առաջին հատորը: Պիտրովսկու հավելված, որի մեջ արված են 1-ից մինչև 10 թվականները 680 լեզվով, ինչպես նաև բացատրական անվանադասեր:

Այժմ հրատարակչության է պատրաստվում երկրորդ հատորը, որի մեջ մտնում է դերանունը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.— Հայկական ՍՍՌ-Գիտությունների ակադեմիայի Արվեստի տեսության և պատմության բաժանմունքը մի շարք տարիների ընթացքում Հայկական Ժողովրդական երգերի հավաքման ուղղությամբ մեծ աշխատանք է ծավալել: Վերջին երեք տարիների ընթացքում Արարաթյան դաշտավայրի շրջաններն էին մեկնում արշավախումբը ժամանակակից երաժշտական քանահյուսություն հավաքման համար: Հոկտեմբերյանի, էջմիածնի, Արտաշատի, Վեդու և այլ շրջաններում հավաքագրված են մոտ 800 երգեր: Հավաքված ժողովրդական և աշուղական երգերի մեծ մասը ստեղծված է Հոկտեմբերյան ուշադրության հետո: Բաժանմունքի կողմից հավաքագրված 200 մեղեդիներ կազմելու են «Աղագրական ժողովածու»: Այս երգերը, որոնք հավաքված են կոլեկտիվների կողմից և առկայությունների բերանից, գովերգում են Նոր կենցաղը, խաղաղ աշխատանքի ուրախությունը, սովետական

մարդկանց փառավոր ստեղծագործությունները: Հայրենական Մեծ պատերազմի շրջանում, ժողովուրդների անընկճելի կամքը խաղաղության պաշտպանության համար: «Աղագրական ժողովածուում» պետք է տպագրվեն արշավախումբի ղեկավար, երաժշտագետ Վ. Սամվելյանի առաջաքանը և ծանոթությունները: Նոր ժողովրդական երգերի մի մասը կլրացնի Հայկական Ժողովրդական երգի-պարի խմբի և Ռեսպուբլիկական ռադիո-կոմիտեի ժողովրդական գործիչների խմբի հայտագիրը:

ՀԵՏԱԶՐՔԻՐ ԳՅՈՒՆՆԵՐ.— Ապրանքի շրջանի Մոսկվայի գյուղում պահպանվել են հայկական ճարտարապետության Հին հուշարձաններ, որոնք վերաբերում են 5—11-րդ դարերին: Վերջերս բնակիչները պեղումների ժամանակ հայտնաբերել են մատանիներ և այլ զարդեր, բրոնզե պատրաստված սպիտակ և սևավառնի: Գտնված նյութերը պետք է հանձնվեն Երևանի Պետական թանգարանին՝ գիտական հետազոտություն կատարելու համար:

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆՈՐ ԱՆԺԱՆԱՐԻՆ.— Հայկական ՍՍՌ-Գիտությունների ակադեմիայի Խաղաղության ուղղությամբ բաժնի է Զրախնայողական ինստիտուտին կից դաշտային հետազոտությունների բաժանմունքը: Մինչև այժմ ինստիտուտը գիտական հետազոտություններ է կատարել երկու ուղղությամբ՝ առական և փորձական, առկայի շրջագիտության հարցերի բազմափորձման ուսումնասիրությունը պահանջում է հետազոտություններ կատարել, առանձին սարքավորումներով: Այդ փորձերի արդյունքները հնարավորություն կտան միջոցառումներ մշակել սարքավորումների բարելավման ուղղությամբ:

ԴՆԱԿԱՆ ԱՐԵԱՎԱՆՈՒՄ.— Սեանի շրջանից երևան վերադարձավ Հայկական ՍՍՌ-Գիտությունների ակադեմիայի Բույսերի պաշտպանության բաժանմունքի արշավախումբը: Արշավախումբը տանելով կոլեկտիվ տեսնություններում անց կացրեց հատկապես կուլտուրաների ցանցերի ուսումնասիրություն, հավաքեց հարուստ նյութ և ուսումնասիրեց վնասատուներից և Հիվանդություններից բերքը պաշտպանելու հա կապված թաղամթիվ հարցեր: Բաժանմունքի աշխատակիցները նշանակալից աշխատանք են տեսնում հատկապես, սեյսեիական և կերային բույսերի ու պտղատու այգիների վնասատուների և Հիվանդությունների դեմ պայքարելու միջոցառումների մշակման և գործադրման ուղղությամբ: Նրանք ուսուցողական Գյուղատնտեսության միջոցառության աշխատակիցների հետ միտանի ստուգեցին և կոլեկտիվական աշխատանքի մեջ ներգրծեցին Նոր սովետական հակաբույս հատկավոր կուլտուրաների Հիվանդությունների դեմ:

ՈՒՍՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԳՊՐՈՑԱՆԵՐՈՒՄ.— Երեւանի զպրոցներում սովորողից նոր ուսումնական տարվա նախապատրաստությունը 100-ից ավելի բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտած երիտասարդ ուսուցիչներ նշանակված են աշխատանքի Երեւանի զբարձրագույն դպրոցներում։ Բուսաց լեզվի, հայոց լեզվի, մաթեմատիկայի, կենսաբանության և ուրիշ առարկաների 300-ից ավելի ուսուցիչներ, Ուսուցիչների կատարելագործման հայկական ինստիտուտի կողմից կազմակերպված դասընթացներում բարձրացրել են իրենց որակը։ Նոր ուսումնական տարում քաղաքի միջնակարգ դպրոցներում լրացուցիչ կերպով բացվում են 157 դասարան։ Դա հնարավորություն է տալիս միջնակարգ դպրոցներում սովորողներին թիվն ավելացնել ավելի քան 8.000-ից ավելի։ Մեծ ուղարկություն է դարձնում բանվորական երիտասարդության զպրոցներին։ Այդ դպրոցներում լրացուցիչ կերպով բացվում են 30 ?—10-րդ դասարաններ։ Էլեկտրատեխնիկական գործարանի բանվորական երիտասարդության զպրոցը պետք է գործի երկու հերթով։ Դա հնարավորություն է տալիս բանվորներին

թե՛ սովորելու առանց արտագրությունից հարձելու։ Երեւանի դպրոցների համար ձեռք է բերվել 800.000 սուբյուկտի կահույք, սարքավորումներ և գրականություն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՄՈՒՆՈՒՄԻ ՆԱԽԳԻՍԸ.— Սկսվում է նոր ուսումնական տարին։ Ամառային օրերից Հայաստանի քաղաքներն ու գյուղերն են վերադառնում իրենց արձակուրդից ետ։ Դասարաններում անցկացրած հաղթարար դպրոցականները, Զինվորական ամրապնդված և կազդուրված, նրանք նորից պետք է նստեն դպրոցական նստարաններին առջև։

Ռեսպուբլիկայի զինվորաչափական վարչերում՝ Մադկանքում, Կիրովականում, Սեւանում, Ղափանում դեռ վերջ 55 առողջարաններում հանգստանում էին 16.000-ից ավելի երեխաներ։

Քաղաքային և շրջանային բուժոց հրապարակներում հանգստացել են 14.000-ից ավելի երեխաներ։ Մոսկվա, Լենինգրադ, Կիև, Թբիլիսի, Բացու և Սեւոպոլսի ծովափը հետաքրքիր դրոսարշավներ են կատարել մոտ 6.800 զպրոցականներ։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ՆԱԲ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՐԱՆ.— Ախտայի շրջանի Աղվանաձոր գյուղի մասնակցի զեղանակի վարչերից մեկում բացվեց Հայկական ՍՍՌ Առողջարարական միջնորդության մասնական առողջարանը։

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ.— Ստեփանավանի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի բարեկարգման բաժինը մեծ աշխատանք է տանում քաղաքի փողոցների բարեկարգման և կանաչապատման ուղղությամբ։ Բոլոր կենտրոնական փողոցները ասֆալտապատված են, փողոցների երկարությամբ տեղված են մոտ 9.000 զեղազարդող ծառեր։ Քաղաքի բարեկարգման գործում րնակչությունը ցուցարարում է գործուն մասնակցություն, կարգի են բերված թատրոնի նոր շենքի շրջապատը, կենտրոնական հրապարակը և մի քանի ուրիշ տեղեր։

Քաղաքի տարածությունը վերջին 5 տարիների ընթացքում մեծացել է ավելի քան մեկ ու կես անգամ։ Այդ ժամանակամիջոցում բնակչությունն առաջել է 189.000 քառակուսի մետր բնակելի տարածություն։ Միայն 1951 թվականի ընթացքում կառուցված և շահագործման են հանձնված 86 ահհատական բնակելի տներ, որոնք հարմարություններով։

Քաղաքի բնակչությանը խմելու լրով ապահովելու համար, լրացուցիչ կերպով 2 կիլոմետր երկարացված են ջրմուղի խողովակները, փողոցներում կանաչեցված են 15 նոր ջրի ծորակներ։

Քաղաքային Սովետի կից 7 մշտական հանձնաժողովներ համադրեցին զործադիր կոմիտեի հետ, մեծ ոգնություն են ցույց տալիս նրան քաղաքի բարեկարգման գործում։

ԿԱԼԻՆԻՆՈՑԻ ԵՐԶԿՆՏՐՈՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ.— Վերջին ժամանակներս մեծ աշխատանք է կատարվում Կալինինյի շրջանային կենտրոնի բարեկարգման ու կանաչապատման ուղղությամբ։ Ասֆալտապատել և շրջապատել խողովակներից են գյուղի զինվոր փողոցը։ Տեղված է 2.000 զեղազարդող ծառ։

Կալինինյում կառուցված են 2 դպրոցի շենք, լըրացմային Սովետի գործադիր կոմիտեի հասհարկի շենքը։ Կառուցվում է շրջանային կապի գրասենյակի երկհարկանի շենքը։ Սկսված է նույնպես պարտիայի ուսումնական կոմիտեի երկհարկանի շենքի և կենտրոնի շենքի շինարարությունը։ Գյուղի կենտրոնի տեղը կառուցված են նոր ձեռք և երեխապատված են տեղական տոնիկ։

46.000 ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌԱՆՁԱՏՆԵՐ.— Երեւանում ընդարձակվում է անհատական բնակարանային շինարարությունը։ Պետությունը մեծ ոգնություն է ցույց տալիս կառուցողներին։ Միայն ընթացիկ տարվո սկզբից կառուցողներին տրված է 2.000.000 սուբյուկտ ավելի երկարատև վարկ։ Այժմ կառուցվում են 4.000 անհատական տներ, որոնց 80%-ը շահագործման կհանձնվի ընթացիկ տարվա վերջում։



Օժտված ամբողջական հրաժիշտի բազմա-
կողմանի հանճարով, կոմիտաս հանդես ե-

կավ թև՝ իբրև հայ երգի անմահ դանձերու հայտնաբերող և թև անոր մեծավաստակ հավաքողը, և, ինչպես այդ նրանքու խորաթուփանց և նորարարիկ մշակը, ան հայ երգը հասցուց իր պարզ վսեմության, դասակարարչություն, որպես հայ երգի յուրահատուկ կառուցվածքի ամբողջ գաղտնիքը քաջահայտող մեծատաղանդ դիտնական-տեսարան, ան հայ երգին տվավ առանձնահատուկ ձևի և բովանդակության վերլուծության նվիրված շարք մը ուղեցույց վերին աստիճանի արժեքավոր հոգեմեծներու որպես հայ երգի նորաճաշակ ու մեծահանճար կոմպոզիտոր, թափանցած ըլլալով հայ երգի ներքին ամբողջ գաղտնիքին, ան իր հավաքած ու մշակած երգերն շատերը վերածեց քաղածայնություն այնպիսի հմայիչ պատարիւթի, որ զանոնք լսելով, մարդ ինքնաբերաբար կզգա հայ գեղջուկի քարախուն և ջերմ սիրտը իր վշտի, ցնծութիւն, կարոտի և հուլիսի, տանջանքի ու պայքարի միահյուսված ապրումներով, Կոմիտաս հանդես եկավ նաև որպես հայ երգի խոշորագույն խմբավար, որ իր ճպտի կախարդիչ շարժումներով այնքան միաձուլ պարզութեամբ դրսևորեց իր քաղմածայն եղանակներու ամենանուրբ, ամենաալիքան արժեքավորումները, ինչպես հայտնի է, իր համերգներն ունկնդրող անվանի երաժշտագետներ անգամ հաճախ չկարողացան հովատար իրենց աչքերուն ու ականջներուն և համերգին վերջ բեմի ետեւ փրկուրեցին խումբին ընկերակցող շնաշխարհիկ գործիք մը... Եվ, վերջապես, որպես հայ երգի ամենավարպետ կատարողը, երբ Կոմիտաս հայ ժողովուրդի մեծատաղանդ քանաստեղծի՝ Ալիսիք Իսահակյանի համար երգեց իր նոր գրած և մշակած «Մոկաց Միրզան», ան, պահ մը թողելով իր Արտիկ-Ալալի թափառումները, տեղափոխվեցավ դուցազնական աշխարհի մը մեջ, կախարդական բնության մը մեջ, ուր ամեն բան վեհ էր, վիթխարի, հերոսական, և զգաց, որ Ալիք երգը շատ հին է, հեթանոսական դարերից, խոսքերն ու եղանակը միաձուլ, բարձր լեռներից, շառաշուն ջրերից, խոժոռ ժայռերից են ծագում առել, մեր նահապետների հոգուց է բխել, այնքան հին է, որ Ձենով Օհանը երգել է, Սասունցի Դավիթը լսել... Եվ, վերջապես, մեծ եղեռնի օրերուն, ջանքերի մեջ ձերբակալված բախտակիցներուն առջև երբ «Տէ՛ր, ողորմեա՛ն երգեց, ան հաջողեցավ այնքան հուզում խտացնել իր ձայնին մեջ, որ վերապրողները մինչև այսօր չեն կրնար առանց արցունքի հիշել այդ պահը, Եվ, վերջապես, բացի Մարգարիտ Բարայաններու կենդանի վկայություններն, Կոմիտասի կատարողական արվեստի բարձրության մասին կվկայեն

նաև այն քանի մը երգապնակները, որոնք անկե հասեր են մեզ, Ի միջի ալիոց, հայկական արվեստի այս բոլոր բնագավառներուն մեջ Կոմիտաս հանդես կուզա հայ երգի քաղմակողմանի իր հանճարով, Մոտենալով հայ գեղջկական երգի հարուստ գանձերուն և զանոնք հասցնելով արժանավայել բարձրության, Կոմիտաս ստեղծեց երաժշտական հիանալի աշխարհ մը, որ հազարավոր թելելով կապվեցավ հայ ժողովուրդի, հայ աշխատավոր դուռնացիի քաղաքային կյանքին, անոր դարավոր երաժշտական մշակութիւն հետ, երաժշտական մշակութիւն արդ անթառամ գեղեցկությունը ստեղծագործելով, Կոմիտաս որպես ելակետ ունեցեր է այն անսահման սերն ու խորունկ հավատքը, որ ան կտածեր հայ ժողովուրդի գեղարվեստական հարուստ ստեղծագործական ավանդություններուն նկատմամբ, Կոմիտասայն հայ երգի մեջ Կոմիտասի հանճարն ու հայ ժողովուրդի ստեղծագործական ընդունակություններն այնքան միաձուլված են, որ դժվար է ըսել, թե ո՞րտեղ կվերջանա հայ ժողովրդական երգը և ո՞րտեղ կսկսի Կոմիտասի հանճարը, Ճիշտ է, որ այդ հանճարը ո՛չ օպերաներ, ո՛չ արիաներ, ո՛չ ալ ողմանաներ գրեց, սակայն հայտնագործելով մեր ազգային երգն ու երաժշտությունը, քաջահայտելով անոնց առանձնահատուկ վսեմությունը, բարձրացուց զանոնք արվեստի անհաս քարձույցները, ան նույնիսկ արվելին ըրավ՝ իր հանճարի մեծության շնորհիվ կրցավ միջազգային երաժշտության պանթեոնին մեջ հայ ժողովրդական երգի համար ապահովել ուրույն ու պատվավոր տեղ մը, Երաժշտության այդ միջազգային պանթեոնին մեջ, հայ երգն ու Կոմիտասի հանճարը երևան կուզան անխզելի միասնութեամբ մը:

Կոմիտասի հանճարը կփայլի հայ երգով, հայ երգն ալ Կոմիտասի հանճարով, Այս պատճառով հայ երաժշտության մեջ ամենն առաջ Կոմիտաս ինքը հանդիսացավ կենդանի ապացույցը իր հիմնական այն սկզբունքի ճշմարտության, որ մեծագույն ստեղծագործողը ժողովուրդն է:

Հայ ժողովուրդի զավակ, հավատք ու սեր տածելով հայ ժողովուրդի ստեղծագործական ընդունակություններուն նկատմամբ և վերջապես սորվելով հայ ժողովուրդին, Կոմիտաս հայ երգը բարձրացուց գեղարվեստական այնպիսի կատարելության, որ ան իր այդ քարձույցն ընդմիշտ կհնչե, իր ոլորտներուն մեջ առհավետ պահելով հայ ժողովուրդի գեղարվեստական առինքնող տաղանդը և այդ տաղանդի մեծագույն ներկայացուցիչ Սողոմոն Սողոմոնյանի՝ Կոմիտասի պատճառ անունը:

ԾԾԵ

Կոմիտասի երաժշտական ստեղծագործության անմահ ժառանգության մեջ գեղարվեստական վառ արտահայտություն է գտեր ինչպես հայ ժողովուրդի, այնպես ալ անոր արժանավոր մեծ զավկի՝ Կոմիտասի բուն ձեռքով արված երգերի կյանքի համար:

Շրջելով Մայր Հայրենիքի ամենախուլ անկյուններն անդամ, ականջ տալով հայ ժողովուրդի բարախուն ու խռովահույզ մեծ սիրտին, Կոմիտաս հավաքեց հայրենի արտերու, կայերու, հարսնիքներու և հյուղականերու մեջն և հանճարեղ մշակման ու վերլուծման ենթարկեց աշխատանքի, խրախճանքի, պարի, հայրենարդուության, օրորի, սիրո գեղջուկ երգերը, Երգերու այդ ընդհանուր մեջ Կոմիտաս գտավ այն ընդհանուր, ինչպես՝ գաղափարական բովանդակություն, որ վիժաստավորեց և կմիացնեղանոց հիմնական առանցքի մը շուրջ: Այդ երգերուն մեջ հայ ժողովուրդը տարբեր եղանակներով արտահայտեց է իր ձգտումը ազատ ու երջանիկ կյանքի համար: Ամեն երգի մեջ թախիծ կա, խոր թախիծ մը, որ թեև արվեստի պես միշտ կշարժի եղանակի հետ, և հաճախ ընդունելով սրտաճմիկ համեմատություններ, միշտ ալ կվերջանա ջերմ հույսի մը մեջ:

Հայ գեղջուկ երգի այդ թախիծին մեջ արտահայտություն է գտեր ընկերային ճնշումներն, կապանքներն, անարդարություններն, կողոպուտներն ու կոտորածներն տառապող հայ ժողովուրդի մեծ և դարավոր վիշտը, իսկ հայ գեղջուկ երգի ներքին ուժականությունը. անոր կշռուկ ճկուն ճոխությունը պայմանավորող այդ հույսի մեջ պրակտիկ է անոր ձգտումն ու պայքարը ազատ ու երջանիկ կյանքի համար, անոր անուշությունն ու արժանապատիվ ընկերային շարիքի նկատմամբ, ընկերային-քաղաքական կապանքներու նկատմամբ: Երգելով իր աշխատանքի պահուն ու սրտագին խոսակցության բովանդակով ժախքեր ջանքերն ու զգուշ շրջող սարիքու հետ, երգելով իր մանկան օրրանի առջև ու ինքնիրեն պատմելով կյանքի դառնության ու օրվան հոգերուն մասին, երգելով խրախճանքի պահուն ու վայրկյան մը մոռնալ փորձելով իրեն ճնշող ցավերն ու հոգերը, հայ գեղջուկն իր երգի մեջ տվեր է այն սեփական, որուն մեջ հեացքեր ու տառապեր է ան, և մյուս կողմին՝ տվեր է այն պայծառ օրը, որուն ձգտումն և հավատացքն է ան:

Հավաքելով հայ գեղջուկի սիրտն անոր վիշտն ու հույսը, ատենք մատնանշելով որպես հայ գեղջկական երգերու բնորոշ գիծերը, իր հանճարը ի սպաս դնելով

ատենց յուրահատուկ ուժին և գեղեցկության, ատենց գաղափարական բովանդակության դրսևորման, Կոմիտաս միաժամանակ երգեց իր սեփական վիշտը, իր սեփական կյանքի մեծ ողբերգությունը. «Գարուն ա՛: ձյուն ա՛ արել...», Կոկոնըս թոռմած մնաց...», Իսկ մեծ դժվարություններու, զհոգություններու ու հալածանքներու դիմով հավաքելով, մշակելով և տարածելով հայ գեղջուկ երգը, Կոմիտաս փաստորեն կարտահայտեց նաև իր սեփական հավատքն ու ձգտումը հայ ժողովուրդի ազատ ու երջանիկ կյանքի համար: Այդ տեսակետն Կոմիտասի ամբողջ ստեղծագործությունը արդյունքն է անոր այդ մեծ հավատքին և ձգտումին: Հայ գեղջուկը իր այդ հավատքն ու ձգտումը արտահայտեց իր երգերով, իսկ Կոմիտաս՝ նույն այդ երգերու մշակումին ու տարածումին համար ղոհաբերելով իր ամբողջ գիտակցական կյանքը: Կոմիտասի մշակութային հարուստ, ժառանգությունը կազմող հայ գեղջուկ երգերը մեկ կողմեն հեռավոր անցյալին մեջ կոտորացող սիրտի մը պես դեռ կամաց-կամաց կհեծեծեն և տրտմագին կպատմեն մեծագույն կայսրություններու քարաքոտական հարձակումներն ենթարկված և անհավասար պայքարներու մեջ անօգնական մնացած ժամանակներու մասին, այն դարավոր լուծերու մասին, որոնց ենթարկվել է հայ տաղանդավոր ու ստեղծագործող ժողովուրդը ըստ միմյանց անգամներ, այն անավոր հալածանքներու և կոտորածներու մասին, որոնց ենթարկվեցավ անիկա բոլոր լուսավորներն ամենեն ավելի բարբարոսը հանդիսացող սովորական կարգերեն. մեկ կողմեն հեծեծադին պատմելով այս բոլորի մասին, միաժամանակ այդ բոլորի խորքի վրա առանձնահատուկ խռովքով կպատմեն մեղի Կոմիտասի սեփական ողբերգությունն մասին. «Միրտըս նըմա՛ն է էն փրկած տղաներ, կոտորեց զբըրններ, խախտեց է սրներ, բուն պիտի դընեն մեջ վայրի հավքեր...», «Սարերը հով չեն անում, իմ դարդին դարման անում...», «Միրանի ծառ, բար մի՛ տա, ճըղներդ իրար մի՛ տա, ամեն մեջդ ման գալիս՝ ցավերս իրար մի՛ տա...»: Միևնույն ժամանակ, հայ գեղջուկ երգերը կհանդիսանան հավատքի և հույսի այն վարարուն կանչերը, որ այդ մոռյի մեջն արձակեին հայ գեղջուկն ու անոր կյանքին սրտակից հանճարեղ Կոմիտաս, հայ ժողովուրդի անցյալի մոռյի օրերեն:

Կոմիտասի ապրած ողբերգությունն ընկալված պայծառ անավտոր, իր հավատքի և հույսի սրտագին կանչն է, որ կհնչե անոր երգերուն մեջ, Կոմիտասի երգերով ապրեցավ ու մեզ հասավ այն, ինչ որ

չկարողացան սպանել ո՛չ բարբարոսական հորդանքները և ո՛չ ալ համիդյան հրեշալին բաղադրականությունը: Հայ ժողովուրդի արյան ու վիշտի ծովի մեջ արմատ նետելով, անոր ապրելու և ստեղծագործելու անսպառ կորովին սնելով, ուժ առնելով վաղվա նկատմամբ անոր ունեցած հավատքն ու հույսն և քաղցրախառնվելով Կոմիտասի հանճարով, հայ գեղջուկ երգը մեր Սովետական Հայրենիքի հավերժական դարունքին մեջ փերափթթեր է և անխռամ ու մըշտաբույր ծաղիկներու պես բուրմունք կուտա զգլխի՝ քաղցրությամբ մը:

Հայրենի մշակույթի բազմահարուստ այս բուրաստանին մեջ, Կոմիտասի երգերը կծաղկեն իրենց յուրահատուկ բազմերանդության և բուրմունքի մեջ, միշտ վառ պահելով Կոմիտասի անունը և անոր հանճարի մեծությունը:



Կոմիտասյան երգերու մեջ ասկա եղադայն հույսի, վշտի զգացումները խառնված են ազատ ու միասնական Հայրենիքի նկատմամբ կարոտի և բաղձանքի հետ. «Կոռնեկ, ուստի՝ կուզաս, ծառա եմ ծայնիդ, կոռնեկ, մեր աշխարհն խաբրիկ մը լուռի՞ս...»: Բազմալարար ու կեղծված հայ գեղջուկը վստահ է, որ ազատ ու երջանիկ կյանքը պայմանավորված է Հայրենիքի ազատագրումով: Ան լավ կյանքի մասին ունեցած իր բոլոր երազները կեդրոնացուցնում է ազատ Հայրենիքի ձգտումի մեջ, և իր բոլոր ցավներուն տակ, կոտորացող վերքի մը պես կզգա իր ազատ Հայրենիքի պակասը: Պատահական է, որ հայ գեղջուկի սիրտը այնքան փոթորկահար կտառապի և կհորդի, երբ ան կանգնադառնա իր ճանտունի շուրջը: «Մի՛ սսիր դարբը՝ թե չէ սիրտս կարունի...», «Ան ծով մեծ տես՝ սիպտակն էր բոլոր, ալի՜ն կզարներ, չէր խառնի իրար...»: Պատահական չէ, որ հայ գեղջուկի փոթորկահար սիրտին մեջ հուզումը կալիքավորվի և տնոր սև աշրերուն ծովին մեջ շուրթեր կխառնվեն իրար, երբ ան կհուլիսի հայրենի երկրի հրաքորի կարոտին... «Կոռնեկ, ուստի՝ կուզաս, ծառա եմ ծայնիդ, կոռնեկ, մեր աշխարհն խաբրիկ մը լուռի՞ս...»: Հայրենաբաղձությունը սակայն միայն խորունկ թախիծ ու վիշտ չէ հայ գեղջուկի մոտ: Անոր թախիծն ու վիշտը առանձնապես խոր կդառնան հայրենագրության գիտակցության ատեն, բայց այդ հոգնեղևն ու հուսահատական չէ անոր մոտ: Հայրենաբաղձության թախիծն ու վիշտն կսկսի անոր ձգտումն ու երազը Հայրենիքը ազատագրված տեսնելու մասին: Հավատն ու պայքարող հայրենաբաղձություն մըն է այդ, այս ձևով բացա-

տրելով, հայ գեղջուկի յուրահատուկ հայրենասիրությունն է, իր յուրահատուկ արտահայտությամբ: Կոմիտաս խորապես ներառվելով ու բացահայտելով հայ գեղջուկ երգի հայրենասիրական բովանդակությունը, իր ստեղծագործությունը օժտեց այնպիսի յուրահատուկ ուժով մը, որ ունկնդիրները Հայրենիքի բույրը կառնեին, Հայրենիքի մթնոլորտը կպատկերացնեին, ու նույնիսկ հայրենի բնությունն կկախարդվեին այն ժամանակ, երբ Կոմիտասյան պարզ սիրալիս երգ մըն էր երգվածը, ա՛յ չհաղված ախ երգերը, որոնք ուղակի կբեմադրեն կարծես հայ գեղջուկի աշխատանքը՝ հայրենի երկրին մեջ, անոր հուզումը Հայրենիքի նկատմամբ:

Կոմիտասի ամբողջ ստեղծագործությունը բաբախում մեկ ապացույցն է անոր շերտ հայրենասիրության: Ան իր երգերով ո՛չ միայն տառապակոծ հայությունը կզինե ազգային հպարտության վեհ զգացումով, ան ո՛չ միայն Հայրենիքի ու հայրենասիրության զաղափարը կհրահրի իր երգերով, այլ միաժամանակ պայքարի կկոչն հանուն հայ ժողովուրդի ու անոր Հայրենիքի ունեցուցիտ ազատագրության:

Հայրենիքի լքնադ ընությունը, հայ գեղջուկի ներքին ապրումներն ու ձգտումները, և վերջապես՝ Կոմիտասի ներգործ հայրենասիրությունը խառնվելով Կոմիտասի հանճարին՝ առաջ են բերում ծաղնեղեն հրաշալիքներ, որոնց զաղափարական զարկերակը կհանդիսանա հայրենասիրությունը: Կոմիտաս դարձավ ամենաբարախուն ներկայացուցիչը հայրենասիրության այն մեծ գաղափարին, որուն արծարծումին ու աշխուժացման համար զոհարեց ինչպես իր սրտուռու կյանքն ու մեծ հանճարը:



Հոկտեմբերյան Մեծ Ռեյուցիան արդեն շատոնց վերջ է տվել հայ շինականի դարավոր տանջանքներուն, ազատ Հայրենիք ունենալու անոր հավատքն ու ձգտումը դարձրեց իրականություն և ազատ ու երջանիկ կյանքի զարգացման համար ստեղծեց էրբ-տր հնարավորությունները՝ հայ ժողովուրդի ստեղծագործական տաղանդի դրսևորման համար:

Անդայի դառն հուշ են դարձնում հայաժանքն ու կոտորածը, պատմության գիտկն է անցնում ինչպես մեծ վերջ՝ հայ ժողովուրդի վերջին ողբերգությունը՝ 1915 թվականի մեծ եղեռնը:

17 տարի է, որ արդեն դառեր է բաբախում Կոմիտասի սիրտին... Հանճարեղ Կոմիտասի սիրտը, ինչպես զոհ այդ եղեռնին, իր վերջին 20 տարիներուն ապրեցում եղեռնական ու երկարաձիգ հոգնարքով մը: Սուր-

թանական արյունոտ վարչակարգը բնաջնջեց ամբողջ սերունդ մը. ան հաշոգեցավ արյան մեջ խեղդել արևմտահայ հատվածի տաղանդավոր ներկայացուցիչները և անոնց մեջ հանճարեղ Կոմիտասը, բայց չկարողացավ խեղդել այդ սերունդի ձայնը, անոր սրտագին երգը, անոր հավատավոր ձգտումը Դարերով տառապած հայ ժողովուրդի հայրենասիրական ու մարդկայնական լավագույն ավանդությունները խտանալով և բյուրեղանալով Կոմիտասի երգերուն մեջ, անցան արյան ու տառապանքի ծովերեն և հասան ազատ ու երջանիկ կյանքի, Սովետական ազատ ու բարգավաճ մեր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի մեջ:


Պատահական չէ, որ Կոմիտասի անունը և անոր հանճարեղ ստեղծագործությունը սովետական պալմաններու մեջ աննախընթաց թափով կծաղկին: Պատահական չէ, որ Կոմիտաս այսօր իր շրջերով կցուցադրվի սովետական երաժշտության ամենաառաջավոր շարքերուն մեջ և կմանսկցի մեր Սովետական Հայրենիքի վեթիստի վերելքին: Հայ ժողովուրդի ստեղծագործական տաղանդի մեծագույն ապացույցներեն ու նվաճումներեն մեկն է Կոմիտասի ստեղծագործությունը: Ճիշտ այդ հանգամանքի շնորհիվ ալ՝ Կոմիտասի անունը երթալով ավելի հարազատ և սիրելի դարձավ:

Սովետական պալմաններու մեջ կաճի և կբարգավաճի հայ ժողովուրդի ստեղծագործական տաղանդը:

Բացի իր պատմական նշանակալից դերեն,

Կոմիտասի ստեղծագործությունը կծառայի այսօր որպես հոգեոր էանյութ՝ ձեռով ազդային, բովանդակությամբ սոցիալիստական ժեր սովետահայ երաժշտության համար, որ Արամ խաչատրյաններու, Ալեքսանդր Հարությունյաններու, Աշոտ Սաթյաններու, Թաթուլ Աթուռյաններու տաղանդներու շնորհիվ դուրս կուգա Կոմիտասի ստեղծագործությունը բնորոշող ձայնային երաժշտության սահմաններեն և կնվաճե նաև երաժշտության մյուս բնագավառները: Կոմիտասի երգը կհնչե և ընդմիտ պիտի հնչե մեր Հայրենիքին մեջ, ինչպես հայ ժողովուրդի ստեղծագործական տաղանդի նվիրական հաղթերգ մը: Ինչպես հարազատ սիրտի ջերմագին գորով, ազատ ու երջանիկ մեր Հայրենիքի նկատմամբ, ինչպես սրտապնդիչ ու խրախուսող ուժ: Կոմիտաս իր երգը ստեղծագործեց այն պատմական ժամանակաշրջանին, երբ հայ ժողովուրդը բուռն կերպով կձգտեր ազատ ու երջանիկ կյանքի, ազատ ու միասնական Հայրենիքի, իսկ հիմա ու ասկե վերջ՝ Կոմիտաս կապրի ու կստեղծագործե ավելի մեծ չափանիշով՝ քանի որ ան կսուրբի իր այդ ձգտումի իրականացման պայմաններուն մեջ, Սովետական ազատ ու բարգավաճ Մայր Հայրենիքին մեջ, մեծատաղանդ սովետահայ ժողովուրդի բաբախուն ու ջերմ սիրտին մեջ: Կոմիտասի անմահ երաժշտության ժառանգությունը թանկարժեք մեկ մասը կվազմե ունմահության այն ավանդին, որ հայ ժողովուրդը իբրև իր կյանքին ու հոգիին մեկ մասնիկը իր հետ կտանի դեպի լուսաշող ապագան:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՐԽԻՎԻ ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վեհափառ Հայրապետան անցյալ տարի
պրոֆ. Ա. Արրահամյանից ստացել է Քեյ-
րոսից ուղարկված նվերների մի ծանրոց,
(Պրոֆ. Ա. Արրահամյանը, ինչպես հայտնի
է, 1951 թվականի մայիսին գտնվել է Ան-
թիսիասում որպես Ամենայն Հայոց Հայրա-
պետի պատվիրակության անդամ)։ Մանրո-
ցում կային հայ երաժշտության պատմու-
թյան համար բացառիկ արժեք ներկայաց-
նող հետևյալ նյութերը.

Ա) Պ. ՊԱՐԳԵՎ ՊԱՐՍՈՒՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ,
երջանկահիշատակ Տ. Տ. Գարեգին Կաթո-
ղիկոսի ցանկության համաձայն, պրոֆ. Ա.
Արրահամյանին հանձնված՝ Կոմիտաս վար-
դապետի հետևյալ ինքնագիր ստեղծագոր-
ծությունները.

1. Ժողովրդական Լույսը, նոտագրված
հայկական ձայնանիշներով, 236 էջ։

2. Հեփյաբի և Մշո շորուր, դաշնամուրի
համար, 18 էջ։

Բ) ԵՐՈՒՍԱԳԵՄԻ Ս. ՀԱԿՈՐՅԱՆՑ ՎԱՆՔԻ
ԴՊՐԱՊԵՏ՝ ՆԵՐՍԵՍ 2. ԽՈՒՏԱՎԵՐՏՅԱՆԻ
ԿՈՂՄԻՑ 1947 և 1949 թվականներին, Նորին
Ս. Օծություն Տ. Տ. Գարեգին Կաթողիկոսին
ուղարկած հանգուցյալ Կոմիտաս վարդա-
պետի երաժշտական ստեղծագործության
վերաբերյալ 12 նյութեր, Ս. էջմիածին ու-
ղարկելու համար.

1. Շաբալյան, հին եղանակ, 1905 թ., Ս.
էջմիածին (տետրակն ունի 140 էջ գրված և
սպիտակ թերթեր)։

2. Ասեկյան բյուրական եղանակներ,
140 էջ։

3. Պայնամարզություն, Յրից Ալբերգի,
թարգմանություն Կոմիտաս վարդապետի,
Ս. էջմիածին, 1904 թ., 64 գրված էջեր։

4. Հնկարագիր Երզնցս Հայաստանեայցս
եկեղեցւոյ, Ն. Մ. Տնտեսյանի, տպագիր,
որի մեջ կան Կոմիտասի նշումները և որի
հետ կազմված է նաև Ն. Շ. Քաշճյանի Վա-
սագիրք եկեղեցական ծայնագրութեան Հա-
յոց։

5. Խաղաբանություն, բառերը՝ հանված
հին հայկական ձեռագրերից և տպագիր
գրքերից։

6. Անտիպ երգեր, Կոմիտաս վարդապե-
տի, 65 էջ, ընդօրինակված քնագրից։

7. Տարբական երաժշտություն, սևագրու-
թյուն, պակասավոր։

8. Տեառակ, նշաններ, խաղեր և նրանց
նշանակությունը. գրված է սիփայն սկզբից
3 էջ։

9. Հոգևոր եղանակներ, 34 էջ, գրվել են
սկզբի 15 էջերը։

10. Խառը նյութեր, որոնց մեջ կան երգե-
րի բառեր, քարոզներ, մանկական խաղեր,
հանելուկներ, մանկական դաստիարակու-
թյան խորհրդավոր դրույցներ, խրատներ և
հայոց նշանագրեր։

11. Անջատ քերթերի մի ծրար, 58 էջ։

12. Հնոթա ըսելով ի՛նչ կը հասկընանք»,
3 պրակտիկ մի տետրակ։

Գ) ԲԵՅՐՈՒԹԻ «ԱՐԱՐԱՏ» ՕՐԱԹԵՐԹԻ ԱՇԽԱՏԱԿԻԹ՝ Պ. ՍԱՄՎԵԼ Զ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ (ՍԱՄԻ ԿԱՐՈ) ԿՈՂՄԻՑ հատուկ գրության մեջ նախ Զայոց Հայրապետին ուղարկված Կովկասի և Հայաստանի հարյուրամյա փառեզ, աշխատություն պրոֆ. Կարլ Կոխի:

Դ) ՄԻ ՊԱՏՎԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆԻՑ ՈՒՂԱՐԿՎԱԾ հարեշերեն մի մազալարյա ձեռագիր:


Ամենայն Հայոց Հայրապետի բարձր ցանկությամբ, վերոհիշյալ նյութերը, պաշտոնական գրությամբ, ուղարկվել են համապատասխան հաստատությունների: Ըստ որում, Ա. և Բ. հատվածների նյութերը, տրոսք վերաբերում են Կոմիտաս վարդապետի երաժրչական ստեղծագործություններին, Վեհա-

փառի հաճությամբ, ուղարկվել են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի պատմության սեկտոր, ուր պահվում է Կոմիտասի արխիվը և որը զբաղվում է Կոմիտասի ստեղծագործությունների ուսումնասիրությամբ և հրատարակությամբ, իսկ Գ. և Դ. հատվածների նյութերը՝ պատմական քարտեզը և հարեշերեն մազալարյա ձեռագիրը, հանձնվել են Հայկական ՍՍՌ Միջինասորների Սովետին կից Պետական մատենադարանին:

Նշված հաստատությունները, պաշտոնական նամակով, Վեհափառ Հայրապետին աեղեկացրել են նյութերի ստացման մասին:

Դ Ի Վ Ա Ն

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ



ԻՄ ՀՈՒՇԵՐՍ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ՝

1848 թվականն էր, ես արդեն պատանեկական հասակիս 11-րդ տարին էի թեւակոխել, Հորեղբայրս՝ Սահակ աղան, սկսած 1846 թվականից մինչև 1856 թվականը, քաղաքի դեպուտատն էր և այս դիրքի ու հեղինակության պատճառով քաղական մոտանմանավորություն էր հաշատուր Արուսյանին, որն այդ թվականներին կառավարության վրա տեսուչ էր նշանակվելու Հենց այդ թվականին էր, որ Հորեղբայրս ինձ հետը վերցրեց, մի փոքրիկ խուրջին կոնակա ձգեց և տարավ նոր նշանակված տեսչի մոտ։ Մենք նրան հանդիպեցինք հենց վարժարանի առջևը շրջագայելիս։ Արուսյանը տեսնելով Հորեղբորս, մոտ եկավ և սիրալիք վերադավ միմյանց ձեռք

1. Տպագրության հանձնելով հորս անձնական հիշողությունները իր ուսուցչի՝ հաշատուր Արուսյանի մասին, կարեւոր ենք համարում թուրքիկ ձևով այստեղ տալ Ղեկնող քահանայ Աթանասյանի վերաբերյալ մի քանի կենսագրական տեղեկություններ։

Ղեկնող ավագ քահանայ (աշխարհիկ անունը Նահապետ) Աթանասյանը ծնվել է 1839 թվականի հոկտեմբեր ամսին, Երևանում, Աթանասյան ընտանիքում։ Նահապետի հայրը եղել է արքունի թնդանթաժիկ։

Հայրս, դեռեւս յոթ տարեկան հասակում, իր գրադուտությունը սկսում է տատի մոտ, ապա նրան տալիս են սովորելու Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցու դպրոցում գտնված աշտարակիցի Տեր Սահակի վարժարանը։ Բայց որովհետև այստեղ կիրառվելու է եղել կոպիտ ուսուցչական և դաստիարակչական մեթոդը, Նահապետի Հորեղբայր Խահակը հանում է երեսային այս վարժարանից և տանում տեղավորում է հաշատուր Արուսյանի կողմից կառավարվող արքունի դպրոցը, Նահապետը Արուսյանի դպրոցում սովորում է մի քանի տարի և ավարտում։

Այնուհետև ՅՕ-ական թվականներին, հայրս, ողևորվելով հորիմյան Հայրիկի հմայքով, Արվանդտյանի միջնորդությամբ և ընկերակցությամբ, թողնում է հայրենի Երևանը և Պարսկաստանի վրայով անցնում վանկարաց, որտեղ մի քանի տարի աշակերտում է հորիմ-

անդմեցին և ողջունեցին, Հորեղբայրս դասնալով տեսչին ասաց. «Խրիստաֆոր Արտեմիլ, մեր այս փոքրիկ շարաճճին բերել եմ ձեր վարժարանը տալու կասկած չունեմ, որ ինչպես շատերի, նույնը և իմ այս եղբոր որդու վերա ձեր խնամքը և հովանավորությունը կտարածեք։ Եվ ես հույս ունեմ, որ իմ Նահապետս լավ կսովորի, որով թե՛ մեր հույսը և թե՛ ձեր աշխատությունը իզուր չի կորչի»։

— Ի սրտե շնորհակալ եմ, Իսայ Անտոնիչ, — հայտնեց Արուսյանը, — որ դուք ինքնահոգար սիրով ցանկացել եք ձեր եղբոր որդուն բերել մեր վարժարանը։ Զգիտե՛մ, ձեզ հայտնի՝ է թե չէ, թե ես ինչ շարժարաններ եմ մյուս դաստիարակության այս գծովարին պայմաններում, էնպես որ ես շատ անգամ ստիպված եմ եղել կիրակի և տոն օրերին,

յա՛ն Հայրիկին՝ աշխատակցելով նրա «Արժիվ» պատկերասրահին և «Արժիվի» Տարեկան շաբաթաթերթին, 1885 թվականին ես Տարեկան վերադառնում է և հաստատվում հայրենի Երևան քաղաքում։

Այստեղ Նահապետ Աթանասյանին մենք տեսնում ենք Երևանի թեմական դպրոցի ուսուցչի պաշտոնով։ Նրա աշակցությամբ են կազմակերպվում Երևանի առաջին օրիորդաց վարժարանը, առաջին մանկապարտեզը և առաջին ընթերցարան-գրադարանը։

Նահապետ Աթանասյանը սկսում է թղթակցել «Հյուսիսաֆայան», «Կոռնիկ», «Մեղուկ», «Գրիգոր Արթուր» «Մշակ»-ին, Նա մոտ հարաբերության և թղթակցության մեջ է մտնում Միքայել Նալբանդյանի, Պերճ Պողոսյանի, Մերենցի, Գրիգոր Արթուրյանի, Արիստոսի և Արզար Հովհաննիսյանների, Գաբրիել Սունդուկյանի, Գ. Զմյուշանի, Պետրոս Միմոնյանի, Խորեն Ստեփանյանի և այլ ականավոր գրական-հասարակական դեմքերի հետ։

1877 թվականին հրավիրվելով Բիֆլիս քաղաք տեսուչ Մարիամյան դպրոցի և ուսուցիչ Ներսիսյան դպրոցի, մի քանի տարի անց, այն է՝ 1881 թվականին, Պերճ Պողոսյանի հետ, ես Պերճի վերադառնում է Երևան և կրկին սկսում իր մանկավարժական գործունեությունը։ Ահա այդ ժամանակ էլ ամուսնանում

այս և այն եկեղեցիին դնել հորդոր կարողալ, որ տեղացիներն իրենց զավակներին անուսում լթողնեն, քիչ չի պատահում, որ ուսման հասակի հասած որդիք ունեցող ծնողների ականջին փսփսում եմ, թե քեզ տարենը մի հինգ ութիքի էլ նպաստ կտրվի, որ դու քո որդու համար՝ թուղթ, գրիչ, գիրք առնես և էդ ծանրութունն էլ դու չես քաշիլ, նվայսպիսով, ընթացս այս մի և կես ամսվան հազիվ հազ կարողացել եմ 85—95 աշակերտ ունենալ:

Այս բոլոր ժամանակը ես, գլխարկս վերցրած, կանգնած տեսչի և հորեղորոս միջև, պատանեկական մանրազնին հետաքրքրությամբ դիտում էի Արուսյանին, իմ տեսած Արուսյանը նման չէր այժմյան լուսանկարիչների լույս ընծայած նկարներին. լավ հիշում եմ, նա ոչ շատ բարձր և ոչ ցած, ոչ գեղ և ոչ լղար, այլ միջին հասակի բարեձև կազմվածքով, կլոր գլխով, բաց շագանակագույն մազերով, խիզախ դեմքով, գեղեցիկ 40—45 տարեկան անձնավորություն էր: Արուսյանը ինքը մոտ քաշեց ինձ և կանգնեցրեց իր առջև. ձախ ձեռքը իմ ձախ ուսին էր դրել, իսկ աջ ձեռքով շիկահեր գլուխս էր շոյում: Այս միջոցում նա մի առանձին բավականությունս ասաց.

— Մի ուրախալի հանգամանք ինձ շատ մեծ հաճույք է պատճառել, որ քաղաքիս կարող անձինք, որոնք իրենց որդոցը Տրփդիսի գիմնազիոնը կամ Լազարյան ճեմարանն էին ուղարկում, իմանալով որ ես տեսչական պաշտոնով այստեղ եմ մնալու, այդ մտադրությունները թողնեցին... է որ ծախքերի ծանրությունից խուսափելու, է որ Մոսկվայի դաժան սառնամանիքներին իրենց զավակներին զոհ չդարձնելու համար, Այսպես ես ստիպված պետք է լինեի, առնվաղն, մի տարի ես համբերելու, նվազապես դատնալով ինձ, ասաց. «Միթե ինչ նահապետ, քո գլուխն էլ իմ գլխի պես մեծ է, ինձնից հազիվ վար-

է և մի քանի տարի ահա ձեռնադրվում քահանա, Բայց քահանայությունից հետո էլ նա շարունակում է զբաղվել դասավանդությամբ նրանից գիմնազիայում և ուսանակն ուսուցչական սեմինարիայում:

Վերջին 6 տարիներում (1914—1919 թ. թ.) Հայրս նրանից տեղափոխվում է Թբիլիսի և մահանում 1919 թվականին 80-ամյա հասակում:

Հայրս իր հիշողությունները գրել է մահից մի քանի տարի առաջ, Այդ ծավալուն մի գործ է՝ գեղեցիկ 20 մեծաձավալ տետրերում:

Հորս ահա այդ հիշողություններից այժմ անհրաժեշտ ենք համարում հրատարակել մի փոքրիկ հատված հալատուր Արուսյանի մասին:

Մանրթագրությունները տրված են մեր կողմից:

ՊՐՈՖԵՍՐ ԱՔԱՆԱՍՏԱՆ

Ժապետ դուրս եկավ, տեսնենք թե քեզինք ի՞նչ դուրս կգա: Սրանից հետո հորեղբայրս ու Արուսյանը միմյանց ձեռք սեղմեցին և բաժանվեցին:

Արուսյանը ձեռքիցս բռնած ինձ տարավ իր առանձնասենյակը. խորշինից իմ գրքերն ու տետրակները հանեց, կարգալ տվեց և հետո տարավ նստեցրեց պատրաստական դասարանի երկրորդ բաժնում, և ապա դռնապուղի վրա կանգնեցին ասաց. «Ես ձեզ մի նոր ընկեր եմ բերել, մի լավ ընկեր. հույս ունեմ, որ դուք նրա հետ սիրով կվարվեք»: Դասերից վերջը երբ տուն գնացի, տատիս հայտնեցի՝ թե ինչ լավ է, որ ճաշից հետո է՛լ վարժարան չենք գնալու (ծխական դպրոցում, ուր առաջ սովորում էի, պարապմունքները մինչև երեկո էին տևում), Երբ երեկոյան հորեղբայրս տուն եկավ, ես նրան ասացի. «Հորեղբայր, ինչո՞ւ երբ տեսալը դուրս եկա ձեռքիցս առնելով ուզում էր գլուխս ծածկի, դու աչքով-ունքով իշարաթ անեցի՞ր»² չէի թողնում, որ ծածկեմ: Հորեղբայրս ինձ պատասխան չավեց. բայց երբ հայրս տուն եկավ, նա նրան մի առ մի պատմեց ինձ Արուսյանի մոտ տանելը և վարժարան տալու և նրա հետ խոսածների և նրանից լսածների բոլոր պատմությունը, ինչպես և գլխարկս գլխիցս վերցնելու և ձեռքում պահելու մասին: Պարզվեց, որ գլխարկ վերցնելն ունի իր պատմությունը, որը հետևյալն է.

Խ. Արուսյանը, որ շատ ինքնասեր անձնավորություն էր, չէր սիրում շուտ-շուտ քաղաք դուրս գալ և իրան հետո էր պահում քաղաքից, Բայց թե ինչպե՞ս է պատահում, մի օր, քաղաք է գնում և ուզենում է անցնել մեր քաղաքների³ շարսուից⁴, նկատում է, որ իրանից 15—20 քայլ հեռավորության վրա, իր առջևից, անցնում է ոստիկանական թաղապետը: Արուսյանը նկատում է՝ թե ինչպես շարսուի վաճառականներն աչ և ձախ ոտքի են կանգնում և խոսարհարար ողջունում, իսկ իրեն հանդիպած ժամանակ անտարբեր և սառը վերադրում:

Հորեղբայրս նույն շարսուի սատաֆի⁵ խանութ ուներ, Արուսյանը ալլալված գեմքով վերադառնում է շարսուի գլխից հորեղբորս խանութը և խնդրում, որ անմիջապես բոլոր վաճառականներին իր մոտ կանչի, նվ երբ նրանք գալիս են, Արուսյանը քաղաքավարու-

2. «Իշարաթ անել» — նշան անել, նշան տալ:

3. «Բազազ» — նպարավաճառ, շոր միտք վաճառող:

4. «Չարսու» — հին նրեանի ծածկված, երկար շարսուով ձգված հայ և թուրքական վաճառատները:

5. «Սատաֆ» — հին նրեանում կային անձեր, որոնք զբաղվում էին դրամներ փոխանակելու գործով կամ մանրացնելով. — որով շահագրգռական մի ձև:

թաւք ողջունելուց հետո, ասում է. «Պարոն-
ներ, ձեզ հավատացնում եմ, որ ես մի ա-
ռանձին փառասիրութիւն չունեմ և չեմ էլ ու-
նեցել անցյալներում, թեպետե՞՞նք ճշմարտութիւն-
ը խոստովանելով պետք է ասել, որ այդ
կիրքն ամեն մարդու մեջ էլ կա. թե՛ ուսյալ
լինի նա և թե՛ անուա. բայց ես այնուամեն-
այնիվ ամեն կերպ աշխատել եմ ինձ միշտ
հետո պահել նրանից. վասնզի ասված է.
«Փառքը ստվերի է նմանվում—եթե նրանից
տախտիս՝ ետեկից կգա, իսկ եթե նրա հետեկից
ընկնես, նա քեզնից կփախչի»։ Եվ ուրեմն
ասեմ ձեզ, այս շարատով մի քանի րոպե
առաջ գնում էր մի քանի քայլ ինձանից ա-
ռաջ պոլիցիական աստիճանավորը, տեսա թե
ինչպես դուք ամենքդ ոտքի էիք կանգնում,
գլխարկ վերցրած գլուխ էիք տալիս, իսկ երբ
ես նրանից քիչ հետո անցա, ձեզանից շա-
տերը անտարրեր. հազիվ էիք տեղներից
բարձրանում, գլուխ տալիս, կարծեք, թե այդ
էլ մի տեսակ ավելորդ էիք համարում... Բայց
եթե դուք մի րոպե մտածեք թե ո՞վ է պոլի-
ցիական աստիճանավորը և ո՞վ եմ ես, հա-
վատացած եմ, որ դուք ինքներդ ձեզ կդա-
տապարտեք ձեր անքաղաքավարի վարմանց
համար... Այո՛, պոլիցիական աստիճանավո-
րը ոչ այլ ինչ է, եթե ոչ այն, որ նա պետք է
հսկի փողոցների մարտնչության վերա, և եթե
սատկած շուն կամ կատու ընկած լինի, նա
պետք է իր ոստիկանին պատվիրի, որ ժամ
ուռալ սայլ վարձեն և տանեն քաղաքից դուրս
հողի տակով անեն... Բայց դուք քիչ անդամ
տեսած չեք, որ օրերով այդ ապականութիւն-
ները ընկած են լինում փողոցներում, սաս-
տիկ գարշառուութիւն են տարածում, որը
կարող է վարակիչ հիվանդութիւնների
պատճառ լինել։ Նոքա այդ մասին էլ անփութ
ու անհոգ են մնում, բայց այնուամենայնիվ
դուք նրանց պատվում և մեծարում եք... Իսկ
ձեր որդոց, ձեր զավակների ուսման և ա-
ռաջադիմութեան մասին մտածող և հոգացող-
ներին՝ ուսուցիչներին և դաստիարակներին
պատվել հարգելուց ձեզ հետո եք պահում...
Ահա՛ հենց այս ուղեցա ասել ձեզ և ուրիշ
ոչինչ... Եղատ ե՛ք, գնացե՛ք...»։

Այս ասելուց հետո Արուսյանը տեղից վեր
լ կենում ու հեռանում. և մեր յաղագրասնի
յաղագները մամթից մինչև ականջների կոթը
կարմրած, թողնում գնում են։

Այս անցքից հետո՝ Արուսյանին մի որեւէ
տեղ տեսնողները, թե՛ մեր շարսուփ բազա-
ղներ և թե՛ ընդհանրապես այս հանգաման-
քին տեղյակ անձինք աճապարում գլխարկ էին
վերցնում և խորին խոնարհութեամբ գլուխ
էին տալիս, ողջունում, նա էլ, իհարկե, իր
հերթին, փոխադարձաբար բարևում էր յո-
ւորին։

Որքան կարողացել եմ մտքիս մեջ պահել.
արքունի վարժարանում թե՛ ուսաց լեզվի և
թե՛ թվարանության առարկան ինքն Արուս-
յանն էր պարապում. բայց չդիտեմ, Գրուրե-
լի թվարանական մեթոդը ծանոթ էր նրան
թե՛ չե, բայց և այնպես նա իր հետ դասա-
րան էր բերում Քանաքեռից «կոռ» ասված
ընկույզներ, որոնք թեև փոքր, բայց համե-
մատաբար բավական ծանր էին և զործա-
դրութեան շատ հարմար, եվ, այսպես, Արուս-
յանը դառնում էր դեպի մեզ, ասում. «Այս-
ինձ ասա՛, Պողոս և կամ Թադեո՛ս, որ եթե
այսքան ընկույզ ձեռքիդ ունենաս և ես այս-
քան էլ ավելացնեմ քո ունեցածի վերա,
դու որքա՛ն կունենաս ձեռքում։ Եվ կամ թե՛
այսքան ընկույզիցը վերցնենք հանենք, դու
ձեռքումդ ինչքա՛ն ընկույզ կունենաս»։ Նույն
կերպով էլ պարապում էր յաղագրաստիւմ
և բաժանումը։

Կամ չեմ մտաբերում թե ինչու և ի՛նչ
հարցերին ես կարողացել էի լավ և պատշա-
ճին պատասխան տալ, բացատրել, և ահա
դասերից վերջը, նա վերցրեց ինձ և իմ ըն-
կերակիցներին ու տարավ քաղաք, քաղաքնե-
րի խանութը, իր ձեռքով խուրջիներին մի
թայլ դատարկեց մինի մեջ. իսկ այն դա-
տարկ թայլ մեջ չոր միջոց առավ լցրեց և
սասց իմ ընկերակիցներին։

— Եթե դուք էլ նահապետի պես պատա-
խանեք, ձեզ համար էլ միջոց կառնեմ։

Այդ նույն ժամանակ ինձ առանձնացնելով
ականջիս ասաց.

— Հենց որ ես կերթամ, քո ընկերներին էլ
բաժին տուր, մեղք եմ։

Եվ այդ պահուն ես ինձ այնպիսի երանու-
թեան մեջ էի գդում, որով ողևտրված այնպես
առատաձեռնութեամբ բուռ-փուռ բաժանեցի
ընկերներին, որ իմ բաժինս նրանցից ավելի
քիչ եղավ։ Մյուս օրը տեսալը իմ բացակա-
յութեան ժամանակը հետաքրքրվել էր իմա-
նալու՝ թե ես նրա պատվերը կատարե՞լ եմ,
ընկերներին բաժին տվե՞լ եմ, թե ոչ։ Եվ երբ
նրանք հայտնել էին՝ թե ես իսկապես նրանց
այնքան շատ տվեցի, որ ինձ նույնիսկ շատ
քիչ մնաց, այս հանգամանքը իմ վարքը շատ
էր բարձրացրել Արուսյանի աչքում, դրանից
հետո նա տկսեց ավելի շատ սիրել ու գուր-
գուրել ինձ։

Չմոռանամ ասել, որ մեր տանը հաճախող
բարեկամներն ու ծանոթները, երբ պետք էր
լինում Արուսյանի մասին խոսելու, ընդհան-
րապես մեծ գովեստով էին խոսում նրա
ուսուցչական պաշտոնավարութեան և տես-
չական գործունեութեան մասին. թե ինչպես
նրա շնորհիվ արքունի վարժարանը օրավոր
սկսել էր ծաղկել, օրավոր առաջադիմա-

կան ճանապարհի վրա էր դրված նրա հիմքը, որ Արովյանը չլավականանալով մինչև 1—2-ը, ճաշից հետո, ժամը 5-ից, նորից իր մոտ էր ժողովում երկրորդ և երրորդ դասարանների աշակերտներին և նրանց հետ գերմաներեն պարապում։ Ասում էին նմանապես՝ Վեհափառ Ներսես կաթողիկոսը, իբրեքին Արովյանին խոսք է ավելի, որ նրա ձեռնասուն աշակերտներից ավելի ընդունակներին էլ միաժամ ծախքով արտասահման—Գերմանիա է ուղարկելու, որ աշխտեղ հիմնավոր ուսում ստանան և վերադառնան, գան մեր կողմերում ուսուցչություն պարապեն։

Սառաֆ Մկրտիչը (իմ մորեղբայրը), որը բավականին հին հասկացողության տեր էր և իր ժամանակի ազդեցիկ մարդկանցից մեկը՝ լսելով Արովյանի մասին զովասանական խոսքեր, մի անգամ չղայնացած ասաց. «Դուք ինչքան կամենում եք զովեցեք Արովյանին, «փառաց փեթակը» հասցրեք, ես նրա մի վարժունքը իսկի լեմ հավանում։ Ախր ինչպե՞ս հավանեմ. մի էլ էն ես տեսնում, որ հրեա վարժարանի աշակերտներին զլխին ժողովեց, զինվորների պես շարքերով կանգնեցրեց, առաջ արեց, տարավ Թալարի բաղը⁶, Սարգարի ալդին⁷։ Դե հիմի էստեղ ալքդ բարին տեսնի—տեսնում ես, որ ամեն աշակերտի գրպանից հրեա մի-մի նախշուն լորդից շինած թուի է, որ դուրս է գալիս, սկսում է թուփակելով աշակերտների մեջ. հետո՝ աթըրմեն⁸, հետո աչքափափուկ և դրանց պակաս էլ ինքը տեսույն է չրացնում, զանազան նոր խաղեր, նոր թոխչներ սովորեցնում։

Հայրս, որ ընդհանրապես բամբասանքից միշտ խուսափող մարդ էր, ակնաց Արովյանի օգտին խոսել և դառնալով գեպի սառաֆ Մկրտիչը, ասաց. «Ուղիղն ասեմ, ես էլ չառաջք չեմ կարծիքին, էի, բայց քարերախտարար անցյալ շարթին գործով բերդը գնդապետ Վորոբիովի մոտն էի գնացել, Այն՝ ինչ որ մի քանի բույս առաջ դու ասացիր, նույնը ես զնդապետին հարտնեցել եմ նա ինձ ասաց. «Նա սխալվում եք, Գրիգորի Անտոնիչ, որ Արովյանին դատապարտում եք այն բույսի մասին, որ դովասանքի է արժանի։ Նա դրանով կամենում էր նոր կյանք մտցնել երև-

խաների մեջ, թարմ արյուն հոսեցնել նրանց երակներում»։ Հետո զնդապետը մի առանձին ողևորությամբ, զվարթացած, վերադարձվեց և զեմառդեմ կանգնելով, ասաց. «Գիտե՞ք, Գրիգոր Անտոնիչ, ալք ձեր Արովյանը մեր ուսանողի մասին լավ կարծիք ունի։ Նա այս օրերս մեր կոմենդանտին ասել է, թե ուս ազգը և ուսաց կայսերական կառավարությունը նախախնամությունից սահմանած աշխարհ է եկել, որ երկրազնդիս վերա եղած բոլոր քրիստոնյա ժողովուրդներին, որոնք դարերից ի վեր հեծում են քրոնոթյունների տակ, քոչորին էլ աղատի»։

Նվ, այսպիսով, ավելացրեց հայրս, զնդապետ Վորոբիովը, կարծեք թե լիպի բավարարված Արովյանի անկեղծ զգացմունքով արտահայտված տենչանքներից, դարձավ ինձ և ասաց. «Բայց դուք հալերդ գիտե՞ք թե ո՞վ է Արովյանը. նա Դորպատի համալսարանը ավարտած, բարձրագույն ուսում ստացած մարդ է և միաժամանակ լավ մանկավարժ, բառի իսկական իմաստով. ուրեմն դուք ոչ միայն որե՛կ առիթով նրանից դժգոհ, այլ ընդհանրապես, պետք է Աստուծոց շնորհակալ լինեք և գոհ, որ ձեզ այդպիսի պատրաստված ուսուցիչ և դաստիարակ է պարգևեց»։

Ահա այսօրինակ զովեստներ էինք լսում թե՛ մեր ծնողներից և թե՛ մեզ շրջապատողներից, մանավանդ թե՛ ավելի էլ զովեստի սրժանի վերաբերմունք էինք տեսնում մեր անմոռանալի տեսչից, երբ մի շարափախտ օր, զնում ենք արքունի վարժարանը և ի՞նչ ենք տեսնում՝ տխուր և թախծալի դեմքեր, այս և այն կողմ փսիսուք, ծածկախոսություններ, հառաչք, նույնիսկ չաց, և իմանում ենք թե մեր անգնահատելի ուսուցիչը, մեր բարի և պատվավան տեսուչը դիշերը տնից դուրս է գնացել և այլևս չի վերադարձել...

Վախաստեն, լացուկոծր սկսում է աշակերտներին մեջ, մեզ գրեթե բռնի տուն են ուղարկում. երեք օր ընդհատվում է ուսումը, և մենք միայն այն իմացանք, թե՛ մեր անմոռանալի տեսուչը սաստիկ վշտացած տնից դուրս է անկել և օգտվելով Ջանգու գետի գարնան օրերում վարարած, կատաղի գրոթյունից, իր փրկությունն ու հանգիստը նրա հոգևորների մեջ է փնտրել, որը աճապարանքով պետք է նրա խնկելի դին տաներ և Մայր Արաքսի գիրկը ձգեր։

6. Թալարի բաղը— դա նույնն է ինչ և Սարգարի (պարսից շահի կողմից Երևանի կառավարչի անունով) ալդին, որը գտնվում է Զանգու գետի աջ ափի վրա։

7. Եթըրմեն— պատանակական խաղ, որի մեղոցին մեկը կզու՞մ է, իսկ ուրիշները՝ նրա վրայից ուսումնա՞ն։

❦❦❦

Անցան այս օրից ավելի քան հիսուն երկար ու ձիգ տարիներ. լավ չեմ հիշում թե ինչպե՞ս և ինչտեղի՞ց ձեռքս ընկավ մի շատ սիրուն և պատշաճին բանահյուսություն, որից մի օրինակը տվի անցյալ տարի մեր հայ անդրիագործ պարոն Անդրեաս Տեր-Մարությանին⁸, իսկ ահա մի օրինակը զետեղում եմ այստեղ, որպես վերջաբան այս երկտող հուշերիս.

8. Խաչատուր Արուսյանի արձանի ստեղծագործողը, որն ստացել էր մասնագիտական արվեստը Յրանսիում, երևանցի էր և ապրում էր Փարիզում, որտեղ և մեծ կարիքի մեջ լինելով՝ վախճանվում է և ծաղկում այնտեղ:

Դերեզմանդ կորած,
Ալքից հեռացած,
Մտքից մոռացած,
Աշխարհը անլեզու,
Մարդիկը անիրավ,
Հեշ չհարցրին,
Թե խեղճ Արուսյան
Ո՞ւր գնաց կորավ...
Ոչ սուրբ հիշատակդ
Սրտից կտրուցվեք,
Եվ ոչ էլ քարե
Արձան վրեժ կանգնեցինք⁹,

9. Տեղեկություններ կան, որ այս ոտանավորի հեղինակը Միքայել Նալբանդյանն է, — այսպես էր պնդում հայրս: Համենայն դեպս, ով էլ որ լինի այս ոտանավորի հեղինակը, որ արդարացի քննադատության է ենթարկել իր ժամանակում գոյություն ունեցող անտարբերությունը Արուսյանի նկատմամբ, մտքովը չի անցել, որ Արուսյանի մեծարողը և արժեքավորողը լինելու է մեր եկող նոր սերունդը:





ԲԱԶՄԻՎ ՍԱՐԿԱՎԱԴ ԳԵՈՐԳԵԱՆ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ



Սայաթ-Նովան զրել է Թրիխսիի մաքուր ու անխառն բարբառով, որը հայ բարբառագիտության մեջ պատկանում է «ում» ճյուղին, բայց հատուկ է միայն Թրիխսիի համար, իսկ իր երգերի բարբառային լեզվի մեջ մեկ-երկու աննշան փոփոխություններ (շեղումներ¹) է կատարել, Դրանցից մեկը՝ «է» օժանդակ բայի երրորդ դեմքի փոխարեն «ա» օժանդակ բայի գործածությունն է։ Այդպիսի շեղումներ Սայաթ-Նովան կատարել է հանգերի համար, Մնացած մի քանի դեպքերում «ա» օժանդակ բայը գործածում է միայն բանաստեղծական արվեստի խաղ անելու նպատակով։ Որոշ շափով շեղումներ են կատարված նաև բառերի գործածության մեջ, երբեմն, դիտարկության, տառադարձության և հանգերի պահանջով օգտագործել է բառեր ոչ Թրիխսիի բարբառով։ Օրինակ, ըստ Թրիխսիի բարբառի պետք է զրել՝ «վո՛ւր տիղունց իս գալիս», զրել է «ուատի՛ դու քաս», կամ «տիսնիլովի փոխարեն զրել է «տեսալով» և այլ նման բառեր։

Սայաթ-Նովայի կատարած շեղումները չափազանց չնչին են։ Նա զրել է Թրիխսիի մաքուր բարբառով, առանց այն խառնելու այլ բարբառի հետ կամ դարբարին։ Մասամբ դրանով պետք է քաջատրել նրա լեզվի գեղեցկությունը։ Բայց միայն մաքուր բարբառը չէ, որ Սայաթ-Նովայի բանաստեղծական լեզուն դարձրել է ալիքան ճոխ, ճկուն և խոր խոհեր ու զգացմունքներ տրտահայտելու քնդունակ լեզու։ Բանաստեղծը զրելով աշխարհիկ լեզվով, հրաշագործել է այն, հաղորդելով նրան հայ լեզվի պարզությունը, պատկերավորությունը։

1. Շեղումները պատահում են միայն նրա հինգ երգերի մեջ։

«Թե վուր սարերուն հանդիպիս
կու հալիս մումի նման»
կամ՝

«Աշխարհս աշխարով կշտացավ, իմ
սիրտը քեզնից սով մնաց»
եվ թե՛

«Թե վուր հոքուտ կամքն իս անում,
մարմինդ բեղամաղ է ըլում»։

Հոյակապ լեզու է նրա բանաստեղծության լեզուն։

Սայաթ-Նովան խոսքի վարպետ է։ Նրա խոսքերը փայլում են շողողուն երանգներով և նուրբ երաժշտականությամբ։

Խարսխված մարդկային հոգու ամենանուրբ զգացմունքների վրա, բանաստեղծի խոսքը դարձել է հարազատ, կենդանի, անմիջական խոսք։

Սայաթ-Նովայի լեզուն միտք է և զգացմունք, խոսք է և մեղեդի։

Նրա բանաստեղծական լեզուն պարզ է, հստակ առանց մտքերի խճողման։ Ոճը վեհ է, հանդիսավոր, բայց ոչ խրթին ու վերամբարձ։ Պատկերները խոսուն են և արեւելյան գունազեղությամբ լեցուն։ Բանաստեղծն իր երգերի մեջ հեռու է միօրինակ և ձանձրալի լինելուց, չնայելով իր թեմայի միօրինակության, որ է սերը՝ իր զոգալին։

Հանգավորման մեջ նույնքան վարպետ է, որքան պատկերներ նկարելու մեջ։ Նա չի նեղվում բառեր գտնելուց և բնավ չի քաշվում օտար բառեր գործածելուց։

Հրաժարվելով բառերի առողանությունից պարագայան վերջնաշեշտ սխառնմից, Սայաթ-Նովան իր բանաստեղծությունների մեջ կիրառել է ժողովրդական արտասանության հարաշեշտը և նախահարաշեշտը։ Շեշտադրման այս սխառնմի շնորհիվ, բանաստեղծը մեր տաղաչափության մեջ կիրառել է պարզ ու կանոնավոր քաղմազան ոտքեր։ Մի բան, որ հատուկ է միմիայն ժողովրդական ստեղծագործություններին (ժողովրդական խաղիկ-

ներին), բայց ոչ երբեք մեր միջնադարյան բանաստեղծներին ու տաղերգուներին: Ժողովրդական շարահրուսթյան այս կենդանի սխտանն է. որ նրա երգերին տվել է մինչ այդ հայ բանաստեղծության մեջ չեղած և չգերազանցված երաժշտականություն: Ահա նրա ռեանի վուր ջան իմ...» երգը, որը բովանդակությանը համապատասխանող լավագույն ու կշռությամբ (ռիթմով), ինչպես նաև երաժշտականությամբ մի գույն գործող է.

Ռանի վուր ջան իմ, յա՛ր, քի դուրբա՛ն
 իմ. աքա ի՛նչ անիմ՝
 Արտասուներ անիմ. շատ հոքուց հանիմ,
 յա՛ր, զադետ տանիմ:
 Ասիր. «Ջելրան իմ»: Թուղ քի սելը
 անիմ. յա՛ր, մըտիկ անիմ.
 Ընտ թաղչեն նազով, քիզ գովիմ
 սազով, յա՛ր, իլթիմազով:»

կամ՝

«Թե մանիշակ ասիմ՝ սարեմեն կոսին,
 Թե ջավահիր ասիմ՝ քարեմեն կոսին,
 Թե վուր լուսին ասիմ՝ տարեմեն կոսին,
 Արեզակի նման փարա իս. գո՛ղալ:»

Հնչյունանմանությունների. ասոնանսների. այդտեղացիաների արտակարգ ճոխություն ու հարստություն ոգտագործելով իր ստեղծագործությունների մեջ, Սայաթ-Նովան ոչ մի դեպքում իր լեզվի երաժշտականությունը չի զոհաբերում ոչ բանաստեղծական տողի առողջանական շարահյուսության և ոչ էլ նվազագույն լավագույն դիմում որևէ արհեստականության: Սա՛ է նրա հանճարի մեծությունը:

Սայաթ-Նովան առաջին մեծ հեղինակներից մեկն է հայ նոր դրականության սկզբնավորողների շարքում, որոնք դիմել է անդրկովկասյան և Մերձավոր Արևելքի ժողովուրդների դասական բանաստեղծության և ժողովրդական բանահյուսության մայր աղբյուրին. ոգովն այդ բանաստեղծության կենդանի և գունեղ հնարներին:

Առանձնապես մեծ է եղել Սայաթ-Նովայի կապը ադրբեջանական դասական բանաստեղծության և բանահյուսության հետ: Նա հրաշալի գիտեր ադրբեջանական գրականությունը, մանավանդ Նիզամի-Գյանջևի ստեղծագործությունը: Գեղեցիկի, վեհի, անկաշառ սիրտ և ուրախության գաղափարները արտահայտելու համար, բանաստեղծը համեմատության կարգով օգտագործում է ադրբեջանական բանաստեղծության պատկերները և կենդանիները. հատկապես Նիզամու Լեյլիի ու Միջնուհի, Ֆահրատի, Շիրինի և Իսկենդարի կենդանիները:

Բանաստեղծը շրջելով ժողովրդի մեջ, լսել է գուաններին և միաժամանակ հատուկ ուշադրություն դարձրել ժողովրդական ֆոլկլոր-

րի վրա: Այս առթիվ Սայաթ-Նովան իր խառնիքի մեկի՝ «Շատ սիրուն իս, Շախաթայի ասողին՝ խար չիս անի» (ԻՔ) տողատակի ծանոթության մեջ գրել է. «Յիս մըղղըսու վուրթի Արուսիկա պըստուց ինչ որ յարսուն տարին գույն դրի ամենայն խաղին»:

Սայաթ-Նովան մեծ վարպետությամբ կիրառել է ժողովրդական բանահյուսությունից այնպիսի յուրահատուկ հնարներ, ինչպիսիք են անձնավորումը՝ «Էշխը վառ կրակ է՝ էրվելով գու քա...», պատկերավոր համեմատությունը՝ «Ծն մի փոքրը նավի նման, քու էշխըն է ծով», գեղեցիկ վերադիրներ՝ նրա սիրուհին «Թուրի դուր չե», «Ծովեմեն դուրս եկած ուշ ջելրան է» և այլն:

Բացի ժողովրդական բանահյուսության այդ հնարներից, մեծ բանաստեղծ իր ստեղծվածքների մեջ մտցրել է նաև ժողովրդական բառ ու բանի ուղղակի նմանները՝ առանձնավոր խոսքերով:

Ժողովրդական բանահյուսության հետ միասին Սայաթ-Նովան ոգտագործել է գուսանական անցյալի գրականության և արվեստի բոլոր ներուժները (առանձնապես այդ նկատելի է բանաստեղծի ոտանավորների տաղաչափության և եղանակների մեջ): Ամենից շատ Սայաթ-Նովայի ստեղծագործության վրա ազդեցություն է թողել Նազալ Հովնաթանը. թեև սրա անունը չի հիշում, բայց իր երգերից մեկի տակ (խաղ ԽՔ) ունի այնպիսի ծանոթություն. «Էսպես Արուսիկի սասած թասիրըն չինի կարմիր դիրի խաղի հանգումը: Իսկ այդ խաղը Նազալ Հովնաթանին է (տաղ ԼԳ. «Նոտիմք ի մեջիս»): Նշանակում է, որ այդ նույն երգը տարածված է եղել Սայաթ-Նովայի ժամանակ ու բանաստեղծի ցույց է տալիս, որ Ռանի վուր ջան իմ» երգը եղանակով խաղի հանգով (նշանակով): Սայաթ-Նովան բազմաթիվ լեզվական և ոճական փոխառություններ ունի Նազալ Հովնաթանից:

Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների դասական բանաստեղծության, ժողովրդական բանահյուսության և գուանական, արվեստի տարրերի ոգտագործումը Սայաթ-Նովայի կողմից, նրա երգերին տվել է խորը ժողովրդականության րնուլթ և բացառիկ կախարհանքի հրապույր: Այդ տարրերի ատաղձի վրա, բացառիկ հանճարով օժտված բանաստեղծը հորինել է բազմաթիվ ինքնուրույն բանաստեղծական հոյակապ սյուրիերներ:

Պատկերավորությամբ առանձնապես այդի

2. Նազալ Հովնաթանից փոխ առած բառերի և ոճական պատկերների ցանկը տես Գ. Լեոնյանի «Սայաթ-Նովա», գրքի առաջաբանում, 1931 թ., նրբեմ:

են ընկնում նրա սիրո երգերը, իր սիրունուն
զեղեցկությամբ և արտաքինով փարթամ
հերկայացնելու համար ոչ մի գույն և համե-
մատություն չի խնայում Սայաթ-Նովան.

«Դու ես պիսն շուհարդար իս, վերետ
զարնըշան է քաշած.
Դաստամազիտ թիլի մեշըն մե շադա
մարջան է քաշած.
Ալքերըտ ասկե փիալա՝ շարխեմեն
փընջան է քաշած.
Թերթերուկըտ՝ նիտ ու նաշտար սուր
դալամթրաշ, նազանի:

Նրեսըտ՝ փարսեար ասիմ, նըման է
շամս ու դամարին,
Բարակ միշկիտ թիրման շալըն՝ նման է
ոսկե քամարին.
Ղալամըն ձիոին չի կանգնում, մաթ
շինեցիք նաղըշքարին.
Յիփ նըստում իս — թութի դուշ իս,
չիփ կանգնում իս՝ ուշ, նաղանիս:

Իր սիրունու արտաքին զեղեցկություննե-
րը նկարագրելիս, բանաստեղծը գործածում
է ժողովրդական բազմաթիվ համով-հոտով
վերադիրներ, լայց ալնպիսինները, որոնք
միաժամանակ ներկայացնում են սիրունու
թե՛ ներքին՝ հոգեկան և թե՛ արտաքին՝ ֆի-
զիկական զեղեցկությունները: Այսպես օրի-
նակ՝ նրա «գոզալի մեշքը Սալբու լինար
է», զեմքը՝ «նորալուսին», «առավոտվան
արև», լեզուն՝ «շաքար ու նարաթ» և այլն և
այլն:

Սայաթ-Նովայի սիրո երգերը աչքի են
ընկնում իրենց երանգների ճոխությամբ և
բազմազանությամբ: Երանգների տեղին և
վարպետ օգտագործման շնորհիվ է, որ բա-
նաստեղծը ամեն անգամ խոսելով միևնույն
առարկաների շուրջը, նրանց նոր կյանք, նոր
ձևով կենդանություն ու կոնկրետ բավակա-
նություն է տալիս:

Բերենք մի քանի օրինակներ:

Մի զեպքում երբ բանաստեղծը ցանկանում
է արտահայտել իր կարոտը սիրունուց, ցույց
է տալիս բլրույի դարիք ու կարոտ լինելու
հանգամանքը.

«Վունց վուր դարիք բլրույն մե տարով
բալին կարոտ է...»:

Մի այլ զեպքում նա դիմելով բլրույին,
ընդգծում է իրենց վիճակների ընդհանրու-
թյունն ու տարբերությունը.

«Ուստի՞ գու քաս, դարիք բլրույ,
Դու մի՛ լաց լի, ես իմ լալու.
Դու վարթ պըտոե, ես փոզալին,
Դու մի՛ լաց լի, ես իմ լալու»:

Մի երրորդ զեպքում բանաստեղծն ար-
տահայտում է իր սիրունուց զրկված լինելու
հանգամանքը՝ բլրույի բաղից զրկված լինելու
միջոցով.

Արնուտ մարալ իմ, սարեմեն

զըրգվիլ իմ,
էշխի թաս խմած, սաղեմեն զըրգվիլ իմ.
Ղարիք բլրույ, դաղեմեն զըրգվիլ իմ...
(Ազրեքե. 35):

«Ինչ անսպասելի բազմազանություն է կարո-
ղացել մտցնել բանաստեղծը (Սայաթ-Նո-
վան) այդ թվացող միաներանգության մեջ, —
գրում է ոռա մեծ բանաստեղծ Վ. Բրյուսովը,
խոսելով Սայաթ-Նովայի մարդկային հոգե-
վիճակներ և ապրումներ արտահայտող ե-
րանգների մասին, — նա համարյա ամեն
տեղ խոսում է սիրո մասին, բայց ինչքան
բազմազուն են սիրո երանգները նրա տար-
քեր բանաստեղծություններում — բոլոր այդ
անցումները մեղմ փոխությունից զեպի բո-
ցավառ խանդավառությունը, հուսահատու-
թյունից զեպի ցնծությունը, իր նկատմամբ
ուսեցած կասկածից զեպի արվեստների
հայալու ինքնագիտակցումը: Իրավամբ Սա-
յաթ-Նովային կարելի է անվանել «երանգ-
ների բանաստեղծ»: 18-րդ դարում նա առա-
ջին իրականացրել է Վերլենի տված ափսո-
ղը. «Ոչ թե գույներ, այլ միայն նրբերանգը»:

...Բայց միևնույն ժամանակ Սայաթ-Նո-
վայի երգերի մեջ ինչքան սուր, խոր ու հյու-
թեղ են այդ սերանգները. նրանց մենք բն-
կալում ենք որպես ամենապայծառ գույներ,
որոնց հետ շին կարող մրցել վրձինի նվազ
հաջողակ (ուղղակի ասենք՝ ափելի նվազ
հանճարեղ) բանաստեղծները, որոնք շատ
թանձր ներկեր են օգտագործում: Նուրբ և
քնքուշ վրձինով է նվարագրել Սայաթ-Նո-
վան և դրանով ափելի շատ է նրա միշտ էլ
գերող բանաստեղծությունների հմայքը:

Սայաթ-Նովայի ստեղծագործության բա-
նաստեղծական ամենախոշոր արժանիքնե-
րից մեկն էլ այն է, որ նա չի բավականացել
միայն համեմատություններով, վերադիրնե-
րով, վառ պատկերներով և բանաստեղծա-
կան այլ մոտեցումներով, այլև ստեղծել է
պատկերներ որևէ դրուժյան կամ դարձ-
դուժյան նկարագրությամբ: Մի բան, որ
միջնադարի հայ բանաստեղծների մեջ հա-
տուկ է միայն նահապետ Քուլալին.

Քուշակը, դիմելով սիրունուն, գրում է.

«Նս մեռնիմ ի քո վերայ, դու զքո
ծամդ կարես,
կտրես, մաշալա վառես, ձեռքդ
առնուս ու դիս փնտռուս,
կամ ի հողվերօքս անցանես, հետ լնուս
զաշերդ ու թափիս,
Գրկիկ մը վղիս ածես, զապառած
վէմդ համքորես»:

Սայաթ-Նովան դիմում է յարին ասելով.

«Ղարուզ ունիմ քու խաթրու ինձ
սըպանին,
Հենչաք ըլի, յա՛ր, գաս իմ
գերեզմանին» —
Ածես խաղըն վրես ափով նազանիս:

Կամ

«Նս քեզանից լիմ հեռանա թե չի
հասնի մահիս վազին,
նփ մեռանիմ, շաղ տո՛ւ վրոնս
դաստամազի թելի շաղեն»:

Սայաթ-Նովան շատ լավ է պատկերացրել
իր բանաստեղծական հանճարի ուժը. եթե
Հելլադան իր յոթն իմաստուններով է պար-

ծենում, ապա մեր բանաստեղծը ինքնավրա-
տահ է, որ իր խոսքերն ավելի արժեն քան
յոթն իմաստուններինը.

«Կանց յոթըն իմաստասիրացն շատ է
էս քո Սայաթ-Նովա բանքիրըն մեմեկ»:

Նա համաշխարհային մեծ գրողների նման
գիտակցել է իր օտեղծագործության անմահ
լինելը ապագա սերունդների համար, և ր
գրել է.

«Ամեն մարթ չի կանա խըմի՛
իմ ջուրըն ուրիշ ջըրեն է.
Ամեն մարթ չի կանա կարդա՛
իմ գիրըն ուրիշ գրեն է:
Բունիաթս ավաղ չիմանաս՝ քարափ է,
քարովըրեն է...»

Եվ իրոք անմահ է հայ ժողովրդի հան-
ճարեղ բանաստեղծը:

«Մի ամբողջ ժողովրդի սրբօրն է Սա-
յաթ-Նովան, անմաշ ու անմահ»:

Ով նրան մին լսեց, մյուս անգամ ուժելի
սիրով կլսի, ով նրան մին սիրեց, էլ չի
դադարի սիրելուց:

Ճշմարիտ, որ էսպես է մեր վիթխարի Սա-
յաթ-Նովան» (Հ. Թումանյան):





Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ՌՈՒՄԻՆԱԶԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՎԱՏԱՐԱՐԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՆՈՐԻՆ ՍՈՐԻԲ ՕԾՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

Ս. ԷՋՄԱՍԻՆ

Վ Լ Կ ա փ ա՛ ռ Տ Ե Ր .

Ռումանահայ նորակազմ բեմական խոր-
նուդս, բնորված տարվույս 11 մայիսի
բեմական պատգամավորական ժողովի կող-
մե, մեր աշխատանքի նոր շրջանի սեմին,
մեր սեպուն պարտքը կհամարենք, հավա-
տարմության և երախտագիտության զգա-
ցումներով գեղուն հոգով մեր որդիական
ամենաջերմ սիրտ ողջույնը աղղելու մեր նվի-
րական Սուրբ Էջմիածնա Մայր Աթոռին և
Ջերդ Սուրբ Օծության, համակված ըլլալով
այն մխիթարիչ մտածումով, թե Ջերդ Վեհա-
փառությունը, մեր Հարազատ Հայրենիքի՝
Սովետական Հայաստանի կենսատու արևին
հեբհև, մեր աստվածակառույց Սուրբ Եկեղե-
ցին կառաջնորդե քրիստոնեական առաքելա-
վանդ շունչով, ազգային միասնականության
շինարար ոգիով և մեր Մայր Հայրենիքի գե-
րազույն շահերու պայծառ գիտակցությամբ:

Որպես հայ ժողովուրդի զավակներ, մենք
երջանիկ ենք և հպարտ, որ մեր հազարամ-
յա Սուրբ Եկեղեցին, Ջերդ Վեհափառության
իմաստուն և հայրենանվիր հովվապետու-
թյամբ, անվերապահորեն կցտնվի աշխարհի
խաղաղության համար մարտնչող ուժերու
կողքին, որոնց գլուխը կանգնած են սովե-
տական ժողովուրդները, խաղաղարար մեծ
Առաջնորդի ղեկավարությամբ:

Թույլ ավեք, որ ռումանահայ հայրենասեր
ժողովուրդի անունով, անգամ մը ևս ներկա-
յացենք Ջերդ մեր անալլալ կամք՝ ընթա-

նալու Ջերդ Վեհափառության բարձր հեղի-
նակությամբ սրբազործված այս լուսավոր
նաճապարհեն, Ռումեն ժողովրդական Հան-
րապետության խաղաղասեր ժողովուրդի
կողքին, Ռումանահայ դեմոկրատական կա-
միտեի հետ միասնաբար աշխատելով մեր
բոլոր ուժերով, ի խնդիր խաղաղության վեհ
զաղափարի հաղթանակին, ի խնդիր ժողո-
վուրդներու միջև համեքաշխ ու եղբայրական
գործակցության, ի խնդիր մարդկային կյան-
քի անկաշկանդ հառաքիմության և բարո-
ւության:

Մենք բոլորս, մեր ժողովուրդին հետ միա-
տեղ, Ջերդ Վեհափառության օրհնությամբ,
մեր Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաս-
տանի կողքին ենք, սառաբելու համար հա-
նուն խաղաղության մղված պայքարին և
ծառայելու համար մեր հարազատ երկրի
վերելքին ու ծաղկման, որ թեև աշխարհա-
գրականորեն հեռու է մեզմե, սակայն այն-
քան ժուռ է և այնքան մտերիմ մեր սրտե-
րուն:

Ջերդ Վեհափառության հրավերով և մեր
Սովետական Հայրենիքի Կառավարության
հոգածությամբ, թեմիս առաջնորդ գերաշնորհ
տեղ Վազգեն եպիսկոպոսի վերջին այցելու-
թյունը Սովետական Հայաստան 1951-ի ամ-
ռան, երջանիկ առիթ մը հանդիսացավ, որ
մեր գաղութը անգամ մը ևս հաղորդվի հայ-
րենի կենարար շունչով, անգամ մը ևս օգե-
վորվի ու ցնձա հոգեպարար բարի լուրերու-

վր, որ մեր սրբազան հայրը մեզ բերավ ի մասին մեր Հայեկեփի հսկայաբազմ հառադրիմայանց՝ շինարարության, հարտարարական ծավալման և մշակութային վերելքի ուղիներով:

Հուսացյալ սրտով, խոնարհաբար կխնդրենք Ձերդ վեհափառութենեն, որ նաև հետ այսօրիկ հաճիք մեզ շնորհելու նոր առիթներ՝ այցելելու մեր Մայր երկիրը և Սուրբ Էջմիածինը, որոնք մեր կյանքի մշտանորոգ աղբյուրները կմնան հավիտյան:

Ընդունեցեք, վեհափառ Տեր, մեր ջերմա-

ղին բարեմաղորությունները Ձեր առաջնության և արևշատության, ինչպես և Ձերդ Արքայության եկեղեցանվեր ու հայրենասեր զործոց փառավոր հաջողության համար:

Մատչելով ի համբույր Ձերդ Սուրբ Օծության օրհնարաշխ Աջույն, մնամք Ձերդ հավատարիմ և հայրենաբաղձ օրդիք:

Առաջնորդ՝

ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(Թեմական խորհրդի անդամների ստորագրություններ)

Ուրեկ, 8 հունիս 1952

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ՍՈՑԻԱԼՈՒՄ

Մայիսի 30-ին Սոֆիա ժամանեցին սովետական կոմպոզիտորներ Արամ Խաչատրյանը և Արկադի Դիրկաչենկոն, ներկա գրողներ Զամար Բուլդար Երաժշտական ստեղծագործության ստուգատեսին:

Հունիս 4-ին ընկ. ընկ. Գ. Շիրինյանի, Վ. Մուսեյանի, Կ. Կարապետյանի, Բ. Թյուֆենկճյանի և Գ. Պարակյանի բաղկացած պատվիրակություն մը, բուլղարահայ «Նրեվան» հառադրիմական միության կեդրոնական վարչության անունով այցելեց Արամ Խաչատրյանին և բուլղարահայության կողմից լայն զարգացած մաղթեց հայ ժողովրդի տաղանդավոր զավակին:

Պատասխանելով թերթի խմբագիր ընկ. Բ. Թյուֆենկճյանի հարցումներուն, ընկ. Ա. Խաչատրյանը հայտարարեց.

— Սովետական Հայաստանի կայացելով պարբերաբար, Վերջին անգամ Նրեան կըրտնորվի քանի մը ամիս առաջ, Հայաստանի մեջ կյանքն ընդհանրապես և կուտորական կյանքը մասնավորապես կընթանան բոլոր վերջի թափով: Շինարարությունը վհառադրիմ անտրինակ արագությամբ: Ասիկա մասնավորապես աչքի կզարնեն Նրեանի մեջ, որ յուրաքանչյուր այցելությանս քաղաքն անձանաչիլի ըլլալու լափ փոխված կզտնեմ: Հայկական ՍՍՄ Կառավարությունը ինժեքնակարան նվիրած է Նրեանի մեջ:

Հայաստանի երաժշտական կյանքին մեջ վերջին տարիներու քննորոշ երևույթն է երիտասարդ տաղանդավոր երաժիշտներու փաղանգի մը հայտնությունը, ինչպես Ալ. Հարությունյան, Արնո Բարաջանյան, էդ.

Միրզայան և ուրիշներ, որոնք արդեն իսկ տունն կարևոր ստեղծագործություններու:

Իր նորագույն ստեղծագործություններու մասին ընկ. Ա. Խաչատրյանը րսավ.

— Ներկայիս կաշխատիմ «Սպարտակ» մեծ քաղնին վրա, որ ավարտելու վրա է և սրտն նյութը առնված է հոսմեական կապրության դեմ ապստամբող ստրուկներու առաջնորդ Սպարտակի կյանքեն: Սույն քաղնին առաջին անգամ պիտի ընթացիլ ինչիսքադի մեջ Նպոր Մոսկովի դեկավարություն: Ձեռնարկած եմ նույնպես «Աղմիրա» Ուշակով ֆիլմի երաժշտության ձայնազորման:

Քաղնի ասկե, կշարունակեմ ձայնագրել սովետահայ ժանաստեղծ Աշոտ Գրաչի րանաստեղծություններու շարքը, որոնք կերպիլի ժողովուրդին կողմն: Այսպիսով կուղնեմ դհահացում տալ Հայաստանի ժողովուրդին կողմն հայտնված քաղնանքին: Տարիներ առաջ, երբ հայ ժողովրդական ստեղծագործությունները ստումնափրկելու համար կըրթին Հայաստանի գյուղերը, ժողովուրդը չերմային կերպով և ծաղիկներու տարափով ընդունեց զիս, արջունքներ խելով իմ աչքերես: Հայ ժողովուրդը այդ առթիվ փափաղ հայտնեց, որ նոր երգեր գրեմ իրեն, ու ես կփառարեմ ա-նոր կողմն գրված սույն նվիրական պարտականությունը:

Մասնավոր հաճույքով կերպիլի «Գարուն Նրեան, սիրուն Նրեան» և հայ ժողովուրդի մեծ զավակ Անաստաս Միկոյանի ձոնված երգերը:

Կոմպոզիտոր Ա. Խաչատրյան ծնած է 6
օտոնիս 1904, Թբիլիսիի մեջ: Իր երաժշտա-
կան կրթությունը ստացած է Մոսկվայի մեջ
ականավոր երաժշտագետ Հանդուցյալ պրոֆ.
Միսակովսկիի մոտ, կոնսերվատորիայի
դասընթացքը ղեկավարեցություն ավարտելով
1934-ին. որպես յաութիստ: Այսպիսով իր

ամուսնը արձանագրված է կոնսերվատորիայի
մարմարե տախտակին վրա ոսկյա տառերով:
Ընկ. Արամ Խաչատրյան մասին հետո:
բերթվեցավ լուսղարահայության կյանքով և
հրաժեշտի պահուն հանձնարարեց իր ջիւմ
ողջույնները հաղորդել անոր, «Նրբան» թեո-
թին միջոցով:

(«ԵՐԵՎԱՆ», Սոփիա)

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԸ ԼԱՆՋԱԽԱԶ Է ՏԱԼԻՍ ՀԱՔԵՇ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Վերջերս, Հաբեշ Կայսեր քարծր կաղա-
ղությամբ, Երուսաղեմի Հաբեշ տեղապետու-
նը ունեցավ իր եպիսկոպոս տեսուչը հան-
Աին զերաշնորհ տեր Ֆիլիփիոս սրբազան
եպիսկոպոսի:


Մուրը Աթոռույս զերաշնորհ տեղապետ
սրբազանը օգտվելով առիթից և մահաժանո
նկատի ունենալով այն լայն բարյացակա-
մութիւնը, որ Հաբեշ Վեհափառ Կայսրը
յուրյց կուտա իր երկրի հայազգի հպատակ-
ներուն, զեղեցիկ դադափարը ունեցաւ Ս.
Զատիկի առթիվ պարգևատրել հաբեշոց զե-
րաշնորհ տեսուչ սրբազանը պանակեալ մը.
իսկ այս օրերս Երուսաղեմ գտնվող Հաբեշ
Կայսեր պատվիրակ հոգեշնորհ վարդապե-
տը վարդապետական լանջախաշով մը:

Սույն եղբրները 22 ապրիլին հանձնվեցան
իրենց զերաշնորհ տեղապետ սրբազան հոր
կողմէն երբ անոնք Ս. Զատիկի շնորհավորու-
թյան համար եկած էին Պատրիարքարան:

Գերաշնորհ տեր Ֆիլիփիոս եպիսկոպոսը
և հոգեշնորհ կայսերական պատվիրակ հայ-
րը այս անանկեալ եղբրներին կարի յղած-
ված, հուզումով և սրտառու խոսքերով ար-
տաճալտեցին իրենց սերն ու հարգանքը
հայ ժողովուրդին և մասնավորապէս Երուսա-
ղեմի Հայոց Պատրիարքարանին նկատմամբ
և խոստացան Վեհափառ Կայսեր մասնավոր
ուշադրության հանձնել այսօրվան այս
դեպքը մասնավորապէս և ընդհանրապէս
մեր Պատրիարքության բարյացակամ դիրքը
իրենց նկատմամբ, որպէս ժամենն ան-
կեղծ բարեկամներ, հայրեր և հովանավո-
րողներ Երուսաղեմի հաբեշ համայնքին:

(«Հայաստանյայց Եկեղեցի»,
օգոստոս, 1952 թ.)





ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

ՊՐՈՖ. — ԴՈԿՏ. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ԶԱՓԱԾՈ ՏՈՄԱՐԸ

§ 1. Մեզ հայտնի և չհրատարակված հայ տոմարական աշխատությունների շարքում, իր օրիգինալությամբ և հնությամբ, ուշադրության արժանի է Սարգիս Փիլիսոփայի «Պատճէն տաւարի» աշխատությունը:

Սարգիս Փիլիսոփայի տոմարական այդ աշխատության մասին հայագիտական գրականության մեջ, որքան մեզ հայտնի է, ոչինչ չի խոսված: Ինքը, հեղինակը նույնպես հայագիտության մեջ անծանոթ անձնավորություն է: Նրա կյանքի ու գործունեության մասին սկզբնաղբյուրները զարմանալիորեն յուրմ են:

Սարգիս Փիլիսոփայի մասին մեր ունեցած կցկտույ տեղեկությունները հետևյալներն են:— Մնողները բնիկ խաթիցի են. հոր անունն է Ամենավազ, իսկ պապինը՝ Բարիզաս: Հեղինակի տոմարի վերնագրում հետևյալն է ասված. «Սարգսի, որդւոյ Ամենատաւի, Թոռի Բարիզասի ասացեալ...»:

Սարգիս Փիլիսոփայի տոմարի մի բառակից երևում է նույնպես, որ պապը Բարիզաս անունից րացի, ունեցել է և Ֆոանկ անունը:

«Ըն ընթերցողն յիշել պարտի
Գրածալ Սարգիս Թոռն Ֆոանկի»¹:

Հավանական է, որ սա այն Ֆոանկն է, որը հիշվում է Ներսես Տարոնեցու հիշատակարանում որպես 1332 թվականին ընդօրինակված Աստվածաշնչի նվիրատուներից մեկը. «... ողորմութեամբ Սուրբ Աստուածածինին ետուն ի ծախս Աստուածաշնչի» իրականչիւր ըստ կարողութեան իւրում վասն

յիշատակի... Ռամանոսն և իւր մայր՝ ԼԶ (36) դրամ, Ֆոանկ ելյարեցին ճ (100) դրամ (ընդգծումը մերն է— Ա. Ա.), Անտոն Ի (20) դրամ...»:

Սարգիս Փիլիսոփայի նորահայտ տոմարական աշխատակների չափածո մի հիշատակարանից կարելի է ենթադրել, որ նա թափառական կյանք է ունեցել:

«Զի ես Սարգիս Թափառական,
Փծուն գրիչս և անարժան,
Փիլիսոփայ սուտ է անկածան,
Որ և կոչի որդի Տօնական»²:

Հավանական է նա եղել է հայ շարքաշայն գրիչներից մեկը, որը մի կտոր հաց ճարելու համար պանդխտության գալաղան է վերցրել իր ձեռքը և տեղից տեղ փախուցել: Այստեղ Սարգիս Փիլիսոփայի հոր անունը՝ Տօնական, մականուն է և ունի «Ֆանդիապլոր», «Եւրախական» իմաստը և չի հանդիսանում նախորդ հատվածում բերած Ամենավազ անվանը:

Մեր կարծիքով, Սարգիս Փիլիսոփայի պիտի լինի նաև Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 6815 ձեռագրի տոմարական աշխատության հեղինակը, որի մասին ձեռագրի գրիչ Հովհաննեսը հետևյալ տեղեկությունն է տալիս. «Գրեցաւ տումարս, որ է րեթացք արեգականն, զոր արարեալ է ումմն իմաստակի՝ Սարգիս Փիլիսոփայ(ի), յազում աշխատանալ, յազադս դիւրահաս և հեշտագիւտ լինել ուս(ու)մ(ն)ադիւրաց և տումարագիտացոյ Հովհաննես գրչի հիշա-

2. Տե՛ս Դ. Ալիշան, Հայագատում, էջ 48:

3. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 6731, ք. 255թ:

1. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 5707, ք. 234ա:

տակարանից երևում է, որ Սարգիս Փիլիսոփայի տոմարական այդ աշխատությունն ինքն ստացել է ոմն Ներսես քահանայից, «գաղափարել» այն 1384 թվականին և իր կողմից մի շարք լրացումներ կատարելով⁴։

Սարգիս Փիլիսոփայի ժամանակը պիտի համարել 14-րդ դարի վրձսերը, քանի որ նրա պատճառով ճշգրտվում է 1332 թվականին, իսկ իր տոմարի հնագույն ընդօրինակությունները 1373—1786 թվականներին և, ուրեմն՝ նրա ստեղծագործական մոտավոր շրջանը պիտի եղած լինի 14-րդ դարի կեսերը։

Մեզ համար սակայն ժամանակագրական հենակ կարող է հանդիսանալ Սարգիս Փիլիսոփայի վերև քերված տոմարական աղյուսակների ղրկելու ժամանակը, որը, քարե-լախտարար, հիշված է ընդօրինակողի կողմից. «Ո՛վ սրբազան դասք լուսերամից, որք հանդիպիր սմա տեառությամբ և օրինակելով, յիշեսցիք ազաթիւք ի Տէր դարձանապատին զՍարգիս Փիլիսոփան, որ զտուժարս է պարզեալ աշխատանաք, զի նոր է և խանդոտ» Ի թվ. 229, Ժ փոքր Քահանային ՄԽԾ⁵։

Առաջին թվականը Հայոց թվականն է, որը մեր ներկա թվականով 773 + 551 = 1324, իսկ երկրորդը՝ Հովհաննես Խմաստասերի անշարժ թվականն է, որը նույնպես հավասար է 1324-ի (1084 + 240 = 1324)։

Հիշատակագրի վերև բերված հասկացում հետաքրքիր է Սարգիս Փիլիսոփայի տոմարի մասին արած «գի նոր է և խանդոտ» ակնարկը. արդյոք հիշատակագիրը չի՞ ուզում ասել, որ Սարգիս Փիլիսոփայի տոմարը, որպես նորություն, որոշ նախանձ, դժկամություն է առաջ բերել խավարամիտ, պահպանողական շրջանում։

Հետադիմ է, որ Սարգիս Փիլիսոփան սովորած լինի այդ նույն ժամանակ Հայոց Ձորում մեծ հռչակ ունեցող Գլաձորի դպրոցում, որը կոչվել է նաև համայնարան⁶։ Այդ պնդելու համար մենք ունենք հետևյալ կրույանները. Սարգիս Փիլիսոփայի պատճառով, ճանաչելով, զրամական խոշոր ազնություն է ցույց տվել Գլաձորի դպրոցում սովորող Ներսես վարդապետին, որից երևում է, որ Սարգիս Փիլիսոփայի ընտանիքը մոտ հարյուրյակների մեջ է գտնվել այդ դպրոցի հետո նրկորդ՝ որ Սարգիս Փիլիսոփայի տոմարական աղյուսակները, որոնք բնագործակել է Հովհաննես քահանան, ինչպես

պարզվել է մեր ուսումնասիրությունից, կազմվել են Հովհաննես Սարկավադի «Աշխրվացանկի» Սյունյաց դպրոցի ընդարձակված և լրացված տեքստի հիման վրա։

Նվ, վերջապես, տոմարական այնպիսի բարձր պատրաստություն, ինչպիսին ունի Սարգիս Փիլիսոփան, կարելի էր ստանալ այն ժամանակ միայն Սյունյաց դպրոցում, ուր ավելի էին հետաժողով փիլիսոփայական և տոմարական գիտություններին, քան Կիլիկիայի այն ժամանակ գործող դպրոցյան որևէ դպրոց։

§ 2. Հրատարակության հանձնվող տոմարական ներկա տեքստը մեզ հասել է Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի չորս ձեռագրերում, որոնցից մեկում՝ միայն վերնագիրը։

Այս չորս ընդօրինակություններից հնագույնը № 2001 (2026) ձեռագիրն է, որը տոմարի մեկնության ժողովածու է։ Այս ձեռագիրն ընդօրինակել են չորս տարբեր գրիչներ, որոնցից հիշատակություն են թողել միայն երկուսը՝ Թումա և Կարապետ քահանաները։ Ձեռագրի գրչության թվականը հիշել է վերջինս. «Յամի ՊԻԲ (1373 թ.) գրեցաւ մեկնիս տուժարի ձեռամբ մեղաւոր եւ անարժան պրի՞ Կարապետ քահանայի» (թ. 222բ)։ Թումա քահանայի հիշատակարանից երևում է, որ ձեռագրի գրչության վաղը Աղթամարն է հանդիսացել (թ. 93բ)։ Սարգիս Փիլիսոփայի տոմարական տեքստը բերվում է առանց հեղինակի անվան հիշատակության, «Աւտանաւու տաւմար աւաւուլ է» խորագրով, բայց ո՛վ է տարահալը, ոչինչ չի ասվում, Տեքստը բերվում է ձեռագրի թ. թ. 240ա—241բ-ում։

Սարգիս Փիլիսոփայի տոմարական աշխատության երկրորդ ընդօրինակությունը, ըստ հնության, Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 5707 (1067) ձեռագիրն է, որը չափածո և արձակ աշխատությունների ժողովածու է։ Գրիչն է հանդիսացել Հակոբ քահանան, Որոտնեցու աշակերտը։ Այդ մենք իմանում ենք հիշատակարանի հետևյալ տեղեկությունից. «Այլ մեք ընդ տուրք և տիեզերահամարս և երանաշնորհ բարունապետիս Հայաստանեայց և վերադիտողի տեառն Յովհաննու Որոտնեցու կայաք կարգալ և գրել ի համայնարան սորին»⁶։ Ձեռագրի գրչության թվականն է ցույց տված ՊԼԾ (1386 թ.)։ Տեքստն ընդօրինակված է 232ա—234ա թերթերում։

4. Նույն մատենադարանի ձեռագիր № 6815, Թ. 8ա։

5. Նույն մատենադարանի ձեռագիր № 6731, Թ. 358բ։

6. Նույն մատենադարանի ձեռագիր № 5707, Թ. 484բ։

հրորորդ ձեռագիրը, ըստ հետաքննության, Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 2152 ձեռագիրն է, որը պահել է միայն Սարգիս ֆիլիսոփայի տոմարական աշխատության վերնագիրը, Ձեռագիրն ընդօրինակել է Հայ մատենագրության մեջ հանրածանոթ Ռոմա Մեծոփեցին 1402—1406 թվականներին Քաղնշում: Տեքստն ընդօրինակված է թ. 1929-ում:

Եվ, վերջապես, չորրորդ ձեռագիրը Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 8908 տաղարանն է, որը նոր ընդօրինակություն է՝ 19-րդ դարի: Սարգիս ֆիլիսոփայի տեքստն ընդօրինակված է լրիվ, թ. թ. 50թ—52ա: Գրիչը և գրչության վայրը հայտնի չեն:

§ 3. Սարգիս ֆիլիսոփայի աշխատություններ նշված ձեռագրերում մեզ հասել է երկու խմբագրությամբ՝ ընդարձակ և համառոտ: № 2001 ձեռագիր ընդօրինակությունը համառոտ է, իսկ № 5707-ը՝ ընդարձակ: Ընդարձակ խմբագրության տեքստը բաղկացած է 61 քառյակից, իսկ համառոտը՝ բնական է 21, Համառոտ խմբագրության մեջ Սարգիս ֆիլիսոփայի տոմարական աշխատության միջին մասն ամբողջապես անգամահատվել և դուրս է բերվել: Բացի այդ, համառոտ խմբագրության վերնագրում ոչինչ չի ասված՝ թե ո՞վ է նրա հեղինակը:

Երկու տեքստի համեմատական ուսումնասիրությունը մեզ բերեց այն ձգրակացություն, որ հարազատը, նախնականը, № 5707 ձեռագրի պարունակած ընդօրինակությունն է: Սակայն № 5707 ձեռագրի տեքստում ևս նկատելի են չափի և տոմարական հաշիվների աղավաղումներ, որ երբեք հեղինակին չեն կարող լինել, այլ՝ ընդօրինակողների: Այս աղճատումները մենք աշխատեցինք ճշտել № 8908 ձեռագրի ընդօրինակության հիման վրա:

§ 4. Սարգիս ֆիլիսոփայի տոմարական ներկա աշխատությունն ունեցել է գործնական նշանակություն: Հավանական է այն գրվել է աշակերտության համար, հանձնարարվել է նրանց անգիր սովորել, որպեսզի նրանք սուսնց դժվարության ի վիճակի լինեն կատարելու տոմարական այս կամ այն հաշիվը: Սարգիս ֆիլիսոփայի ներկա 61 քառյակը անգիր սովորող աշակերտը արդեն ծանոթ էր լինում Հայկական տոմարի հիմնական սկզբունքներին և դժվար չէր նրա համար տոմարական ցանկացած հաշիվը

անել: Որ իրոք Սարգիս ֆիլիսոփան իր այս տոմարը գրել է աշակերտության համար, այդ պարզ երևում է նրա տեքստի տառերի քառյակից:

Ո՛վ դու մանուկ սուրբ մրտաւոր,
Ընկալ տամար ոտանաւոր,
Ստոյգ, համառաւութեան չափաւոր,
Ըզեղանակ տարին բոլոր:

Սարգիս ֆիլիսոփան, ինչպես տեսնու՜մ ենք, իր տոմարը մատուցում, առաջարկում է տաքուր և մտացի մանուկներին, իսկ տվյալ դեպքում նրա մոտ մանուկն ունի աշակերտ իմաստը:

§ 5. Սարգիս ֆիլիսոփայի ներկա չափածո տոմարն արժեքավոր է հայագիտության համար մի քանի տեսակետից:

ա) Ներկա հրատարակությամբ հայ գիտական մատենագիրների շարքն է մտնում մինչ այժմ անհայտության քողով ծածկված մի նոր մատենագիր՝ Սարգիս ֆիլիսոփան իր տոմարական երկու աշխատություններով՝ մեկը չափածո, որ այժմ հրատարակում ենք, և մյուսը տոմարական աղյուսակներ, որոնք կհրատարակվեն հետագայում: Մենք հույս ունենք, որ վերջի վերջո մզտնվեն մեր այդ հեղինակի ֆիլիսոփայական աշխատություններն ևս:

բ) Սարգիս ֆիլիսոփայի այս աշխատությամբ հայ տոմարի պատմությունը հարստանում է մի նոր և արժեքավոր երկով, որն իր ժամանակի համար գործնական նշանակություն է ունեցել տոմարական այս կամ այն հաշիվն անսխալ կատարելու համար: Միշտ է, նրա տոմարի մեջ կան և անորոշություններ: Այսպես, մեզ անհասկանալի է, թե ինչո՞ւ է նա հայտնությունը արեգ ամսի 4-ն ընդունում, երբ նրանից առաջ, 12-րդ դարում, Հովհաննես Սարկավազի անշարժ տոմարով համեմակն կադանդը քաղոց ամսի 24-ին էր սամահանված, իսկ հայտնությունը՝ քաղոց 29-ին: Կամ թե չէ՝ հայտնությունն ընդունելով արեգի 4-ը, ի՞նչ 8 գումարենք՝ «Ո՛ր հանապազ կայցես հրատարակ, ինչպես հանձնարարվում է, կրինի 12, բայց ո՞ր ամսի 12-ը, այդ դժվար է ասել, եվ այսպես կան այլ անճշտություններ ևս:

գ) Եվ, վերջապես, տոմարական ներկա աշխատությունն արժեքավոր է նաև մեր դրականության պատմության համար: Ուշադրության արժանի է առանձնապես այն, որ ներկա տոմարի յուրաքանչյուր քառյակ ունի իր հանգավորումը և չի նմանվում նախորդին, միահանգ չէ, մի բան, որ սովորական է եղել այդ դարերում չափածո գրականության մեջ:

ՍԱՐԳՍԻ ՈՐԴԻՈՅ ԱՄԵՆԱԻԱԳԻ,
ԹՈՌԻՆ ԲԱՐԻԳԱՍԻ ԽԼԱԹԱՅԻՈՅ,
ԱՍԱՑԵԱԼ ԶՊԱՏՔԻՆ ՏԱԻՄԱՐԻ,
ԶՈՐ ԲԱԻԱՆԴԱԿ ՏԱՐԻՆ ՍՏՈՒԳԻ,
ՈՏՆԱԶԱՓ Ի ԳՈՅՆ ՏԱՂԻ,
Ի ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆ ԲԱՐԷՄԻՏ ՎԵՐԾԱՆՈՂԻ
ԵՒ ՈՐՔ ՏԵՆԶԱՆ ԱՅՍԸՄ ԲԱՆԻ,

Ո՛վ դու ժանուկ սուրբ մըտաւոր,
Ընկալ տաւմար ոտանաւոր,
10 Ստոյգ, համառաստ քան շափաւոր,
Ըզեզանակ տարին բոլոր:

Նախ պայտնութիւն հիմ ընկալցես՝
Թուով վաւորս որ շուր արհնես,
Եւ ընդ նոյն թիւ միաւորես,
15 Զհինգ ար տարւոյն որ յաւելես:

Գարնան.

Ութ հանապազ կալցես յըստակ,
Միաւորել ընդ նոյն համակ՝
Յուցցէ զգարնան նոր եղանակ,
Զտիւ եւ զգիշեր կալ հասարակ:

Աւետումն

20 Վեց եւ քրսան ի սմա յաւել,
Որ շնորհ տայ քեզ քանքս դիտել.
Կուսին հրեշտակն աստ աւետել՝
Աստուածածին ամենաւրհնեալ:

Անկառանգ

Երեք թիւ բեր անկաստեղին,
25 Յաւել ընդ հիմն յայտնութենին,
Եւ դու ծանաւթ լինիս նըմին,
Զերեւելոյ բազմաստեղին:

Եկատեղ

Տասն եւ երեք ածցես յետոյ,
Վասն նըմին երեւելոյ,
30 Աստեղց յերկնից քաղմանալոյ,
Որ չերեւի յառաջ յայտոյ:

9. Ա տոմար

11. Ա տարեկ, Գ տարոյն

13. Ա զատուրոն

15. Բ տարոյն

16. Ա յիմակ

17. Ա միաւորեալ

19. Գ զտիւ եւ զգիշեր

20. Ա հինգ եւ քսան

21. Ա քնորհ, քանս

22. Բ աստ յիւ, Ա աւետել

27. Ա չերեւելոյ

30. Գ աստեղծ, Ա աստեղցն

Ամառն.

Ինն ած, զամառն ցուցանել,
Յերեկն ի ցալոյն վճարել,
Զայն որ էառ ի դարնանէ.
35 Այժմ ահա ժամ է հաստուցի:

Ածած.

Վեց ած տանի Աստուածածնի,
Արդիւտ արա՝ զարբն վերջին,
Զորեքշաթրի ի յետ դարձցին.
Յինքն ընթանայ առ կիրակին:

Որ. Խաչ

10 Նոյն վեց ըզսուրբ խաչն տանէ,
Աստուածածնի կերպին առնէ,
Նախ զպատկեր աւրն ցուցանել,
Ըզկնի յառաջ եւ յետ վարէ:

Աշնան.

Տասն ած՝ առնէ աշնանամուտ,
45 Կալ հասարակ կըրկին պըտոյտ,
Անտի աճէ գիշերն անսուտ,
Փոխտոութեամբ մասն ի յաւուր:

Յիսն.

Տասն ու մին բեր ի վերայ,
Հաշուով ընդ հիմն միանայ,
50 Զիսնակամուտ պահք առնէ առ՝
Որ Քրիստափոր յորջորջի նա:

Սր. Յկր.

Երկու թիւ, ո՛վ գիտնական,
Բերել այս որ պիտոյանան,
Զի կատարի անսխալական,
55 Սուրբ Յակոբի բարեկենդան:

Ամեռն.

Տասն ու մին, ո՛վ սիրելի,
Զմեռնամուտի տեւ պիտի,
Զի ինքն ժամ տիւն այժմ ունի,
Գիշերն երեք հինգ համարի:

33. Բ յայգն

37. Գ տաւրիկ

38. Գ շորեքշաթր/Ո՛վ

41. Ա պատուկն առնել

47. Գ յաւուր

49. Գ հիմն

50. Գ քերէ առ

58. Բ գիշն

Իսաթի

60 Ութ ու տասըն ած ծընընդէն,
Որ յայլազդեաց հայ իւր կոչեն,
Զի մեռաւսանքն այսպէս առնեն,
Բաց ի հայոց որ ստոյգ գիտեն:

Յայտն. Ռարեկ.

Քսան ու երկու պարտ է ածել,
65 Թէ յայտնութիւն կամիս առնել,
Բարեկենդան է աստ գրել,
Եւ ոչ վերջին արըն տօնել:

Կաղանդ

Հինգ եւ քսան է կաղանդին,
Որ ցուցանէ ըզնոր տարին,
70 Ըստ Հոռոմոց եւ ոչ Հային,
Մուտ յունուար ամսոյ փոքին:

Տներդ.

Զորս ած առնէ տեառնընդառաջ,
Է սա բստոյգ եւ անամաշ,
Եւ քառասուն թուով յառաջ,
75 Զոր ճշմարիտ դտցես եւ քաշ:

Առաջաւ.

Առաջաւոր բարեկենդան,
Թէ արասցես անսխալական,
Կայցես քսան եւ վեց տասան,
Զնոր վերագիրն երթ անխափան:

Միջոց

80 Հասարակաց ութաւդէին,
Գիտ ըսպառնալ պատկեր թուին,
Բազում ամսեան ութաւդէին,
Տուր ըզնրազն յառաջիկին:

Ռարեկեւդ.

Գիտ ըսպառնալ պատկեր թուին,
85 Տուր կիրակոյ նման զատկին,
Յայնժամ յաւել քըսան եւ մին՝
Բարեկենդան է բուն զատկին:

Լրումն

Յայնժամ քսան ած երր ստուղն,
Զտէրոմական զատկի տայ քեղ,
90 Եւ հանապազ զայս արասցես,
Թէ ուզ(ղ)ապէս ընթերցող ես:

Գառիկ

Պատճէն զատկի այսպէս արա.
Կալ հանապազ սկիզբ սըմա,
Քառասուն եւ վեց միշտ յարակայ,
95 Զնոր վերագիրն ի բաց դնա:

Զմընացեալսն ասէ թուեա,
Գարնանմըտին հասարակեա,
Թէ աւելի լինի քան զնա,
Ի նոյն ամիս կայցես ըզսա:

100 Ապա եթէ սակաւ մընայ,
Ի մեւան անցոտ առաջիկայ,
Զարն վերջին արգիւտ արա,
Զատկի լըրումն ուզգես ըզսա:

Ասէ թէ դայ ի կիրակի,
105 Մեւ կիրակի տացէ զատկի.
Զորեքշարթի եւ հինգշարթի,
Նույն ընթանայ առ կիրակի:

Համբարձ.

Կալ ը(զ)զատկին ասէ յետոյ,
Ինն ընդ նմա թիւ միացոյ,
110 Զտէրոմական համբարձալոյ
Զար ցուցանէ զՓրկչին մերոյ:

Հոգեգալ.

Տասն եւ ինըն ասէ բերել,
Ընդ թիւ զատկին յարարարդել,
Եւ զպենտեկոստն քեզ տանել,
115 Զհոգւոյ զալուստ(ը)ն կատարել:

Վերադիր

Վարդավառ թէ առնիցես,
Ութ ընդ զատկին թիւ յաւելես,
Ամսաւք երեք յառաջ թրեւս,
Ի կիրակի դտեալ տանես:

88. Գ քսան չիբ

93. Ա սկիզբն

94. Ա քառասուն

95. Գ (կիսակայցն) ի բաց երթայ

96. Ա ըզմնացեալսն, թրեւս

103. Գ զատկալումն

105. Ա կիրակին

106. Ա յորեքշարթն

113. Գ ընդ չիբ

61. Ա հայ

67. Գ վերջին վոխ ձննդեան

71. Ա յունուարի

72. Ա և Գ տեառնընդառաջ

74. Ա թըւով

84. Ա ըզպառնել, թըւով

Թուական

- 120 Թուական այսպէս արա,
Թիւ մի յարաց կալ դու դրմա,
Մինչ յայտնութիւնն համարեա,
Զորեքպատկեա, Թուականն է նա:

- Իսկ թէ նահանջին հանդիպի,
125 Երեք ի բաց առնուլ պիտի,
Եւ թէ երկու ի նահանջի,
Երկու դեա անսխալելի:

- Թէ նահանջի երեքաւ տուար,
Ի թուէն ի բաց առ մի համար,
130 Եւ շորորորդին նահանջ արար,
Զթիւն լիով կալ ի կատար:

Վերադիր

- Թէ վերադիր ես առնելոց,
Կալ ըզթուական(ը)ն մեծ Հայոց,
Բազմապատկել պարտիս այնոց
135 Ըզմիսն տաս ու մէկ թուոց:

Նամանը

- Ջնահանջն արա ի թուականէ,
Եւ ի բաց հան զայն ի դմանէ,
Եւ զինն ու տասներեակն որ է,
Ի դա յաւել որչափ եւ է:
140 Ութ թիւ ի բաց առ աննուադ,
Ի մնացորդէտ դու հանապազ,
Զայլն երթ երսուն երսուն ի վազ,
Գտնի՝ վերադիր է աննիազ:

- Այլ վերադիր առն առնել,
145 Զանցեալ ամին պարտ է ունել,
Մետասան թիւ անդ աւելել,
Նոր վերադիր տարւոյն կոշել:

- Իննևտասներեկի ամ,
Ինն եւ տասն ամն է մի ամ,
150 Եւ վերադիրն յաւել այն ամ,
Երկուտասան ստուգիւ յայնժամ:

- Նահանջ ի շորս ամն մի է,
Վերադիրն տասն ածել պարտ է,
Թէ ինն ու տասներեկն՝ նահանջ է,
155 Երկուտասան ածել պարտ է:
Թէ իննուաւներեկ առնես,
Դու կալ ըզմեծ թուականն եւ տես
Թէ տասն եւ ինն որչափ դացես,
Այնքան է սա՝ հաշուեա եւ տես:

- 160 Նահանջ ըստույզ թէ որոնես,
Ըզթիւ Հայոց դու պինդ կայցես,
Ըզշորսըն մի համար բրոնես,
Զորիցն մեկ է թէ դացես:

- Իննեքեկ ի թուականէ,
165 Այսպէս առնել զքեզ խըրատի,
Կալ ըզթուականն որչափ եւ է,
Շորս հանապազ աստի մերժէ:

- Զմնացեալն եւթն եւթն դեա,
Զորչափ խոնարհ անտի դիտ(ե)ա,
170 Եւ այն է նոյն տարեւն որ դալ,
Եւթնեքեկ բարի անսա:

- Եւթնեքեկ տարւոյն այս է,
Զելք աւելեացն առն ստուգէ,
Պատկեր աւուրն թէ զինչ է,
175 Յառաջիկայ տարւոյն այն է:

- Ամիսք Հայոց այսպէս թուին.
Սկիզբն արարտյ՝ նաւասարդին,
Հոռի, սահմի եւ յեա սոցին՝
Տրէ, քաղոց, արաց ասին:

- 180 Զմեհեկ ասէ ընդ արեգին,
Զահկի կոչէ եւ զմարերին,
Մարգաց, հրտոից ամսոց վերջին,
Հինգ ամենիցն է յաւելին:

- Նաւասարդի կրկնակ շկայ,
185 Հոռի երկու, շորս սահմի դայ,
Վեց ի տրէ, քաղոց մին դայ,
Արաց երեք, հինգ մեհեկայ:

153. Ա տասն եւ մէկ
164. Գ եւթնեքեակի
166. Գ որ է
169. Ա խոնարհ
172. Ա եւթնեքեկ
176. Դ առաջիկայ
178. Ա թրվե
177. Բ արա փոխ տարւոյ
178. Բողոր՝ սահմի
182. Բ ամսավերջին
183. Ա հինգն, Բ աւելին
188. Ա շորս
187. Ա ե Գ մահեկայ


120. Ա թուական
132. Գ առնելոյ
135. Գ տասնակ, թուոյ
140. Ա աննուազ
142. Ա երսուն երսուն
143. Գ վերադիրն
144. Գ վերադիրն
146. Գ տասն եւ մէկ
147. Ա տարւոյն
149. Գ տասն եւ ինն
150. Գ յայն

- Արեգ հանգոյն նաւասարդայ,
Ահկի երկու, շորս մարերայ,
190 Մարգաց է վեց, մէկ հրտայ,
Աւելեաց երեք, եւ զիս յիշեալ
- Նաւասարդի կիսակ չկայ,
Հոռի է կէս, մին սահմի գայ,
Տրէ մէկ ու կէս, եւ լետ սորա,
195 Քաղոց երկու բստուար ասալ
- Երկու ու կէս յարաց դառնայ,
Մեհեկ երեք, կէս յարեգայ,
Չորս ի յահկի է ինձ աւտա,
Մարերի շորս եւ կէս թուեալ
- 200 Հինգ ի մարգաց լըման գայ նա,
Ու հինգ ու կէս հրտայից հաշուեալ,
Վեց յաւելեաց եւ զիս յիշեալ,
Եւ թողութիւն մեղաց շնորհեալ
- Տանուտէրանց անուանքն այս է,
205 Որ արամեան լեզուաւ ձայնէ,
Նախ՝ խոյն ու ցուլն, եկատրն է,
Բայց խեցգետին նահանջ առնէ
- Առեւծ եւ կոյս, կշիռ ասէ,
Կարիճ կրկին նահանջ բերէ,
210 Աղեղնատր, աթեղջեւր է,
Ջրհոսն ի ձուկըն նահանջ է
- Տանուտէր այսպէս արա,
Կալ ըզՀայոց թիւն յարակայ,
Երկոտասան գամէն գնա
215 Եւ ուր սպառի անդ զադսրեալ
- Ամսամուտ ով առնիցէ,
Ջկրկնակ նորին ամսոյ կալցէ,
Եւ դեթնեքեկ տարույն ստուգէ,
Մի թուով ընդ նոյն միատրէ
- 220 Ութի գեւթն թիւն անցանէ,
Եւթն յարաժամ անտի գնացէ,
Ջմնացեալ համարն ուղիղ գտցէ,
Ջի նոյն ամիսն այն աւր մտցէ
190. Ա հրտայայ
191. Ա տեւեացն
200. Ռ լըման գնալ
202. Ա յաւելեացն
205. Ռ ձայն
206. Ա ու եկատրն է, եւ փոխ. ու
207. Ա խեցգետին
210. Ա եւ այսպէս եւրեմ է

- 225 Ջամսեան կիսակն վերադրով
Կալ եւ զաւտրս ամսոյն թուով,
Եւ թէ գերեսունն ելցէ թուով,
Գնա գերեսուն ստուգելով
- Մնացեալ աւտրց առնէ լուսնի,
Որքան գերեսուն ի վայր գտցի.
230 Եւ ընթերցողն յիշել պարտի
Գրծաւը Սարգիս թուրն Տռանկի
- Մընունդ լուսնին այսպէս արա,
Կալ գերեսուն թիւն յարակայ,
Եւ զվերադիր տարուն որ կայ,
235 Ջամսեան կիսակն որ լինենայ
- Միահամուտ ի լետ գնա,
Այն է ծրնունդն որ դիպենայ,
Ի յերեսնէն որչափ մընայ,
Այս լետին գործ է հաւր սորա
- 240 Արագիւտըն թէ մոլորիս,
Ջաւուրս ամսոյն առեւծն ունիս,
Եւ գեւթնեքեկ տարույն բերցես,
Միատրեալ ստուգիւ վիմիս
- Բէ գեւթն ելցէ զայն դու ծանիս,
245 Գնացես եւթն, եւթն թիւս,
Մնացեալն անուն է այսմարիս,
Ջոր ստուգեցի հողըս Սարգիս
- Ջայս բան խօսել խրախճանտկան
Ոչ միտարն վերջն յանկական,
250 Այլ խրտարար փոփոխական,
Ջի մի՛ ծուլից լուր ծանրական

(Հայկական ՍՍՏՊ Պետական մատենադարան, ձեռագիր № 6707, ք. ք. 232բ—234ա):

234. Ա կիսակոն
225. Ա թլուով
226. Ա թլուով
228. Ա մնացեալն, լուսնին
231. Ա զգծաւը
235. Ա կիսակոն
240. Ա աւրագիւտ
242. Գ բերես
243. Գ ստույգ լինիս
245. Գ գեւթն, դեթն
246. Գ Տարիս փոխ. այսմարիս
250. Գ խրտարար



ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՏԱՆՑԱՆ ՄԱՆՈՒԿ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԵՈՆ. ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ Ա., Վառիե—ռուս — հայերեն բժշկական բառարան: Կազմեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ֆակուլտետի անդամ, գիտությունների վաստակավոր գործիչ պրոֆ. Մ. Արեգյան, ՍՍՌԲԺՂԿԱՆ գիտությունների ակադեմիայի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ֆակուլտետի անդամ, գիտությունների վաստակավոր գործիչ պրոֆ. Լ. Հովհաննիսյան, բժիշկ Ա. Տեր-Պողոսյան, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1951 թ., 471 էջ, տիրած՝ 3.000:

ԱՃԱՌՑԱՆ ՀՐԱՆՑԱՆ, Վիակատար Բերականոցություն հայոց լեզվի, համեմատության մեջ 562 լեզուների, հատոր 1-ին (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտ), Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1952 թ., 494 էջ, տիրած՝ 3.000:

ԲԱՐԱՑԱՆ ԱՐՇԱԼՈՒՅԱՆ, Վայրենական մեծ պատերազմի շրջանի սովետական զրահավորության մի քանի բնորոշ գծեր: Հայպետհրատ, Երևան, 1952 թ. 170 էջ, տիրած՝ 3.000:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՔՆԱՐԻԿ, Վեկեսանդր Սպենդիարով: Կյանքը և ստեղծագործությունը (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի պատմության և տեսության սեկտոր), Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1952 թ., 144 էջ, տիրած՝ 2.000:

ԳՐԻԳՐԵՆ ՀՈՎՆԱՆ, Վ. Վ. Գոգոլը և հայ զրահավորությունը: (Մահվան հարյուրամյակի առթիվ) (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտ), Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1952 թ., 190 էջ, 4 ներդիր թերթ պորտբեկերով, տիրած՝ 4.000:

ԲՈՒՄԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, Վանուշ (պոեմ), Ներարարողից Գ. Խանջյան, Հայպետհրատ, Մանկա-պատանեկական գրականության բաժին, Երևան, 1952 թ., 41 էջ գունավոր իլյուստրացիաներով, տիրած՝ 6.000:

ՂԱՖԱԴՐՅԱՆ ԿԱՐՈ, Վիլիս Բաղաբեկ Երա պեղումները, 1. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հնագիտական արշավախմբի 1937—1950 թ. թ. աշխատանքների արդյունքները (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հայաստանի պետական պատմական թանգարան), Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1952 թ., 299 էջ, գունավոր իլյուստրացիաներով, տիրած՝ 2.000:

ՄԱՆԱՆԴՅԱՆ ՀԱԿՈՐ, Վերականգնողություն հայ ժողովրդի պատմության, հատոր 3-րդ, XI դարից մինչև XV դարի սկիզբը (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտ), Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1952 թ., 455 էջ, տիրած՝ 6.000:

ՄԻՆԱՅԼՈՎ Ն., Վայրենիքի փառերգի առաջ: Թարգմանեց Գ. Ղուկասյան, Հայպետհրատ, Երևան, 1952 թ., 460 էջ, իլյուստրացիաներով, տիրած՝ 5.000:

ՄՈՒՐԱՅԱՆ, Վերկերի ժողովածու, հատոր 3-րդ, Վերկերի Մարգարիտունի, Պատմական լիկա, Հայպետհրատ, Երևան, 1952 թ., 481 էջ, տիրած՝ 10.000:

ՍԱՐՄԵՆ, Վաղղվածու: (Բանաստեղծություններ զարգացականների համար), Հայպետհրատ, Մանկա-պատանեկական գրականության բաժին, Երևան, 1952 թ., 63 էջ, տիրած՝ 7.000:

ՖԵԴԻՆ ԿՈՆՍՏԱՆԴԻՆ, Վարսապուկ ամառը: (Թարգմանեց Գ. Դոնուսի), Հայպետհրատ, Երևան, 1952 թ., 594 էջ, տիրած՝ 5.000:

Երևանի Խ. Արուստյանի անվան Հայկական պետական Մանկավարժական ինստիտուտի Վերականգնողական աշխատությունների ժողովածու, № 3. (Երևանի Խ. Արուստյանի անվան պետական Մանկավարժական ինստիտուտ), Հայպետհրատ, Երևան, 1952 թ., 323 էջ, տիրած՝ 1.000:

Վերականգնող և նոր և նորագույն պատմություն: Համառոտ ուղղակի (Թարգմանեցին Վ. Սուքիասյան և Ս. Մանասյան), Հայպետհրատ, Երևան, 1952 թ., 339 էջ, 3 թերթ ներդիր բարտեղ, տիրած՝ 3.000:

